




Обзор прессы

37-й конгресс FIDH, Ереван, апрель 2010

Revue de presse

37ème congrès de la FIDH, Erevan, avril 2010


Press review

37th FIDH Congress, Yerevan, April 2010

Revista de prensa

37º Congreso de la FIDH, Yerevan, Abril 2010

Presse arménienne – Armenian Press – Prensa de Armenia



Կմեկնեն վաղը
10 April 2010
Հայկական ժամանակ

FIDH 37-րդ համագումարին մասնակցելու նպատակով ապրիլի 6-ից Հայաստանում գտնվող մոտ 150 երկրների պատվիրակները վաղը հետ կվերադառնան իրենց երկրները: Ինչպես երեկ մեզ տեղեկացրեց «Քաղաքացիական հասարակության ինստիտուտի» խորհրդի նախագահ Արտակ Կիրակոսյանը, Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի 37-րդ համագումարը այսօր ավարտում է իր աշխատանքները, սակայն չի բացառվում, որ մինչև մեկնելը իրավապաշտպանները եւս մի քանի հանդիպումներ ունենան: Երեկ համաժողովին մասնակցող FIDH նախագահ Սուեր Բելասսենը եւ թուրք պատվիրակները հրապարակեցին 37-րդ համագումարի ընդունած բանաձեւը, որով Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիան տուրք էր մատուցում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին: Բանաձեւով առաջարկվում էր հրաժարվել բոլոր այն օրենքներից եւ գործողություններից, որոնք սահմանափակում են խոսքի ազատությունը, այդ թվում՝ «հայ-թուրքական երկխոսությունը խոչընդոտող Թուրքիայի քրեական օրենսգրքի 301 հոդվածից»: Բանաձեւում Հայաստանին եւ Թուրքիային խորհուրդ էր տրվում նաեւ «իրականացնել սահմանը բացելու վերաբերյալ երկկողմանի արձանագրությունը»:

<http://www.armtimes.com/5873>

Это нам дали 15 суток!!!
10 April 2010
Հայկական ժամանակ

Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի երեւանյան համաժողովից հետո, երբ ՄԻՄԾ-ը անսպասելի սկզբունքայնություն ցուցաբերեց քաղբանտարկյալների մասով, հայաստանցիների շրջանում ամենահաճախ հնչող հարցը հետեւյալն է. ի՞նչ ազդեցություն կունենա այդ արձանագրումը քաղբանտարկյալների ազատ արձակման գործընթացի վրա: Այս շեշտադրումը իրականում այնքան էլ տեղին չէ, որովհետեւ անձամբ ինձ ու, համոզված եմ, նաեւ մյուս քաղբանտարկյալների համար կարեւորագույն հարցը լուծված, վերջացած է: ՄԻՄԾ երեւանյան համաժողովը, որտեղ ներկայացված էին աշխարհի 150 երկրներ պատվիրակող իրավապաշտպաններ, միջազգային հանրության, ողջ աշխարհի անունից մեզ պաշտոնապես ճանաչեց որպես քաղբանտարկյալ, այսինքն՝ երկու տարի ռեզինի նման ձգվող արհեստական ու անիմաստ բանավեճը՝ կա՞ն Հայաստանում քաղբանտարկյալներ, թե՛ ոչ, այլեւս ավարտվեց, ավարտվեց անասելի բարձր նոտայով, որն արձանագրում է, որ քաղբանտարկյալների առկայությունը Հայաստանում անվիճելի է: Սրանից հետո արդեն, թող ներվի հանդգնությունս, բացարձակապես էական չէ՝ ազատ կարձակե՞ն քաղբանտարկյալներին, թե՛ ոչ: Դրսում եւ հատկապես իշխանությունների շրջանում սխալ պատկերացում կա. իշխանական շատ դեմքեր համոզված են, թե մենք յալվար ենք օր առաջ բանտից դուրս գալու հարցում: Նրանք սխալվում են: Մեր օր առաջ դուրս գալու հարցը ցավագին խնդիր է ազատության մեջ գտնվող մեր ընկերների, բայց ոչ երբեք մեզ համար: ՄԻՄԾ երեւանյան համաժողովից հետո, սակայն, դա արդեն ոչ այնքան ընդդիմության, որքան իշխանության պրոբլեմն է,

որովհետեւ քաղաքանտարկյալներին բանտում պահելու ամեն օրը թուլացնում է բռնապետությունը: Մինչեւ հիմա էլ էր թուլացնում, բայց հայ-թուրքական եւ այլ թեմաներով ճամարտակություններ անելը նրան մի տեսակ մանեւրելու, հարցը հակադարձելու, անդրադարձնելու, մեղմացնելու հնարավորություն էր տալիս: Հիմա արդեն կարող ենք վստահ լինել՝ նրանք զրկված են այդ հնարավորությունից, եւ կարելի է համոզված պնդել, որ աշխարհի ամենաճանաչված իրավապաշտպան կազմակերպությունների դաշնության կողմից արված արձանագրումը ի գիտություն է ընդունվելու ժողովրդավարական բոլոր երկրների իշխանությունների կողմից, իսկ վերջիններս հարցը ներառելու են Հայաստանի հետ բոլոր մակարդակի շփումներում, եւ որքան շատ «կոուտիտ» լինեն իշխանությունները, այնքան ավելի ու ավելի են խորացնելու Սերժ Սարգսյանի, որպես բռնակալ-իշխանագողի, միջազգային համարումը, այնքան ավելի ծիծաղելի վիճակի մեջ են դնելու իրենք իրենց: Այնպես որ՝ մեր համախոհներին հորդորում եմ առանձնապես չկենտրոնանալ այն հարցի վրա՝ կազատե՞նք քաղաքանտարկյալներին, թե՛ ոչ: Այդ հարցի վերաբերյալ թող իշխանությունն ինքը տանջվի եւ տապակվի: Քաղաքանտարկյալների հարցը հիմա արդեն նրանց պրոբլեմն է եւ ոչ թե մեր: Ճիշտ այնպես, ինչպես «Շուրիկի արկածները» հայտնի ֆիլմում. «Ты думаешь это мне дали 15 суток? Это нам дали 15 суток!!!»:

Հ.Գ. Նախօրեին ՄԻՄՖ նախագահ Սուեր Բելասսենի հետ հարցազրույցի ժամանակ Դոդի Պետոն նրան տեղյակ պահեց, թե Հայաստանում «ընդդիմությունը» եվրոպացիներին անվանում է «եվրոյոնջա»: Դոդի Պետոն մոռացավ եթերից բողոքել, որ այդ նույն «ընդդիմությունը» իրեն, այսինքն՝ Դոդի Պետոյին Դոդի Պետո է անվանում: Նաեւ համարում է Հայաստանի թիվ մեկ նատաշկա, որը, սակայն, չափից շատ լափելու պատճառով կորցրել է իր կանացի գրավչությունը եւ վաղուց հատել է այն սահմանը, որից հետո անվանվում են պառվաբոգ: Նույնը կարելի է ասել նաեւ Դոլար Արմենի մասին, որ նախօրեին ամրացրեց առաջատարի իր դիրքերը՝ չոլի պուտանկեքի հիթ-շքերթում: Նիկոլ Փաշինյան

<http://www.armtimes.com/5853>

ՄԻՄՖ-ի համագումարի շրջանակներում հայ եւ թուրք իրավապաշտպաններն ընդունել են համատեղ հայտարարություն

ԵՐԵՎԱՆ, 9 ԱՊՐԻԼԻ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (ՄԻՄՖ) 37-րդ համագումարի շրջանակներում Հայաստանի եւ Թուրքիայի իրավապաշտպաններն ընդունել են համատեղ հայտարարություն: Ինչպես ապրիլի 9-ի ասուլիսում հայտնեց ՄԻՄՖ-ի նախագահ Սուեր Բելասսենը, հայ եւ թուրք հասարակություններն այնքան հասուն են, որ չնայած պատմական վերքերին՝ պատրաստ են երկխոսել եւ շարժվել առաջ: Նրա խոսքերով, ֆեդերացիան ողջունում է հայ եւ թուրք իրավապաշտպանների համատեղ հայտարարությունը, որով հարգանք է արտահայտվում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի նկատմամբ, եւ հաստատակամություն՝ երկու երկրների միջեւ ուրվագծվող հեռանկարների հանդեպ:

Մարդու իրավունքների Թուրքիայի հիմնադրամի ներկայացուցիչ Յավուզ Օնենը նշեց, որ ինքն ու իր գործընկերները շատ էին ցանկանում ժամանել Երեւան, որովհետեւ հայ-թուրքական հարաբերությունները ներկա փուլում դժվար կացության մեջ են: «Մենք ուզում ենք բացել այն դռները, որոնք պաշտոնյաները կողպել են», - ասաց Յ.Օնենը: Նրա խոսքերով, հատկապես այսօր, երբ Թուրքիայում գնալով ուժգնանում են

ազգայնամոլական տրամադրությունները, անչափ կարեւորվում է քաղաքացիական խոսքի արժեքը: Թուրք իրավապաշտպանը հավելեց, որ հայերի հետ պետք է եղբայրության կամուրջ կառուցել, եւ նշեց, որ ինքը պատմության հետ առերեսվելու կողմնակից է: Յ.Օնենը նաեւ հայտնեց, որ ընկերություն է արել «Ակօս» թերթի խմբագիր Հրանտ Դինքի հետ: «Նրա հետ սպանվեցին նաեւ Թուրքիայի իրավապաշտպանները, մարդու իրավունքները», - ասաց նա:

Նշված հայտարարությամբ Հայաստանի եւ Թուրքիայի քաղաքական ուժերին կոչ է արվում ձեռնարկել երկու պետությունների միջեւ հարաբերությունները կարգավորելուն ուղղված բոլոր անհրաժեշտ քայլերը: «Տարածաշրջանում մարդու իրավունքների հանդեպ հարգանքն ապահովելու նպատակով առաջարկում ենք հրաժարվել այն բոլոր օրենքներից եւ գործողություններից, որոնք սահմանափակում են խոսքի ազատությունը, մասնավորապես հայ-թուրքական երկխոսությանը խոչընդոտող Թուրքիայի քրեական օրենսգրքի 301 հոդվածից», - ասված է հայտարարության մեջ:

[http://www.nt.am/newsday.php?](http://www.nt.am/newsday.php?p=0&c=0&t=0&r=0&year=2010&month=04&day=09&shownews=1024346&LangID=4)

[p=0&c=0&t=0&r=0&year=2010&month=04&day=09&shownews=1024346&LangID=4](http://www.nt.am/newsday.php?p=0&c=0&t=0&r=0&year=2010&month=04&day=09&shownews=1024346&LangID=4)

Հաղթանակ եւ ձախողում

9 April 2010

Հայկական ժամանակ



Երեկ ավարտվեց Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի կողմից Երեւանում կազմակերպված «Արդարադատություն. Անկախ դատարանի առջեւ արդյունավետ պաշտպանության իրավունք. Նոր մարտահրավերներ» թեմայով համաժողովը:

Այս համաժողովի շուրջ իրադարձությունները Հայաստանում սկսել էին զարգանալ դրա մեկնարկից դեռ շաբաթներ առաջ: Իսկ ինչ վերաբերում է ընթացքին, ապա այն այնքան բուռն եղավ, որ կարիք չկա դրա մասին եւս մեկ անգամ հիշեցնել:

Համաժողովի աշխատանքներին ներսից հետեւող եզակի հայկական իրավապաշտպան կազմակերպություններից՝ Գյումրիի «Ասպարեզ» ակումբի նախագահ Լեւոն Բարսեղյանը մեզ հետ զրույցում միջոցառումը գնահատեց որպես շատ արժեքավոր՝ մարդու իրավունքների պաշտպանության գործում փորձի փոխանակման տեսանկյունից: Իսկ ՀՀ իշխանություններին ներկայացնող պաշտոնյաների ելույթներն, ըստ Բարսեղյանի, ընդհանրապես եղել են անհասկանալի եւ միջոցառման կոնտեքստից դուրս: «Ելույթ ունեցած ՀՀ պաշտոնյաները եւս մեկ անգամ ցույց տվեցին, որ իրենք կապ չունեն մարդու իրավունքների եւ արդարադատության խնդիրների հետ», - ասում է Լեւոն Բարսեղյանը:

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցը, ով ի թիվս մի շարք հայկական իրավապաշտպանների, ի սկզբանե հրաժարվել էր մասնակցել համաժողովին, այդպիսով բողոքելով ՀՀ պաշտոնյաների մասնակցության դեմ, մեզ հետ զրույցում արձանագրեց, որ վերջին երեք օրերին Երևանում տեղի ունեցած զարգացումների ընթացքը եղավ այն, որ ՀՀ իշխանությունների՝ ՄԻՄՖ համաժողովի հետ կապված ծրագրերը ձախողվեցին եւ նրանց չհաջողվեց այդ միջոցառումը իրենց քարոզչության նպատակով օգտագործել: ՄԻՄՖ-ի կողմից ՀՀ իշխանությունների առջեւ քաղաքանտարկյալներին ազատ արձակելու եւ ՀՀ իշխանությունների բռնությունների արդյունքում Մարտի 1-ի տասը զոհերի սպանության հանգամանքները բացահայտելու վերաբերյալ հարցերը բարձրացնելը, Սաքունցի գնահատմամբ, ձեռքբերում է: «ՄԻՄՖ-ը այդ հարցերը բարձրացրել է նաեւ Սերժ Սարգսյանի եւ ՀՀ համապատասխան մարմինների առջեւ», - ասաց Սաքունցը: Ըստ իրավապաշտպանի, համաժողովը օգտակար էր նաեւ այն պատճառով, որ այն ուսանելի էր հայ իրավապաշտպանների համար: «Իրավապաշտպանների համար սա շատ լավ դաս եղավ, որպեսզի նրանք հասկանան, որ որոշակի քաղաքական ուժի անդամ քաղաքական բանտարկյալների իրավունքների պաշտպանությամբ զբաղվելուց պետք չէ վախենալ, եւ դա չի կարող նույնացվել քաղաքական գործունեության հետ», - ասում է Սաքունցը: Ինչպես հայտնի է, համաժողովի մասնակիցներն ապրիլի 6-ին չխուսափեցին բարձրանալ Մատենադարանի հարթակ եւ այնտեղից պահանջեցին ազատ արձակել քաղաքանտարկյալներին:

Հայ ազգային կոնգրեսի համակարգող Լեւոն Զուրաբյանի գնահատմամբ՝ համաժողովը հնարավորություն տվեց, որպեսզի ողջ աշխարհի իրավապաշտպանները սպառիչ տեղեկություններ ստանան Հայաստանում վերջին երկու տարիներին տեղի ունեցող իրադարձությունների մասին: «Ողջ աշխարհից Երևան եկած հեղինակավոր իրավապաշտպանները բացահայտ աջակցեցին հայ ժողովրդի պայքարին՝ Հայաստանում ժողովրդավարական ազատությունների վերականգման համար: Նրանք իրենց աչքերով տեսան այն հզոր հանրահավաքը, թե ինչպես է հայ ժողովուրդը պայքարում սահմանադրական կարգի վերականգման համար: Նրանք ի լուր ողջ հայ ժողովրդի խոստացան, որ իրենք ողջ աշխարհում պաշտպանելու են այդ գործընթացը: Վստահ ենք, որ հենց այդպես էլ կլինի», - ասաց Լեւոն Զուրաբյանը:

Արձանագրման ենթակա փաստեր

Համաժողովի ընթացքում տեղի ունեցած բուռն զարգացումների հետեւանքով, թերեւս, աննկատ մնացին մի քանի դրվագներ, որոնք առանձին արձանագրման կարիք ունեն: ՄԻՄՖ պատվիրակությունը Սերժ Սարգսյանի հետ հանդիպել էր մինչեւ համաժողովի բացումը, եւ վերջինիս առջեւ երեք խնդիր էր բարձրացրել՝ ազատ արձակել քաղաքանտարկյալներին, «Ա1+» հեռուստաընկերությանը եթեր վերադարձնել, Մարտի 1-ի 10 զոհերի սպանության հանգամանքները բացահայտել: Սերժ Սարգսյանը հանդիպման ժամանակ փորձել էր հերքել ՄԻՄՖ պատվիրակների պահանջներում ՀՀ իշխանություններին հասցեագրված մեղադրանքները: Դրանից մի քանի ժամ հետո ՄԻՄՖ նախագահ Սուեր Բելասսենը համաժողովի բացման արարողության ժամանակ հնչեցրեց իրենց պահանջները՝ ասելով, որ իրենք հետամուտ են լինելու իրենց պահանջների կատարմանը: Սա ցույց է տալիս, թե որքանով են համոզիչ եղել Սերժ Սարգսյանի ասածները միջազգային իրավապաշտպանների համար:

ՀՀ արդարադատության նախարար Գեորգ Դանիելյանը համաժողովի բացման արարողության ժամանակ հրաժարվեց ՄԻՄՖ պահանջների վերաբերյալ մեկնաբանություն տալուց: Իսկ հաջորդ օրը ապրիլի 7-ին նա լրագրողների հետ զրույցում փորձել էր ՄԻՄՖ-ը ներկայացնել, որպես սովորական շարքային հասարակական կազմակերպություն: Այսպիսով Դանիելյանը փորձեց որպես շարքային ներկայացնել մի կազմակերպության, որի համաժողովին մասնակցելու համար Երևան էր եկել Հաագայի միջազգային քրեական դատարանի դատախազ Լուիս Մորենո Օկամպոն, ԵՄ ընդլայնման եւ հարեւանության քաղաքականության հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ղեկավար Յանեշ Լենարչիչը, Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության նախագահ Աբդու Դիուֆը, Եվրադատարանի մի քանի դատավորներ եւ այլն: Սակայն, ՀՀ իշխանությունների պարագայում առավել հետաքրքիր պետք է լինի այն փաստը, որ ՄԻՄՖ-ը համարվում է միջազգային քրեական դատարանի հիմնական գործընկերներից մեկը, ինչի մասին համաժողովի բացման ժամանակ իր ելույթում հայտարարեց նաեւ Լուիս Մորենո-Օկամպոն՝ ավելացնելով, որ իրենք ՄԻՄՖ-ի հետ պայքարում են անպատեհիության դեմ, որպեսզի հանցագործները անպատիժ չմնան: Նա նաեւ պարզաբանեց, որ իրենք միջամտում են միայն այն դեպքում երբ ներպետական արդարադատությունը չի ցանկանում հանցագործին պատժել, իսկ դատեղի է ունենում, երբ հանցագործները, հենց իրենք իշխանության կրողներն են: Հակառակ դեպքում միջազգային քրեական դատարանի կարիքը չկա: Այսինքն, ՀՀ իշխանությունների համար օգտակար կարող է լինել, եթե նրանք եւս մեկ անգամ ուսումնասիրեն եւ իրենց համար հստակ հասկանան, թե վերջին օրերին ովքեր էին այցելել Հայաստան, եւ ինչ հետեւանքներ կարող է ունենալ այդ ամենը:

Վահագն Հովակիմյան -
<http://www.armtimes.com/5733>

Բելասենը չի միացել ՀԱԿ-ին

09/04/2010

Panorama.am



Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) նախագահ Սուրբ Բելասենն այսօրվա ասուլիսում հստակեցրեց, թե ինչու է ապրիլի 6-ին մասնակցել Հայ ազգային կոնգրեսի կազմակերպած հանրահավաքին: Նրա խոսքով, թող տպավորություն չստեղծվի, թե իր ղեկավարած կառույցը միացել է ՀԱԿ-ին:

«Մենք ուղղակի նրանց հետ պահանջում ենք ազատ արձակել բոլոր քաղբանտարկյալներին», -բացատրեց թունիսցի Բելասենը՝ միննույն ժամանակ նշելով, որ նա Հայաստանում հանդիպել է և արմատական ընդդիմության, և իշխանությունների հետ:

Լրագրողները փորձեցին ճշտել, թե ինչ կոնկրետ պայմանավորվածություն է ձեռք բերվել իր և նախագահ Սարգսյանի հանդիպման ժամանակ: Նա ասաց, որ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հետ ինքը խոսել է Միջազգային քրեական դատարանի Հոռմի համաձայնագրին Հայաստանի միանալու մասին: Այդ հարցի վերաբերյալ նախագահ Սարգսյանն ասել է, թե ՀՀ Սահմանադրությունը դեռ պատրաստ չէ, որ Հայաստանը միանա այդ համաձայնագրին:

Բելասենը նաև ասաց, որ Հայաստանի բարձրագույն ղեկավարության հետ հանդիպման ժամանակ իրենք խոսել են նաև խոսքի ու լրատվամիջոցների ազատության մասին:
<http://www.panorama.am/am/politics/2010/04/09/belassen-fidh/>

Հայաստանի և Թուրքիայի կազմակերպությունները Թուրքիային կոչ են անում ազատվել Թուրքիայի ՔՕ 301 հոդվածից
09/04/2010

Panorama.am

Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) Հայաստանի և Թուրքիայի անդամ կազմակերպությունները հանդես են եկել համատեղ հայտարարությամբ: Այսօրվա ասուլիսում հայտարարության տեքստը լրագրողներին ընթերցեց Թուրքիայի Մարդու իրավունքների պաշտպանության հիմնադրամի նախագահ Յավուզ Օնեն:

«Համոզված ենք, որ մարդու իրավունքների պաշտպանությունը Թուրքիայում և Հարավային Կովկասում տարածաշրջանի բոլոր երկրներում խաղաղաստեղծ գործընթացի, հաշտեցման և բարի դրացիական հարաբերությունների գրավականն է և նպատակ ունի երաշխավորել սահմանների բոլոր կողմերում բնակվող անձանց անվտանգությունը, բարեկեցությունն ու արժանապատվությունը:

Կոչ ենք անում Հայաստանի և Թուրքիայի իշխանություններին և հասարակություններին համատեղել ջանքերը և ապահովել այնպիսի միջավայր և գործընթացներ, որ թույլ կտան հատուցել անցյալում տեղի ունեցած մարդու իրավունքների ոտնահարումների, այդ թվում՝ ազգության, կրոնի և այլ հիմքերով խտրականության համար, ինչպես նաև հավատարիմ մնալ միջազգային իրավական փաստաթղթերով ամրագրված մարդու իրավունքների պաշտպանության չափանիշներին», -ասված է հայ և թուրք կազմակերպությունների համատեղ հայտարարության մեջ:

Կազմակերպությունները տարածաշրջանում դեպի մարդու իրավունքները հարգանքն ապահովելու նպատակով հայցում են խոսքի ազատություն բոլոր երկրներում և առաջարկում են հրաժարվել բոլոր այն օրենքներից և գործողություններից, որ սահմանափակում են խոսքի ազատությունը, մասնավորապես՝ հայ-թուրքական երկխոսությանը խոչընդոտող Թուրքիայի Քրեական օրենսգրքի 301 հոդվածից:

Այնուհետև հայտարարությունը շարունակվում է. «Հորդորում ենք Թուրքիայի և Հայաստանի իշխող և ընդդիմադիր բոլոր քաղաքական ուժերին կատարել իրենց պարտքը և ձեռնարկել երկու պետությունների և հասարակությունների միջև հարաբերությունները կարգավորելուն ուղղված բոլոր անհրաժեշտ քայլերը, մասնավորապես իրականացնելով դիվանագիտական հարաբերություններ հաստատելու և սահմանները բացելու վերաբերյալ երկկողմանի արձանագրությունը: Այս ուղղությամբ առաջընթացը և Թուրքիայում ժողովրդավարական ձևափոխումների գործընթացը բարենպաստ միջավայր կձևավորեն Հայոց Ցեղասպանության ցավալի խնդրին անդրադառնալու համար:

Մենք դատապարտում ենք տարածաշրջանի պետությունների որոշ կառույցների ռազմատենչ հավակնություններով սնվող թշնամանքի բոլոր ձևերն ու դրսևորումները:

Երկու հասարակությունների միջև կամուրջներ կառուցելու նպատակով կոչ ենք անում երկու պետություններին իրականացնել ներառական քաղաքականություն և հրաժարվել սահնապափակող մոտեցումներից կյանքի բոլոր ոլորտներում:

Կոչ ենք անում երկու երկրների կառավարություններին և քաղաքացիական հասարակություններին խթանել հավասար և արդար վերաբերմունք բոլոր, այդ թվում՝ մամուլի, կրթության, վարչարարության, իրավակիրարկման և հանրային կյանքի այլ ոլորտներում»:

Ասուլիսում FIDH նախագահ Սուեր Բելասենը իր հերթին նշեց, որ FIDH-ի 7-րդ համագումարը, իր տուրքը մատուցելով Հայոց Ցեղասպանության գոհերի հիշատակին, ողջունում է Հայաստանում և Թուրքիայում իր անդամ կազմակերպությունների ջանքերը և իր լիակատար աջակցությունն է հայտնում Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի 37-րդ կոնգրեսի համատեքստում ընդունված համատեղ հայրարարությանը, մասնավորապես, հայտարարության մեջ նշված գործողությունների հեռանկարներին:

Ինչպես տեղեկացրեց Հայաստանի Քաղաքացիական հասարակության ինստիտուտի նախագահ Արտակ Կիրակոսյանը, հայկական կողմից հայտարարությանը միացել են Եվրոպական ինտեգրացիա ՀԿ-ն, Կովկասի ինստիտուտը, Տարածաշրջանային զարգացման և քաղաքացիական հասարակության ինստիտուտը, իսկ թուրքական կողմից՝ Մարդու իրավունքների ընկերակուցությունը (IHD, Թուրքիա) և Մարդու իրավունքների Թուրքիայի հիմնադրամը (HRFT, Թուրքիա):

<http://www.panorama.am/am/politics/2010/04/09/armenian-turkish-organizations/>

Թուրք իրավապաշտպանները դատապարտում են Ադրբեջանի ռազմատենչ հայտարարությունները

09/04/2010

Panorama.am



«Մենք դատապարտում ենք տարածաշրջանի պետությունների որոշ կառույցների ռազմատենչ հավակնություններով սնվող թշնամանքի բոլոր ձևերն ու դրսևորումները», - ասված է Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) 37-րդ համագումարում հայ և թուրք լիգաների ընդունած բանաձևի մեջ:
Համագումարի ավարտին այսօր տեղի ունեցած ասուլիսում երբ լրագրողները փորձեցին հստակեցնել, թե արդյոք խոսքը նաև Ադրբեջանին է վերաբերում, քանի որ այդ երկրից պարբերաբար հնչում են ռազմատենչ հայտարարություններ, Թուրքիայի Մարդու իրավունքների պաշտպանության հիմնադրամի նախագահ Յավուզ Օնենն պարզաբանեց, որ իրենք դատապարտում են ընդհանրապես բոլորին, ովքեր ռազմատենչ են: «Եթե Ադրբեջանն էլ ռազմատենչ է և ռազմական կոչեր է անում, ապա, իհարկե, մենք դատապարտում ենք նաև Ադրբեջանին», - հավելեց թուրք իրավապաշտպանը:

Նրա խոսքով, սահմանային բոլոր վեճերը հասցնում են նրան, որ մարդկային իրավունքների ոտնահարումներ կատարվեն: Յավուզ Օնենի խոսքով, իրենք նաև քննադատում են այն, որ քննարկման են դրվում Հայաստանի ներկա սահմանները, ինչն էլ պատերազմի առաջացման պատճառ է հանդիսանում:

«Մենք նաև պախարակում ենք Թուրքիայի այն քաղաքականությունը, որ զինվելու համար մեծ գումարներ է ծախսում, մինչդեռ այդ միջոցները կարող էին ծախսվել մարդկանց բարօրության համար», - հավելեց թուրք իրավապաշտպանը:

<http://www.panorama.am/am/politics/2010/04/09/turkis-lawyers/>

**Հայ և թուրք իրավապաշտպանները բանաձևեւ ընդունեցին
ԱՊՐԻԼ 09, 2010**

A1+



Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի՝ հայկական եւ թուրքական լիգայի անդամներն այսօր համատեղ բանաձեւ ընդունեցին՝ հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ:

«Մենք այս բանաձեւն ընդունել ենք ոչ թե իբրեւ կողմեր, այլ մարդու իրավունքների պաշտպաններ», - նախքան բանաձեւի հրապարկումը հայտարարեց թուրք իրավապաշտպան Յուսուֆ Ալթաթար:

Շարունակելով նրա խոսքը՝ մեկ այլ թուրք իրավապաշտպան՝ Յավուզ Օնենը, ներկաներին հայտնեց, որ այսօր FIDH-ի 37-րդ համաժողովի շրջանակներում Երեւանում գտնվող 3 իրավապաշտպաններն արդեն 25 տարի է Թուրքիայում պայքար են մղում մարդու իրավունքների պաշտպանության համար:

«Մենք ցանկանում էին Հայաստան գալ, քանի որ հայ-թուրքական հարաբերությունները նորից վտանգված են: Մենք ցանկանում ենք բացել այն դռները, որոնք կողպել են պետական մարմինները: Մենք ցանկանում ենք մեր հայ գործընկերների հետ կողք-կողքի նստել, գրկել միմյանց եւ մտածել մեր երկրներում մարդու իրավունքների պաշտպանության մասին», - ասաց Յավուզ Օնենը:

Այսօր հրապարակված բանաձեւում թուրք իրավապաշտպանները «Հայոց ցեղասպանություն» արտահայտությունն օգտագործել են հետեւյալ համատեքստում. «Հորդորում ենք Թուրքիայի և Հայաստանի իշխող և ընդդիմադիր բոլոր քաղաքական ուժերին կատարել իրենց պարտքը և ձեռնարկել երկու պետությունների և հասարակությունների միջև հարաբերությունները կարգավորելուն ուղղված բոլոր անհրաժեշտ քայլերը, մասնավորապես իրականացնելով դիվանագիտական հարաբերություններ հաստատելու և սահմանները բացելու վերաբերյալ երկկողմանի արձանագրությունը: Այս ուղղությամբ առաջընթացը և Թուրքիայում ժողովրդավարական ձևափոխումների գործընթացը բարենպաստ միջավայր կձևավորեն Հայոց ցեղասպանության ցավալի խնդրին անդրադառնալու համար»:

Դուք՝ թուրք իրավապաշտպաններդ, ընդունում եք 1915թ. Հայոց ցեղասպանության փաստը՝ հայ լրագրողների հարցին՝ թուրք իրավապաշտպանները հրաժարվեցին պատասխանել:

«Դա շատ նուրբ հարց է եւ կարող է վտանգել կողմերի միջև հարաբերությունները: Այդ հարցին հոգեբանական մոտեցում է պետք: Մենք պատրաստ ենք առերեսվել մեր պատմության հետ, սակայն ժամանակ է պետք, որպեսզի մեր ժողովուրդը ընդունի տարիներ շարունակ ասվածները», - ասաց պարոն Օնենը :

Ընդունված բանաձեւում տեղ է գտել նաեւ. «Մենք դատապարտում ենք տարածաշրջանի պետությունների որոշ կառույցների ռազմատենչ հավակնություններով սնվող թշնամանքի բոլոր ձևերն ու դրսևորումները» արտահայտությունը:

Դուք նաև դատապարտո՞ւմ եք Ադրբեջանի ռազմատենչ հայտարարությունները. «Ա1+»-ի հարցին՝ պարոն Օնենը պատասխանեց. «Մենք դատապարտում ենք բոլորի ռազմատենչ հայտարարությունները: Եթե ռազմատենչ հայտարարություններ է անում Ադրբեջանը, մենք դատապարտում ենք նաև Ադրբեջանին: Բոլոր սահմանային եւ տարածքային վեճերը հանգում են մարդու իրավունքների ոտնահարումների»: Հայկական կողմից բանաձեւը նախաձեռնող՝ «Քաղաքացիական հասարակության ինստիտուտի» նախագահ Արտակ Կիրակոսյանը հայ լրագրողներին հիշեցրեց, որ այն, ինչ այսօր մենք կարող ենք հերոսական քայլ համարել, ծափահարություններով ողջունել թուրք իրավապաշտպանների հայտարարությունները, նրանց համար Թուրքիայում կարող է ճակատագրական լինել: Թուրք իրավապաշտպանները նշեցին, որ իրենք Հրանտ Դինքի բարեկամներն են. «Թուրքիայում սպանելով Հրանտ Դինքին, սպանեցին մարդու իրավունքների պաշտպանությունը, ժողովրդավարությունը»:

<http://a1plus.am/am/politics/2010/04/9/turks>

Բելասենը ընդդիմության ներկայացուցիչը չէ ԱՊՐԻԼ 09, 2010

A1+



Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի՝ FIDH-ի նախագահ Սուեր Բելասեն Հայաստանից հեռանալուց առաջ չի ցանկանում, որ այնպիսի տպավորություն թողնել, թե ինքը միացել է Հայ Ազգային Կոնգրեսին:

FIDH-ի 37-րդ համաժողովի ավարտից հետո, հայ լրագրողների հետ հանդիպման ժամանակ տիկին Բելասենը նշեց, ՀՀ իշխանությունների հետ իր բոլոր հանդիպումներում ամենաբարձր մակարդակներով նա նշել է քաղբանտարկյալներին ազատ արձակելու եւ մարտի 1-ի 10 սպանությունների բացահայտման անհրաժեշտության մասին:

Ըստ նրա՝ ՀՀ իշխանությունները չեն հերքել, որ ՀՀ-ու մարդու իրավունքների ոլորտում կան խնդիրներ եւ նրա կարծիքով կա այդ խնդիրները վերացնելու ցանկություն:

Սերժ Սարգսյանի հետ հանդիպման ժամանակ տիկին Բելասենը խոսել է Միջազգային քրեական դատարանի Հռոմի համաձայնագրին Հայաստանի միանալու անհրաժեշտության մասին:

«Սերժ Սարգսյանն ինձ ասաց, որ ՀՀ Սահմանադրությունը դեռ պատրաստ չէ, որ Հայաստանը միանա Հռոմի համաձայնագրին: Ինչպես գիտեք նորմերի փոփոխություն է անհրաժեշտ: Մենք խոսել ենք մարտի 1-ի դեպքերի, դրա հետեւանքների՝ քաղբանտարկյալների եւ 10 սպանությունների մասին», - այսօր ասաց նա:

Սերժ Սարգսյանի եւ մյուս բարձրաստիճան պաշտոնյանների հետ հանդիպման ընթացքում տիկին Բելասենը խոսել է նաև ՀՀ-ում խոսքի ազատության, ՁԼՄ-ների

վիճակի մասին. «Դա շատ լուրջ խնդիր է, քանի որ մենք միայն ՋԼՄ-ների միջոցով ենք կարողանում մեր խոսքը հասցնել լայն զանգվածներին, շփվել հասարակության հետ»: FIDH-ի նախագահ նախագահը նշեց, որ ՀՀ-ում նա հանդիպել է բոլոր կողմերի հետ, լսել բոլորին, որպեսզի ծայրահեղությունների մեջ չընկնի եւ այդ հարցում իրեն աջակցել է FIDH-ի հայաստանյան գործընկերը՝ «Քաղաքացիական հասարակության ինստիտուտը»:

Աշխարհի տարբեր ծայրերից Երեւան ժամանակ 150 իրավապաշտպաններն իրենց երկրներ կվերադառնան վաղը:

<http://a1plus.am/am/politics/2010/04/9/souhayr-belhassen>

FIDH-ին անդամակցող Հայաստանի եւ Թուրքիայի կազմակերպությունները հանդես են եկել հայտարարությամբ

09.04.2010

Radio Free Europe / Radio Liberty

Ռուզաննա Ստեփանյան



Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիային (FIDH) Հայաստանից ու Թուրքիայից անդամակցող կազմակերպությունները ուրբաթ օրը տարածել է են համատեղ հայտարարություն՝ հորդորելով Թուրքիայի եւ Հայաստանի քաղաքական ուժերին ձեռնարկել երկու պետությունների եւ հասարակությունների միջեւ հարաբերությունների կարգավորմանն ուղղված անհրաժեշտ քայլեր:

«Հորդորում ենք Թուրքիայի եւ Հայաստանի իշխող եւ ընդդիմադիր բոլոր քաղաքական ուժերին կատարել իրենց պարտքը եւ ձեռնարկել երկու պետությունների եւ հասարակությունների միջեւ հարաբերությունների կարգավորմանն ուղղված անհրաժեշտ քայլեր՝ մասնավորապես, իրականացնելով դիվանագիտական հարաբերություններ հաստատելու եւ սահմանները բացելու վերաբերյալ երկկողմանի արձանագրությունները: Այս ուղղությամբ առաջընթացը եւ Թուրքիայում ժողովրդավարական ձեւափոխումների գործընթացը բարենպաստ միջավայր կձեւավորեն Հայոց ցեղասպանության ցավալի խնդրին անդրադառնալու համար», - ասված է հայտարարությունում:

Հայտարարության հեղինակները նաեւ Թուրքիայի իշխանություններին առաջակում են հրաժարվել «հայ-թուրքական երկխոսությանը խոչընդոտող» Թուրքիայի Քրեական օրենսգրքի 301 հոդվածից:

Լրագրողների հետ հանդիպմանը պատասխանելով հարցին, թե արդյո՞ք մտավախություն չունեն, որ նման հայտարարության տակ ստորագրելուց հետո կենթարկվեն հետապնդումների, Թուրքիայի Մարդու իրավունքների ընկերակցության ներկայացուցիչ Յուսուֆ Ալատասը պատասխանեց, թե իրենք իրավապաշտպաններ են եւ «ճշմարտության կողմնակիցներ», եւ չեն մտածում, թե ինչպիսի վերաբերմունքի կարժանան»:

«Ազատություն» ռադիոկայանի հարցին, թե արդյոք թուրք հասարակությունը ցանկանում է կարգավորել հարաբերությունները Հայաստանի հետ եւ բացել սահմանները, Յուսուֆ Ալատասն արձագանքեց, թե Թուրքիայի շարքային քաղաքացիների մեծամասնությունը «հաստատապես ցանկանում է բարելավել հարաբերությունները»:



Թուրքիայի մարդու իրավունքների հիմնադրամի նախագահ Յավուզ Օնենը լրագրողների հետ հանդիպմանը: Երեւան, 9-ը ապրիլի, 2010թ.

«Մենք ցանկանում ենք բացել այն դռները, որ կողպել են պաշտոնական կողմերը», - իր հերթին ասաց Թուրքիայի մարդու իրավունքների հիմնադրամի նախագահ Յավուզ Օնենը:

<http://www.azatutyun.am/content/article/2007732.html>

Այս իշխանությունները սովոր են ծեծ ուտելուն

9 April 2010

Zhamanak.com

Արթուր Խեմչյան

«Ժամանակ»-ի գրուցակիցը «Ազատություն եւ իրավունք» կենտրոնի ղեկավար, իրավապաշտպան Վարդան Հարությունյանն է:

- Ինչպե՞ս եք գնահատում Երեւանում անցկացվող Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) համաժողովը: Ո՞րն է դրա նշանակությունը եւ ինչո՞ւ ՀՀ իշխանությունները համաձայնեցին, որպեսզի այն անցկացվի Երեւանում:

- Ես կարծում եմ, որ մարդու իրավունքների հարցերով այդ կարգի մեծ, աշխարհի մասշտաբով համաժողովներ ճիշտ կլինի անցկացնել այնպիսի երկրներում, որտեղ մարդու իրավունքների հետ կապված խնդիրներ չկան, որպեսզի նրանք կաշկանդված չլինեն եւ ազատորեն կարողանան արտահայտել իրենց մտքերն ու տեսակետները: Ես չգիտեմ, թե ինչ նկատառումներից ելնելով են նրանք որոշել համաժողովն անցկացնել այնպիսի երկրում, ինչպիսին Հայաստանն է, որտեղ մարդու իրավունքների հետ կապված հսկայական, ըստ էության, անլուծելի խնդիրներ կան, որտեղ կան քաղբանտարկյալներ,

գնդակահարված մարդիկ, երթերի ազատության սահմանափակում: Հայաստանում ժողովրդավարական ազատությունների սահմանափակումներից չի գործում միայն խոսքի ազատության սահմանափակումը, եւ մենք, ըստ էության, կարողանում ենք արտահայտվել, այլ խնդիր է, թե դա ինչքանով է տեղ հասնում: Բոլոր դեպքերում համաժողովի տեղը որոշելը դա FIDH-ի խնդիրն է, եւ որքան ես հասկանում եմ, դա եղել է նաեւ ՀՀ իշխանությունների ջանքերի շնորհիվ՝ որպէս երազանք: Նրանց թվում էր, որ եթէ Հայաստանում այդպիսի համաժողով անցկացվի, ապա կարելի կլինի Հայաստանը համարել եթէ ոչ ժողովրդավարական, ապա գոնէ ժողովրդավարական ճանապարհի վրա գտնվող երկիր: Բայց ինչպէս միշտ լինում է, այս անգամ էլ իշխանություններին դա չհաջողվեց, եւ նրանց ծրագիրը, փաստորեն աշխատեց իրենց դէմ: Նրանք հիմա գտնվում են պատային իրավիճակում եւ ցանկացած բան, որ նախաձեռնում են՝ իրենց դէմ է դուրս գալիս: FIDH համաժողովից առաջ ու նաեւ համաժողովի ընթացքում հայտարարություններ եղան ՀՀ-ում մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ, եւ որ ավելի կարելու է, իրենց ամբողջ խմբով, մի քանի տասնյակ իրավապաշտպաններ եկան մասնակցեցին ընդդիմության հանրահավաքին եւ ելույթներ ունեցան այնտեղ: Այդ իմաստով, ես կարծում եմ, որ իշխանությունների ցանկությունն աշխատեց հենց իրենց դէմ:

- FIDH ներկայացուցիչների մասնակցությունը ընդդիմության հանրահավաքում ի՞նչ քաղաքական հետեւանքներ կարող է ունենալ:

- Ըստ էության, նրանք սենսացիոն ոչինչ չեն արել: Նրանք իրավապաշտպաններ են եւ ունեն պարտավորություն իրերն անվանել իրենց անուններով: Վերջին շաբաթների ընթացքում Հայաստանում բարձրացված աղմուկի եւ ճնշումների հետեւանքով նրանք ստիպված էին անդրադառնալ ՀՀ ներքաղաքական իրավիճակին եւ անել այն, ինչ պարտավոր են. քաղբանտարկյալին անվանել քաղբանտարկյալ, ոչ թէ որպէս մարդ, որը հետապնդվում է քաղաքական նկատառումներով, ինչն ի դեպ, հենց քաղբանտարկյալի սահմանումն է: Հիմա միջազգային հանրությունը կամ ինչ-որ մարդիկ դիվանագիտական ինչ-ինչ նկատառումներից ելնելով, փոխանակ կոնկրետ տերմինն օգտագործեն, օգտագործում են դրա սահմանումը, ինչն, իմ կարծիքով, այնքան էլ ճիշտ չէ: Այս իրավապաշտպանները՝ Սուրբ Բեկասենի հետ միասին իրերը կոչեցին իրենց անունով: Ինչ վերաբերում է այս քայլի հետեւանքներին, ապա հանրության համար դա շատ դրական իմպուլս կլինի, որովհետեւ դա իսկապէս լուրջ քայլ էր: Ամեն օր չէ, որ Հայաստանի հրապարակներում Նոբելյան մրցանակակիրներ են ելույթ ունենում, ամեն օր չէ, որ այդ կարգի հայտնի իրավապաշտպաններ են լինում Երեսնում եւ ելույթ ունենում միտինգում: Սա դրական իմպուլս է տալու ընդդիմությանն ու շարժմանը: Ինչ վերաբերում է իշխանություններին, ապա նրանք մի կարճ ժամանակ երեւի թէ կշշկովեն, հետո դուրս կգան այդ վիճակից, որովհետեւ նրանք սովոր են ծեծ ուտելուն: Նրանց համար դա արդեն սովորական է: Այս իշխանություններն ապրում են իրենց աշխարհում եւ չեն լսում ինչ է կատարվում շուրջօրը, ինչ կոչեր են հնչում, ինչ սպառնալիքներ կան: Նրանք իրենք իրենց համար ինչ-որ աշխարհ են ձեւավորել եւ ապրում են իրականությունից կտրված: Թե ինչ է կատարվում նրանց աշխարհում, ինչպէս են կարողանում խլացնել մեր իրական աշխարհի ազդակները, որ իրենց չհասնի, ես չգիտեմ, բայց նրանք չեն լսում ո՛չ միջազգային հանրության, ո՛չ Հայաստանի ժողովրդի կոչերն ու ճնշումները: Ուստի կարծում եմ, որ երբ այդ շշկովածությունն անցնի, սրանք հպարտ կեցվածքով կարող են շարունակել իրենց գործը:

- Միջազգային իրավապաշտպանների կողմից հանրահավաքում ելույթ ունենալու մեջ քաղաքական բաղադրիչ կա՞ր: Հնարավո՞ր է, որ սա ՀՀ-ի վրա արտաքին ճնշումների համատեքստում էր:

- Չեմ կարծում եւ չեմ ուզում իրավապաշտպանության մեջ քաղաքականություն փնտրել: Ես նրանց ելույթները հանրահավաքում լսեցի, եւ գոնե ելույթների մակարդակով նրանք բոլորն էլ խոսում էին մարդու իրավունքից, քաղաքական կալանավորներից, ինչն, ըստ էության, քաղաքականություն չէ: Այդ Հայաստանում է, որ ասում են, եթե դու պաշտպանում ես քաղբանտարկյալներին կամ կոչ ես անում նրանց ազատել, ուրեմն դու քաղաքականացված ես, ուրեմն դու անպայման կոնգրեսական ես: Հայաստանում, ցավոք սրտի, անգամ իրավապաշտպաններից շատերը չեն հասկանում, որ իրավապաշտպանի դերն է լինել ճնշվածի կողքին, անկախ նրանից, թե այդ ճնշվածն ինչ գունավորում ունի: Պաշտպանության կարիք ունեցողին պետք է պաշտպանել, եւ եթե ես պաշտպանում եմ, օրինակ, կոմունիստին, դա դեռ չի նշանակում, որ ես կոմունիստ եմ: Եթե այսօր ես պաշտպանում եմ Կոնգրեսի ներկայացուցիչներին, դա դեռ չի նշանակում, որ ես կոնգրեսական եմ: Դա նշանակում է, որ ես անում եմ իմ գործը: Նույնը անում էին այդ իրավապաշտպանները, եւ նրանց արածը հաստատ քաղաքականություն չէր: Նրանք հստակ բարձրաձայն հայտարարում էին քաղբանտարկյալներին ազատ արձակելու մասին, եւ որեւէ մեկը չի կարող ինձ ապացուցել, որ Բելասենն իրեն ուղեկցող իրավապաշտպանների հետ միասին արդեն անդամագրվել են ՀԱԿ-ին:

- Դուք այն բազմաթիվ իրավապաշտպաններից էիք, ով հրաժարվեց մասնակցել այդ համաժողովին, նշելով, որ նրանք Երեւանում անցկացնելով իրենց համաժողովը, դրանով ջուր են լցնում իշխանությունների ջրաղացին: Շարունակո՞ւմ եք այդպես կարծել:

- Ես մնում եմ իմ համոզմանը, թեւ նորմալ եմ համարում, որ շատ իրավապաշտպաններ մասնակցեցին այդ համաժողովին: Ավելին՝ մասնակցողները նույնիսկ ներսում ինչ-որ ակցիաներ կազմակերպեցին: Ես որոշեցի հրաժարվել մասնակցությունից, որովհետեւ կարծում եմ, որ ցանկացած միջազգային կառույց, կլինի դա իրավապաշտպան կազմակերպություն, դիվանագիտական կորպուս, թե եվրոպական կառույցներ ու ինստիտուտներ, որոնք գալիս են Հայաստան եւ սեղմում են իշխանությունների ձեռքը, փորձում են ինչ-որ քաջալերանքի խոսքեր ասել, դիվանագիտական նկատառումներից ելնելով փորձում են փոքրիկ, չնչին կամ հայաստանցու աչքին ընդհանրապես չերեւացող ինչ-որ «տեղաշարժ» նկատել եւ խրախուսել այս իշխանություններին, դրանով նպաստում են նրան, որպեսզի իշխանությունները շարունակեն բանտերում պահել քաղբանտարկյալներին, շարունակեն քաղաքական հալածանքները, սահմանափակեն մարդու ազատ տեղաշարժի իրավունքը: Դա ինձ համար դատապարտելի է, եւ ես չեմ ցանկանում այդ ամենին մասնակցություն ունենալ: Իմ հայտարարության մեջ ես հստակ նշել էի, որ ՀՀ-ում կան քաղբանտարկյալներ, եւ այդ պայմաններում իրենց այստեղ գալն ու համաժողով անցկացնելը ինչ-որ չափով ՀՀ իշխանությունների լեգիտիմացում է: Հանրահավաքում տեղի ունեցածը, ինչպես նաեւ մինչ այդ արված նրանց հայտարարությունները հենց մեր բարձրացրած աղմուկի արդյունքն էին: Եթե չլինեին այս հրաժարումները, մեր իրավապաշտպանների համատեղ հայտարարությունները, նրանք կարող էին հանգիստ գալ ու գնալ:

- Դուք միշտ նշում եք, որ Հայաստանի խնդիրները պետք է լուծել ներքին ուժերով, բայց կյանքը ցույց է տալիս, որ առանց դրսի ազդակների որեւէ բանի հասնել հնարավոր չէ: Ինչպե՞ս եք գնահատում դրսի գործոնը:

- Դրսի դերը կարելու է, բայց ոչ որոշիչ: Հայաստանի խնդիրները, անկասկած, պետք է լուծվեն ներսի ուժերով եւ հենց ներսի ուժերով էլ լուծվելու են: Բայց 21-րդ դարում, գլոբալիզացիայի դարաշրջանում ներսը եւ դուրսը շաղկապված են: Բոլոր դեպքերում որոշիչը ներսն է, իսկ դուրսը կարող է ուղղակի օգնող լինել:

- Ընդհանրապես մարդու իրավունքների եւ քաղաքացիական հասարակության ձեւավորման տեսանկյունից մենք վերջին տարում առաջընթաց ենք ունեցել, թե՞ հետընթաց:

- Եթե թվաբանորեն վերցնենք, ապա նախորդ տարի ավելի շատ քաղաքատարկյալ ենք ունեցել, քան այս տարի, եւ կարելի է համարել, որ ինչ-որ տեղաշարժ կա: Բայց ես համոզված եմ, որ Հայաստանից շատ ավելի մեծ երկրի համար անգամ մեկ քաղաքատարկյալը չափազանց շատ է, եւ ես դեմ եմ քաղաքատարկյալների թիվը չափանիշ համարելուն: Եթե կա քաղաքատարկյալ, ուրեմն դա արդեն բացասական է, եւ այս իմաստով դրական տեղաշարժ չեմ տեսնում: Բայց մի կարելու է բան եմ ուզում ընդգծել. Հայաստանում հասարակական կազմակերպությունների, հատկապես իրավապաշտպանների դաշտում վերջին շրջանում տեղի ունեցավ կարելու է մի բան. կարծես նրանք սկսեցին դասավորվել եւ տարանջատվել: Եթե մինչեւ մարտի 1-ը կարող էին սվաղելով անցնել իրականության վրայով, ապա հիմա մի կողմից հայտնվել է իրավապաշտպանների մի խումբ, որը մարդու իրավունքները առաջնային է համարում եւ իր համար չկա ավելի կարելու է բան, եւ կան կազմակերպություններ, որոնք պատրաստ են այս իշխանական կառույցների կամ իշխանական պատկերացումների շրջանակներում հարմարվել: Սա ես հետընթաց եմ համարում, որովհետեւ կար ժամանակ, որ այդ քաղաքական գունավորումը չկար, կամ դա չէր խանգարում, որ բոլորս միասին անկաշկանդ համագործակցեինք: Մյուս կողմից՝ այս ամենը, ինչպես նաեւ ընթացող պայքարները, վայրիվերումները, վերջին հաշվով, ծառայում են հենց քաղաքացիական հասարակության ձեւավորմանը եւ միտված են դրականին: Երբ մարդն արդեն այնքան է կարողանում իրեն ազատ զգալ, որ ընդդիմության հանրահավաքին գալիս է 2-3 տարեկան երեխաների հետ, դա արդեն նշանակում է, որ մարդկային ինչ-որ խավ է ձեւավորվում, որն իրեն քաղաքացի է զգում, ոչ թե բնակիչ:

- Հաագայի դատարանի դատախազը Երեւանում հանդիպել է Սերժ Սարգսյանի հետ եւ կարծես հնարավոր է Հայաստանն անդամակցի այդ կառույցին: Հնարավոր է, որ դա մեզ հնարավորություն տա Ռոբերտ Քոչարյանին հանձնել Հաագայի դատարանին:

- Ես այդ հարցին հստակ պատասխան տալ չեմ կարող, բայց կարծում եմ, որ բոլոր նրանք, ովքեր ոչ թե կիրականացնեն, այլ կհանդգնեն մտածել անգամ, որ հանուն իրենց իշխանության պահպանման իրավունք ունեն կրակել խաղաղ ցուցարարների վրա, ոտնահարել ժողովրդի քվեն, ձայնը, բռնանալ այդ ձայնի վրա եւ արյուն հեղել, նրանք բոլորը, եթե ոչ այսօր, ապա վաղը պարտադիր կանգնելու են եւ Հաագայի դատարանի, եւ մնացած բոլոր դատարանների առջեւ, էլ չեմ ասում այն միակ, ամենակարելու է դատարանի մասին, որի մասին նրանք պատկերացում չունեն:

<http://www.zhamanak.com/article/14602/>

Նրանք զգացել են քաղաքացիական ոգին

Ապրիլ 8, 2010

Հայկական ժամանակ



Նախօրեին FIDH 37-րդ համաժողովի բացման արարողության ժամանակ Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (ՄԻՄՖ) նախագահ Սուեր Բելասսենը պաշտոնապես ներկայացրեց FIDH-ի պահանջը ՀՀ իշխանություններին՝ ազատ արձակել 14 քաղբանտարկյալներին:

Երեկ անդրադառնալով FIDH-ի այդ պահանջին՝ ինտերնետային կայքերից մեկին տված հարցազրույցում Արդարադատության նախարար Գեորգ Դանիելյանն ասել է. «Ես էական նշանակություն չեմ տալիս, թե ով ինչ հարցադրումներ է արել, որովհետև ես իրավասու եմ պատասխանել միայն միջազգային պետական կառույցների հարցադրումներին: Ինչ վերաբերում է միջազգային ոչ ֆորմալ կառույցներին, բնականաբար, ես կարող եմ արձագանքել, սակայն սա չեմ կարող համարել որպես պաշտոնական դիրքորոշում»: Նախարարն այնուհետև FIDH-ը համեմատել է հայաստանյան հասարակական որոշ կազմակերպությունների հետ, որոնք էլ այդ կառույցի նման բարձրաձայնում են քաղբանտարկյալների հարցը: «Սակայն դա չի նշանակում, թե մենք համամիտ ենք նրանց հետ եւ պետք է խոսենք այդ ուղղությամբ», - ավելացրել է նա: Երեկ «Արմենիա-Մարիոթում» ընթացող «Արդարադատություն. նոր մարտահրավերներ» համաժողովի ընդմիջմանը ՄԻՄՖ նախագահ Սուեր Բելասսենից փորձեցինք պարզել՝ արդյո՞ք նա համաձայն է նախարարի այդ դիրքորոշման հետ: «Ես գտնում եմ, որ այն, ինչ ասում է պարոն Դանիելյանը դա իր անձնական կարծիքն է», - ասաց ՄԻՄՖ նախագահը: Ստորև ներկայացնում ենք Սուեր Բելասսենի հետ մեր հարցազրույցը.

- Տիկին Բելասսեն, Գեորգ Դանիելյանը պետական պաշտոնյա է: Ավելի հավանական չէ՞, որ իր կարծիքը պաշտոնական է:

- Ես, համենայնդեպս, հանդիպել եմ նախագահի հետ, այսինքն՝ քաղբանտարկյալների հարցը ես բարձրացրել եմ ամենաբարձր մակարդակով: Կարելուրն այն է, որ այսօր մեր բոլոր լիզաների ներկայացուցիչների միջոցով համաշխարհային հանրությունը ներկայացված է այստեղ եւ, փաստորեն, մեր միջոցով կարողացավ քաղաքական բանտարկյալների ազատության հարցը բարձրացնել: Գիտե՞ք որ 100 երկիր, 155 լիզաներ, այսինքն համաշխարհային հանրությունն է այստեղ ներկայացված: Անձամբ ես նախագահի հետ հանդիպման ժամանակ բարձրացրեցի այն 4 կետերը, որ անհրաժեշտ է

իրագործել առաջնահերթ: Առաջինը՝ պետք է անպայման քաղբանտարկյալները ազատ արձակվեն, երկրորդ՝ պետք է ստեղծել մի անկախ եւ արդար հանձնաժողով, որը Մարտի 1-ի զոհերի սպանությունների բացահայտմանը կանդրադառնա, երրորդ՝ պետք է վերանայել արդարադատության համակարգը, չորրորդ՝ պետք է ապահովել տեղեկատվության ազատությունը: Ես «Ա1+»-ի հարցն էլ բարձրացրեցի: Ուրեմն այսօր, երբ որ դուք հարցնում եք, թե ինչ միջոց ունենք, ես պատասխանում եմ, որ մեր միջոցով քաղբանտարկյալների հարցը դարձավ ազգային եւ համաշխարհային պրոբլեմ: Եվ այս համաժողովն է թույլ տալիս, որ այդ հարցը դառնա միջազգային հարց:

- Քաղբանտարկյալների ազատությանը հասնելու ձեր լծակը հարցի միջազգային մակարդակով բարձրաձայնումն է: Այս դեպքում դա կօգնի՞ :

- Նախ շատ ծանր ճնշում է գործադրվում այժմ: Դա նպատակին հասնելու մեր սովորական միջոցն է: Մեզ մեղադրեցին, որ մենք պետական գործիչների, իշխանության ձեռքը սեղմեցինք: Ես պատասխանում եմ՝ ո՞ւմ ձեռքը սեղմենք, մենք մեր մեջ այդ հարցը քննարկելով ոչ մի բանի չենք հասնում, դուք էլ ասացիք, որ չունենք պետական ուժ, այսինքն՝ մենք ստիպված ենք իրենց ձեռքը սեղմել, որպեսզի հասնենք մեր նպատակին: Երկրորդ՝ պետք է անպայման նշեմ, որ հանրահավաքին մասնակցելը չի նշանակում, որ մենք կողմնակից ենք մի քաղաքական ուժի: Մեր նպատակն է ոչ թե օգնել մի քաղաքական կուսակցության, այլ օգնել, որպեսզի ազատվեն քաղբանտարկյալները:Մենք այստեղ քաղաքականություն չենք անում, մասնակցել այդ հանրահավաքին, նշանակում է գտնվել քաղաքական բանտարկյալների պաշտպանների եւ զոհվածների ընտանիքների կողքին, ոչ թե քաղաքական գործունեությամբ զբաղվել:

- Տիկին Բելասսեն, դուք Մերժ Սարգսյանին բարեփոխումների պահանջ եք ներկայացրել, նա էլ խոստացել է երկրում բարեփոխումներ իրականացնել: Դուք դեռ այստեղ եք, սակայն Գեորգ Դանիելյանը նորից պնդում է, որ քաղբանտարկյալների հարցի հետ իրենք համամիտ չեն: Այսքանից հետո հավատո՞ւմ եք, որ իշխանությունները քաղբանտարկյալներին ազատ կարձակեն:

- Ստիպված ենք հավատալ այդ ասածներին, բայց հարցը ոչ միայն մեր, այլեւ ձեր հասարակության, քաղաքական կուսակցությունների եւ իշխանությունների խնդիրն է: Երեք կողմերը պետք է միասին հասնեն այդ նպատակին: Ինչո՞ւ չհավատամ: Համենայնդեպս, այդ խոստումը արվեց ամբողջ աշխարհի, համաշխարհային հանրության առջեւ, ոչ թե ասվեց մի գրասենյակի մեջ:

- Ի՞նչ կարծիք ունեք այն գնահատականների մասին, ըստ որոնց միջազգային կազմակերպությունները ՀՀ իշխանություններին կճնշեն այնքան ժամանակ, մինչեւ Մերժ Սարգսյանը Ղարաբաղի հարցում զիջումների գնա, իսկ դրանից հետո կդադարեն բոլոր ճնշումները:

- Ես չեմ հասկանում ձեր ասածը: Ի՞նչ կապ ունի Ղարաբաղը: Մեր պրոբլեմը դա չէ, մեր պրոբլեմն այն է, որ մենք ուզում ենք քաջալերել, որպեսզի մի հասարակություն ստեղծվի, քաղաքացիական հասարակություն՝ անկախ քաղաքական կուսակցություններից եւ մտքերից, մի երրորդ ուղղություն, որ կարողանա երկրում հաստատել ժողովրդավարություն: Դուք հիմա շանս ունեք եւ այդ շանսը պետք է խելացի

օգտագործեք: Ես քաղաքացիական հասարակության նշույլները տեսա երեկ, երբ որ համաժողովի ժամանակ նույն սրահում էին պարոն Դանիելյանը եւ պաստառներով մարդիկ, որ ասում էին «Ազատեք քաղբանտարկյալներին»: Մենք բախտ ունեցանք այդ դժվար կացությունը հաղթահարելու ծանրությունը կիսել նրանց հետ: Դա լավ նշան է, ինչպես որ լավ նշան է այն, որ հանրահավաքի ժամանակ կային բազմատիպի մարդիկ, Ղարաբաղից եւ այլն, եւ այլն: Այսինքն մենք զգում ենք, որ Հայաստանում սկսում է քաղաքացիական հասարակություն ձեւավորվել: Մենք նկատեցինք նաեւ շատ կարեւոր բան, որ ոստիկաններ չկային:

- Տիկին Բելասսեն բոլորին է հայտնի, որ դա պայմանավորված էր ձեր ներկայությամբ:

- Դա մենք շատ լավ գիտենք, անտեղյակ չենք, միամիտ չենք: Բայց ավելի լավ, եթե մեր շնորհիվ է: Մենք դա գիտակցում ենք եւ ասում ենք՝ լավ է: Ճիշտ նկատեցիք, որ պաշտոնական կառույց չենք, ու որոշ երկրներ միգրացիոն թքած ունեն նաեւ մեր այնտեղ գտնվելու հանգամանքի վրա: Կարեւորը որ դուք հասկացաք, որ հնարավոր է ինչ-որ բան փոխել, եւ որ Հայաստանը մենակ չէ:

Սյուզաննա Պողոսյան

<http://armtimes.s701.sureserver.com/5682>

FIDH-ի համաժողովն ավարտվեց

Ապրիլ 08, 2010

Hra.am



«ՀՀ իշխանություններից մենք պահանջում ենք անհապաղ ազատ արձակել բոլոր քաղբանտարկյալներին»՝ այս խոսքերով է քիչ առաջ Երևանում ավարտվել Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի՝ FIDH-ի 37-ի համաժողովը: Այս նույն խոսքերով էր սկսվել համաժողովը երեք օր առաջ:

Համաժողովը ամփոփել է FIDH-ի փոխնախագահ, Բելառուսը ներկայացնող իրավապաշտպան Ալեա Բիալիատսկին: Նա վստահեցել է, որ Մարդու իրավունքների տեսանկյունից հետխորհրդային գրեթե բոլոր երկրներում իրավիճակը նույն է՝ մեկ բառով ասած՝ անմխիթար:

«ՀՀ իշխանությունների հետ հանդիպումների ընթացքում մեր կազմակերպությունը նաև պահանջել է բացահայտել մարտի 1-ի 10 սպանությունները, քանի որ

քաղաքատարկյալների առկայությունը, Հայաստանում 2008թ. մարտի 1-ի սպանությունները 2008թ-ի նախագահական ընտրությունների հետևանք են», - «Ա1+»-ի հետ զրույցում ասել է պարոն Բիալիատսկին:

FIDH-ի փոխնախագահը վստահեցրել է, որ եթե մինչև իրենց համաժողովը ՀՀ-ում քաղաքատարկյալներն ազատ արձակված լինեին, համաժողովն այլ ընթացք կունենար. «Շատ հարցերից հնարավոր էր խուսափել»:

<http://www.hra.am/am/events/2010/04/08/fidh1>

Մենք չենք աջակցում ո՛չ մեկին, ո՛չ մյուսին

Ապրիլ 08, 2010

Hra.am



«Քաղաքատարկյալների առկայությունն անվիճելի է, ես ինքս եմ նրանց այցելել բանտերում, հանդիպել նրանց ընտանիքներին: Թե քանիսն են՝ հստակ չեմ կարող ասել, բայց նրանք գոյություն ունեն: Ե՛վ հանրապետության նախագահի, և՛ ընդդիմության առաջնորդ Տեր Պետրոսյանի հետ մեր հանդիպումների նպատակը քաղաքական բանտարկյալների խնդիրն էր», - ասել է FIDH-ի նախագահ Սուեր Բելասենը: FIDH-ի նախագահը նշել է, որ ՀԱԿ-ի՝ ապրիլի 6-ի հանրահավաքին միանալը և հարթակից ելույթ ունենալը նույնպես այդ նպատակն ուներ՝ «Հանրահավաքին միացանք ոչ թե նրա համար, որ դա ընդդիմության կազմակերպածն էր, այլ որովհետև քաղաքատարկյալների ազատ արձակման պահանջը հանրահավաքի առանցքային թեման էր:

«Նպատակահարմար գտանք դիմել ոչ թե քաղաքական ուժին, ոչ թե իշխանություններին, այլ այնտեղ գտնվող ժողովրդին: Մենք ցանկանում էինք այդ մասով մեր աջակցությունը հայտնել հավաքվածներին: Մենք չենք աջակցում ո՛չ մեկին, ո՛չ էլ մյուսին, մենք այստեղ ենք մարդու իրավունքների պաշտպանության համար», - շեշտել է Սուեր Բելասենը:

<http://www.hra.am/am/events/2010/04/08/fidh>

ՏԻԿԻՆ ԲԵԼՀԱՍԵՆԸ ՇՏԱՊԵԼ Է

8 April 2010

Aravot

Երեկ Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) նախագահ Սուեր Բելասենը «Ազատություն» ռ/կ-ի հետ զրույցում կարեւորել էր այն հանգամանքը, որ

FIDH-ի՝ «Արամ Խաչատրյան» համերգասրահում տեղի ունեցած համաժողովի ընթացքում մի քանի ընդդիմադիրներ հնարավորություն են ունեցել պաշտոնյաների ներկայությամբ բարձրաձայնել քաղբանտարկյալների ազատ արձակման խնդիրը: «Այնտեղ էին արդարադատության նախարարը, ՄԴ նախագահը, եւ մարդու իրավունքների համար պայքարողները կարողացան իրենց պահանջները ներկայացնել: Այդ ամենն անցավ շատ խաղաղ եւ քաղաքակիրթ ձևով: Սա ժողովրդավարական երկրի պատկեր է՝ այն, ինչ մենք ցանկանում ենք», - հայտարարել էր Բելհասենը: Պարզվեց, որ նա իր գնահատականներում մի քիչ շտապել է: Երեկ «Էրեբունի պլազա» հյուրանոցում FIDH-ի ֆորումի ընթացքում հյուրանոցի աշխատակիցներն ուժի կիրառմամբ պատռել են 14 քաղբանտարկյալներին ազատ արձակելու պահանջով այն նույն պաստառը, որը նախորդ օրը մի քանի ընդդիմադիրներ պարզել էին Օպերայի շենքի ներսում: Նրանք նաեւ բռնություն են գործադրել իշխանության ընդդիմախոս երկու կանանց՝ Իզաբելլա Մարգարյանի (լուսանկարում) եւ Լալա Ասիկյանի նկատմամբ:

<http://aravot.am/am/articles/politics/77264/view>

Նրանք մարտնչում են հանուն ազատության

8 April 2010

Հայկական ժամանակ

Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի երեւանյան համաժողովի պատվիրակների երեւանյան ելույթները հօդս ցնդեցրին իշխանությունների այն հույսերը, թե միջազգային ասպարեզում «կառուցողական համագործակցության» դիմաց Արեւմուտքը մոռացության կտա 2008 թվականի տասը սպանությունների բացահայտման եւ քաղբանտարկյալների հարցը: Հիշեցնեմ՝ իշխանության ներկայացուցիչները դեռ ամիսներ առաջ են հայտարարել Մարտի 1-ի էջը փակված լինելու մասին, մինչդեռ այս օրերին տասը սպանությունների եւ քաղբանտարկյալների թեման կրկին հասավ գագաթնակետին: Այսպիսով, Մարտի 1-ի էջը ոչ միայն փակված չէ, այլեւ հաստատուն ձեռով խրված է ՀՀ իշխանությունների կոկորդին: Ու չնայած հարցի սրման առիթը Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի երեւանյան համաժողովի ներկայացուցիչների ելույթներն են, բայց որ Մարտի 1-ը իշխանության կոկորդից ոչ ոք չի հանել, հասկանալի էր վերջին ամիսների պրոցեսների արդյունքում: Այն բանից հետո, երբ հանրապետական դատարկախոսները հայտարարեցին այդ էջը փակված լինելու մասին դրան հետեւեց միջազգային կառույցների հակահարվածների շարք: Նախ ԵԽԽՎ՝ Հայաստանի հարցով համազգեկուցողները կոշտ ձեռով արձագանքեցին նիկոյանական երգիծական հանձնաժողովի անհեթեթ զեկույցին: Սրան հետեւեցին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, ԱՄՆ պետդեպարտամենտի տարեկան զեկույցը, ԵԽԽՎ խոշտանգումների կոմիտեի հայտնի զեկույցները: Ճիշտ է, այդ փաստաթղթերից որեւէ մեկում հստակ ամրագրված չէ «քաղբանտարկյալ» տերմինը եւ նրանց անհապաղ ազատ արձակելու հարցը, իսկ տասը սպանությունների չբացահայտման պատասխանատուների հասցեն հնարավորինս լողոված է, բայց սա հենց այն մեթոդաբանության արդյունքն է, որը Արեւմուտքը կիրառում է ՀՀ իշխանությունների հետ խաղում: Սա հայտնի է «մտրակի եւ թխվածքաբլիթի» քաղաքականություն անունով: Արեւմուտքը ցույց է տալիս, որ գոհ է սերժանտական իշխանության հնազանդության դրսեւորումներից, բայց եւ չի պատրաստվում մի կողմ դնել նրա վրա ունեցած մի այնպիսի ազդեցիկ լծակ, ինչպիսին է Մարտի 1-ի սպանողը եւ քաղբանտարկյալների առկայությունը: Մեծ հաշվով, սա մի լծակ

է, որ Արեւմուտքը փորձելու է Հայաստանի նկատմամբ կիրառել այնքան, որքան հնարավոր է: Եւ այս լծակի սպառնալիքից Հայաստանին կարող է ազատել միայն այնպիսի իշխանությունը, որը մարտիմեկյան սպանող բացահայտելու, եւ երկրում քաղքանտարկյալների առկայությունը հավիտյանս հավիտենից բացառելու կամք կունենա:

Հ.Գ. Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի երեւանյան համաժողովը պետք է համարել ՀՀ իշխանության ՄԻԱԿ-ական կամ, ավելի ճիշտ կլինի ասել, բրիտանահայ Արմեն Սարգսյանի փառահեղ տապալումը: Իշխանական այդ թելը հույս ուներ ՄԻՄԲ-ի այցը տեղավորել Էմիր Կուստուրիցայի, Յան Գիլանի եւ այսօրինակ պուպուշ դեմքերի այցելությունների շարքում, որոնք պիտի ծառայեին սերժանտական իշխանության PR-ին: ՄԻՄԲ-ի նախագահ Սուեր Բելասսենը, սակայն, կարծես արագ գլխի ընկավ, որ իրեն ուզում են օգտագործել, եւ այս ճշմարտության ընկալման պատճառով մի այնպիսի դոգայով հանդես եկավ Հայաստանում, որ անկասկած շուրջ մեջ է գցել ՀՀ իշխանություններին: Եւ ի դեպ, այն փաստը, որ իշխանությունները ուզում էին ամենագոնեիկ ձեռով օգտագործել Սուեր Բելասսենին եւ նրա կազմակերպությունը, ապացուցվում է ՄԻՄԲ-ի երեւանյան համաժողովի հեռուստատեսային լուսաբանմամբ: Հայկական հեռուստատեսությունները համաժողովի առիթով ասում են նախապես հայտնի հայրուրական տեքստերը, կարծես քաղքանտարկյալների մասին հայտնի ելույթները, հայտնի ակցիաները, եւ հայտնի վանկարկումները չեն եղել:

Նիկոլ Փաշինյան –

<http://www.armtimes.com/5670>

ՄԵՐՈՆՔ ՈՒՐԻՇ ԵՆ

8 April 2010

Aravot

Մերոնք չեն ուզում քաղաքակրթվել

Երեկ, առավոտյան ժամը 10:00-13:00-ը, Հայ ազգային կոնգրեսի երիտասարդական թելի ներկայացուցիչները, ինչպես նախօրոք օրն էր՝ բանտարկյալի հագուստով եւ ձեռնաշղթաներով, ու նաեւ ՀՀ քաղաքացիների մի խումբ հավաքվել էին «Արմենիա Մարիոր» հյուրանոցի մոտ՝ պահանջելով ազատ արձակել 14 քաղքանտարկյալներին: Նրանք այս անգամ որոշել էին հավաքվել այս հյուրանոցի մոտ, որովհետեւ հենց այդտեղ էր շարունակվում ապրիլի 6-ին սկսված Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) համաժողովը: Պիկետի մասնակիցներն այս անգամ եկել էին շնորհակալություն հայտնելու համաժողովի բոլոր անդամներին՝ քաղքանտարկյալների եւ «Մարտի 1»-ի առնչությամբ ապրիլի 6-ին իրենց հայտնած հստակ դիրքորոշման համար: Ավելին, հյուրանոցի նիստերի սրահում ակցիայի երիտասարդ մասնակիցները նաեւ «ապրիլի 7»-ի կապակցությամբ ծաղիկներ են բաժանել FIDH-ի կին պատվիրակներին: Ի դեպ, ճիշտ այն ժամին, երբ հյուրանոցի մոտ պիկետ էր, ներսում ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը հանդիպում էր ԵՄ ընդլայնման եւ եվրոպական հարեւանության քաղաքականության հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեի հետ: Ավարտից հետո, հյուրանոցից դուրս գալով, նա մոտեցել եւ ողջունել է ցուցարարներին: Առ ժամանակ անց ցուցարարներին, պիկետի մասնակիցներին է մոտեցել նաեւ ինքը՝ Շտեֆան Ֆյուլեն եւ փոխանակած մի քանի հարցուպատասխանից հետո հեռացել է:

Ինչպես ապրիլի 6-ին, երեկ էլ որեւէ ոստիկան չի փորձել խանգարել ակցիայի մասնակիցներին, ցրել նրանց կամ պատռել նրանց ձեռքի պաստառները: Չենք կարծում, սակայն, թե հայրենի ոստիկանությունը նման դեպքերում նույնքան բարեհաճ կլինի նաեւ այն ժամանակ, երբ FIDH-ի պատվիրակները հեռանան Երեւանից:

Փոխարենը երեկ լուրջ միջադեպ է տեղի ունեցել «Էրեբունի պլազա» հյուրանոցում, որտեղ 9-րդ հարկի սրահներից մեկում ընթանում էր Ֆեդերացիայի ֆորումներից մեկը: Այստեղ, սրահի մուտքի դռան մոտ տեղադրված էր անգլերենով գրված՝ «Ազատություն 14 քաղբանտարկյալներին» պաստառը, որը նախորդ օրը իշխանության ընդդիմախոսներն ու իրավապաշտպան, ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի նախագահ Լեւոն Բարսեղյանը պարզել էին Օպերայի «Արամ Խաչատրյան» համերգասրահում՝ նույն FIDH-ի համաժողովի մեկնարկի օրը: Մուտքի մոտ տեղադրված էր սեղան, որտեղ մարդիկ կարող էին իրենց ստորագրություններով միանալ քաղբանտարկյալներին ազատ արձակելու պահանջին: Արդեն երեկոյին մոտ, ժամը 17:00-17:20-ը ընկած ժամանակահատվածում, մի երիտասարդ աղջիկ եւ երկու երիտասարդներ՝ քաղաքացիական հագուստով, իսկ նրանք, պարզվեց, հյուրանոցի անվտանգության աշխատակիցներն էին, մոտեցել էին մուտքի դռանն ու կարմիր լաթի պես իրենց կատաղեցրած պաստառը պոկելու պահանջ էին ներկայացրել: «Իրենք անընդհատ ուզում էին, որ պոկենք պաստառը, բայց մենք չէինք ուզում, հետո փորձեցին իրենք պոկել՝ մենք թույլ չտվեցինք: Հրել-քաշքշելով, ձեռքեր ոլորելով՝ փորձեցին մի կողմ տանել ինձ եւ Լալա Ասլիկյանին, նրանցից մեկը, որն ավելի բարձրահասակ էր, հարվածեց գլխիս, պաստառը պոկեցին ու տարան: Ես աղմուկ բարձրացրի, ինչից հետո նիստերի սրահից դուրս եկան լրագրողները, նաեւ ֆորումի մի քանի մասնակիցներ ու տեսան, թե ինչ է կատարվում, նաեւ լուսանկարեցին այդ մարդկանց: Նրանք լրագրողների տեսնելով՝ անմիջապես փախան», - երեկ «Առավոտի» հետ զրույցում պատմեց Իզաբելլա Մարգարյանը:

Երեկ եւ՛ նա, եւ՛ Լալա Ասլիկյանը դիմել էին Ոստիկանության կենտրոնի բաժին՝ կատարված հանցագործության մասին հաղորդում տալու նպատակով: Ինչպես պատմեց Իզաբելլա Մարգարյանը, ոստիկանության քննչական բաժնի պետը կանանց հետ զրուցելուց, բացատրություն վերցնելուց հետո իր ենթականերին հրահանգել էր Լ. Ասլիկյանի հետ գնալ հյուրանոց, գտնել հանցագործներին ու բերել բաժին: Կարճ ժամանակ հյուրանոցի աքլորակոնով տված երկու աշխատակիցներն էլ բերման էին ենթարկվել: Կանայք նրանց ճանաչել էին: Արդյոք միջադեպի փաստի առիթով քրեական գործ հարուցվե՞լ է, թե՞ ոչ՝ գոնե Իզաբելլա Մարգարյանը տեղյակ չէր: Նա միայն ասաց, որ երբ ոստիկանությունում բացատրություն տալուց հետո իրենք բաժնից դուրս են եկել, հյուրանոցի աշխատակիցները դեռ բաժնում էին:

Այն, որ «Էրեբունի պլազա» հյուրանոցի անվտանգության աշխատակիցները, ի տարբերություն, օրինակ՝ «Արմենիա Մարիոթ» հյուրանոցի անձնակազմի, պակաս դաստիարակված էլ են եղել, ապացուցում է երեկ տեղի ունեցած մեկ այլ փաստ: Բանն այն է, որ ընդդիմության ներկայացուցիչ երիտասարդները երեկ փորձել են նաեւ «Էրեբունի պլազայում» օտարերկրյա իրավապաշտպան կանանց ծաղիկներ նվիրել, բայց նախնական փորձերն ապարդյուն են եղել: Հյուրանոցի անվտանգության աշխատակիցներն արգելել են նրանց քաղբանտարկյալ Մասուն Միքայելյանի լուսանկարով շապիկով ներս մտնել: Միայն FIDH-ի Հայաստանի ներկայացուցիչների միջամտությունից հետո երիտասարդներին, այն էլ՝ անվտանգության ծառայության աշխատակիցների ուղեկցությամբ, թույլատրվել էր բարձրանալ նիստերի դահլիճ եւ ծաղիկներ բաժանել: Թե որն է «Էրեբունի պլազա» հյուրանոցի անձնակազմի այսօրինակ

լկտի պահվածքի պատճառը՝ փորձել էր ճշտել «Ա1+»-ը: Հենց հյուրանոցի աշխատակիցներն էին «Ա1+»-ին խորհուրդ տվել՝ պարզել, թե ով է հյուրանոցի իրական տերը: Թե ով է տերը, առաջիկայում, իհարկե, կպարզվի, բայց որ ՀՀ նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանն այդ շենքում առնվազն գրասենյակ ունի՝ արդեն հաստատ է:

ՆԱԻՐԱ ՄԱՍԻԿՈՆՅԱՆ

<http://www.aravot.am/am/articles/politics/77265/view>

Հայաստանի իշխանության համար մարդու իրավունքները արժեք չեն ներկայացնում

8 April 2010

Zhamanak.com

Քրիստինե Խանումյան



Ասում է ռուս իրավապաշտպան, «Երիտասարդական իրավապաշտպան շարժում» կազմակերպության անդամ, Երեւանում մեկնարկած Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի՝ FIDH-ի 37-րդ համաժողովի մասնակից Աննա Դոբրովոլսկայան:

- Աննա, այդոր դուք Երեւանում եք, մասնակցում եք մարդու իրավունքներին վերաբերող համաժողովի: Տեղյա՞կ եք, թե այսօր ինչ իրավիճակ է տիրում Հայաստանում՝ մարդու իրավունքների պաշտպանության առումով:
- Ամենագլխավորը ինչ գիտեմ, այն է, որ այստեղ շարունակվում է այն բարդ իրավիճակը, ինչպիսին առկա է հետխորհրդային այլ երկրներում, գիտեմ, որ այստեղ իրավիճակը շատ քիչ է տարբերվում հարեւան Վրաստանից կամ Ադրբեջանից: Գուցե այստեղ իրավիճակը մի փոքր ավելի լավ է, քան Կենտրոնական Ասիայի երկրներում կամ Բելառուսում, թեեւ նույն Բելառուսում արդեն գրեթե քաղաքատարկյալներ չկան, իսկ ահա Հայաստանում իրավիճակը շատ ուրիշ է: Ընդհանուր առմամբ, դա կարելի է բնութագրել այսպես՝ իշխանությունների կողմից այնպիսի պահվածքի դրսևորում, երբ մարդու իրավունքները իրապես արժեք չեն ներկայացնում իրենցից: Այսինքն՝ դա կարող է արժեք եւ կարելու փաստ լինել այն մարդկանց համար, ովքեր այստեղ ապրում են եւ փորձում են ինչ-որ քաղաքացիական ակտիվություն ցուցաբերել, բայց իշխանությունների համար, ինչպես Հայաստանի, այնպես էլ այլ երկրների, դա շարունակում է մնալ քաղաքական խաղի բաղկացուցիչ մաս եւ բանակցությունների խաղաքարտ՝ հայերի եւ եվրոպացի քաղաքական գործիչների հետ: Որովհետեւ եթե, ասենք, բանակցությունները Ռուսաստանի հետ են վարվում, ապա դրանք լիովին այլ կերպ են արվում:
- Ռուսաստանի եւ Հայաստանի իշխանությունները իրար լավ են հասկանում երեւի:

- Կարծում եմ՝ այո:

- Դուք շեշտեցիք հետխորհրդային երկիր լինելու հանգամանքը, կարծում եք՝ մենք դեռ չենք տարանջատվել «խորհրդային»-ից:

- Այո, կարծում եմ, որ մենք դեռ այնքան էլ չենք տարանջատվել ԽՍՀՄ-ից, եւ ոչ թե այն համատեքստում, որ մենք ընդհանուր դաշտում ենք, այլ այն համատեքստում, որ բոլոր այս երկրները երկար ժամանակ սկզբից տոտալիտար, իսկ հետո ավտորիտար ռեժիմների օրոք են ապրել: Եվ այն մարդիկ, ովքեր ապրում են մեր տարածաշրջանում, որպես կանոն այն մարդիկ են, ովքեր բավականին վաղուց են ծնվել, եւ այդ մարդիկ ուղղակի այլ բան չեն էլ տեսել: Մենք այսօր հիմնականում աշխատում ենք երիտասարդների հետ, եւ իհարկե, այժմ երիտասարդները այլ կերպ են մտածում: Բայց, ասենք, նույն Ռուսաստանում հստակ տարանջատում կա. կան մարդիկ, ովքեր աջակցում են գործող իշխանությունների քաղաքականությանը, եւ ասում են, որ մեզ ոչ մի ազատություններ էլ պետք չեն, որ մեզ ուժեղ ձեռք է պետք, որպեսզի ամեն ինչ ծաղկի ու բարգավաճի, բայց կան մարդիկ, հատկապես ավելի երիտասարդ սերնդի մեջ, ովքեր ավելի ազատ են մտածում, եւ ասում են, որ ոչ, մեզ համար ազատությունները շատ կարեւոր են, եւ անգամ եթե մենք ուսելու բան էլ չունենանք, մենք կայաքարենք հացի համար, բայց փոխարենը մենք պետք է հնարավորություն ունենանք փողոց դուրս գալ եւ չտուժել դրա համար:

- Երեւի լսել եք այն մասին, թե վերջին նախագահական ընտրություններից հետո ինչպիսի իրադարձություններ տեղի ունեցան Հայաստանում: Հետաքրքիր է՝ այդ դեպքերի մասին, ի՞նչ գիտեն ձեր մոտ, ինչպիսի՞ տեղեկություններ են հասել:

- Ես չգիտեմ, թե ինչպիսի իրավիճակ էր ընտրությունների ժամանակ, բայց մարտի 1-ի իրադարձություններից հետո, ապրիլի սկզբից մենք մեր հայ կոլեգաների հետ Կիևում էինք՝ միջազգային կոնֆերանսի էինք մասնակցում, եւ մենք այնտեղ համերաշխության ակցիա կազմակերպեցինք՝ այդ իրադարձություններից տուժած մարդկանց համար: Ինձ հայտնի է, որ տեղի են ունեցել ընտրություններ, հնարավոր է, որ դրանք անցել են խախտումներով, եւ երբ մարդիկ դուրս են եկել, որպեսզի բողոքեն այդ ամենի դեմ՝ նրանց դեմ չափազանց բիրտ ուժ է կիրառվել, մի քանի մարդ զոհվել է, շատերը վիրավորվել են:

- Ըստ ձեզ, ինչո՞ւ պաշտոնական Մոսկվան այդքանից հետո շարունակեց համագործակցել այս իշխանությունների հետ, եւ ոչ մի արձագանք չտվեց այն ժողովրդավարական պայթյունին, որը եղավ Հայաստանում՝ ընտրություններից հետո:

- Ինձ ուղղակի թվում է, որ հետխորհրդային երկրների տարածքում այնքան էլ ընդունված չէ խոսել ինչ-որ ժողովրդավարական գործընթացների կամ մարդու իրավունքների մասին: Մենք շատ ենք խոսում այն մասին, որ մենք եղբայրական ժողովուրդներ ենք, որ մենք շատ ընդհանրություններ ունենք, որ մենք սիրում ենք իրար, ընդհանուր տնտեսություն ունենք եւ այլն, սակայն այդ ամենի համատեքստում մարդու իրավունքներն ու ժողովրդավարությունը ուղղակի դուրս են մնում: Իհարկե, ԱՊՀ կազմակերպության կազմում կան անգամ մարմիններ, ովքեր կոչված են մարդու իրավունքների հարցերով զբաղվելու, փաստաթղթերով դրանք ինչ-որ տեղ գրանցված են, բայց իրականում դրանք գոյություն չունեն, չեն աշխատում:

- Ասում են, որ ՌԴ իշխանությունները իրականում այն պատճառով են աջակցում ՀՀ իշխանություններին՝ այս դեմոկրատական պայքարի դեմ գործողություններին, որովհետեւ հենց ՌԴ իշխանություններն իրենք չեն հանդուրժում իրենց ընդդիմությանը եւ վախենում են ընդդիմություն ունենալ:

- Ռուսաստանի իշխանությունները իսկապես վախենում են ընդդիմություն ունենալ, այն դեռեւս չկա: Այսինքն՝ կան տարբեր քաղաքական ուժեր, ովքեր իրապես ընդդիմադիր են,

բայց նրանք շատ թույլ եւ ցրված են եւ նրանց համար շատ դժվար է աշխատել, որովհետեւ աշխատանքի շատ նեղ դաշտ ունեն: Հիմա իրավիճակն այնպես է դասավորվել, որ բնակչության մեծ մասը կամ բացահայտ աջակցում է իշխանություններին, կամ էլ ընդհանրապես ոչինչ չի անում՝ այդ քաղաքականության դեմն առնելու համար:

- Այս ֆորումը, որ այստեղ այսօր մեկնարկել է Երեւանում, արդեն բավականին բացասական գնահատականների է արժանացել թե՛ ՀՀ շատ քաղաքացիների, թե՛ ընդդիմության եւ թե՛ անգամ իրավապաշտպանների կողմից, ովքեր պնդում են, որ այսպիսով FIDH-ը լեգիտիմացնում է ՀՀ գործող իշխանություններին: Իշխանություններ, ովքեր քաղաքատարկյալներ են պահում, մարդու իրավունքներ են ոտնահարում, եւ ովքեր չեն ընդունվում հայ հասարակության կողմից:

- Ես հասկանում եմ նրանց, ովքեր լավագույն նպատակներով կազմակերպել են այս միջոցառումը հենց Հայաստանում, որպեսզի խոսվի երկրում ստեղծված իրավիճակի մասին եւ ցույց տրվի, որ այստեղի իրավապաշտպան կազմակերպությունները աջակցության կարիք ունեն, եւ որ նրանք իրապես կարելոր գործ են անում: Ես հասկանում եմ նաեւ այն իրավապաշտպաններին, ովքեր ասում են, որ չէր կարելի այդ միջոցառումն անցկացնել կառավարության մասնակցությամբ:

- Առավել եւս, որ մենք առ այսօր քաղաքատարկյալներ ունենք Հայաստանում:

- Այո, բայց չնայած այն հանգամանքին, որ նրանք կան, անհրաժեշտ է, որպեսզի խոսվի այն մասին, թե ինչպե՞ս կարելի է փոխել իրավիճակը: Գուցե FIDH-ին արժեր խոսել տարբեր իրավապաշտպան կազմակերպությունների հետ, եւ խորհուրդ հարցնել՝ արժե՞ր հրավիրել, ասենք, նախագահին կամ իշխանությունների այլ ներկայացուցիչների: Բայց նրանց չհրավիրել չէին կարող, որովհետեւ այդպիսին է միջազգային նման ֆորումների ֆորմատը: Բայց գուցե, եթե այդպիսի երկխոսություն լիներ նախապես, ապա մարդիկ արտահայտվելու հնարավորություն կունենային, եւ կկարողանային ասել՝ մենք ասացինք, թե ինչպես է պետք անել, եւ մեզ չլսեցին: FIDH-ն էլ կարող էր ասել, մենք հարցրել ենք, բայց պատասխան չստացանք: Ֆորումին մասնակցելուց հրաժարվելը, չեմ կարծում, թե արդյունավետ դիրքորոշում է, բայց ես այն հասկանում եմ: Այսինքն՝ ես հասկանում եմ այն մարդկանց, ովքեր չեն ցանկացել այստեղ գալ: Չեմ կարող ասել, թե աջակցում եմ, բայց հասկանում եմ:

<http://www.zhamanak.com/article/14582/>

«10 սպանությունները ընտրությունների հետեւանք են»

ԱՊՐԻԼ 08, 2010

A1+



«ՀՀ իշխանություններից մենք պահանջում ենք անհապաղ ազատ արձակել բոլոր քաղաքականապես ակտիվներին», - Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի՝ FIDH-ի 37-ի համաժողովի աշխատանքները այսօր Երեւանում ավարտվեց այս խոսքերով: Համաժողովը ամփոփեց FIDH-ի փոխնախագահ, Բելառուսը ներկայացնող իրավապաշտպան Ալեքս Բիալիատսկին՝ վստահեցնելով, որ Մարդու իրավունքների տեսանկյունից հետխորհրդային գրեթե բոլոր երկրներում իրավիճակը նույն է՝ անմխիթար է:

«ՀՀ իշխանությունների հետ հանդիպումների ընթացքում մեր կազմակերպությունը նաեւ պահանջել է բացահայտել մարտի 1-ի 10 սպանությունները, քանի որ քաղաքականապես ակտիվների առկայությունը ՀՀ-ում 2008թ. մարտի 1-ի սպանությունները դրանք 2008թ. ընտրությունների հետեւանք են», - «Ա1+»-ի հետ զրույցում ասաց պարոն Բիալիատսկին:

Նա հիշեցրեց, որ 2008թ. դեպքերից հետո FIDH-ի առաջին կազմակերպությունն էր, որը գնահատական տվեց տեղի ունեցած դեպքերին. «Ես համոզված եմ, որ այս օրերի ընթացքում քաղաքականապես ակտիվների ազատ արձակելու եւ 10 սպանությունները բացահայտելու մասին մեր հայտարարությունները անարդյունք չեն մնալու: Նաեւ մի շարք այլ միջազգային կազմակերպությունների միջոցով մենք ՀՀ իշխանությունների ուշադրության կենտրոնում կպահենք այդ հարցերը: Ես կարծում եմ, որ ՀՀ իշխանությունները ըմբռնումով կմոտենան այդ հարցերին»:

FIDH-ի փոխնախագահը «Ա1+» վստահեցրեց, որ եթե մինչեւ իրենց համաժողովը ՀՀ-ում քաղաքականապես ակտիվներն ազատ արձակված լինեին, համաժողովն այլ ընթացք կունենար. «Շատ հարցերից հնարավոր էր խուսափել»:

Ալեքս Բիալիատսկին հիշեցրեց, որ եթե ներպետական դատական ատյանները չեն կարողանում հասնել արդարադատության եւ կախվածություն ունեն իշխանություններից: Այդ դեպքում, ըստ նրա, արդարադատության հնարավոր է հասնել միջազգային ատյաններում. «Նախադեպեր կան: ՀՀ-ն ԵԽ անդամ է եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կարող է որոշումներ կայացնել ՀՀ-ում առկա խնդիրների վերաբերյալ»:

Վաղը ժամը 12.00-ին նախատեսված է FIDH-ի ղեկավարների ասուլիսը, որը նվիրված է լինելու հայ-թուրքական հարաբերություններին եւ այդ հարաբերություններում մարդու իրավունքների ոտնահարումներին: Ի դեպ, համաժողովի ընթացքում բազմաթիվ իրավապաշտպաններ արդեն դատապարտել են Թուրքիային 1915թ. Հայոց ցեղասպանության համար:

«Այս համաժողովը որևէ բան չի կարող պարտադրել մեր իշխանություններին»

ԱՊՐԻԼ 08, 2010

Panorama.am

«Մա սովորական համաժողով է, որը տարբեր երկրներում էլ կազմակերպվում է: Այս անգամ կազմակերպիչները որոշել են անցկացնել Հայաստանում: Այս համաժողովը որևէ բան չի կարող պարտադրել մեր իշխանություններին: ԵԽԽՎ ընդունած բանաձևերը որևէ բան չփոխեցին Հայաստանում, թեև պարտավոր էինք կատարել բանաձևերի պահանջները, այս դեպքում էլ ի՞նչ կազմակերպությունների մասին է խոսքը», - ասուլիսում նման տեսակետ հայտնեց «Հելսինկյան ընկերակցության» նախագահ Միքայել Դանիելյանը՝ խոսելով «Արդարադատություն, նոր մարտահրավերներ Անկախ դատարանի առջև արդյունավետ պաշտպանության իրավունք» թեմայով Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) կազմակերպած 37-րդ համագումարի մասին, որը մեկնարկել է ապրիլի 6-ին ու շարունակվում է մինչ օրս: Ի դեպ, նշենք, որ համագումարի մասնակիցները պահանջում են Հայաստանի իշխանություններից անհապաղ ազատ արձակել բոլոր քաղաքանտարկյալներին:

«Հելսինկյան ասամբլեա» ՀԿ-ի Վանաձորի գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցը համամիտ է Մ. Դանիելյանի այս կարծիքին, որ միջազգային կազմակերպությունները արմատական ազդեցություն չեն կարող ունենալ մի այնպիսի երկրում, որը, լինելով Եվրոպայի խորհրդի անդամ, իր վրա վերցրած պատավորությունները չի կատարում:

«Այս դեպքում ինչ կարող է տալ Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի համաժողովը», - ասաց նա՝ հավելելով, որ, այնուամենայնիվ, իշխանությունների ծրագրած նախագիծը ձախողվել է՝ կապված համաժողովի հետ. նախագահ Սերժ Սարգսյանը հանդես չի եկել ողջույնի խոսքով, նախապես, ըստ օրակարգի, պետք է ելույթ ունենային միայն իշխանության ներկայացուցիչները, սակայն հետագայում փոփոխություն է տեղի ունեցել:

«Իշխանական ծրագիրը ձախողվեց, բայց Հայաստանի քաղաքացիական հասարակության ինստիտուտները, իրավապաշտպանական կազմակերպությունները հաջողություն գրանցեցին», - ասաց Ա. Սաքունցը:

Ասուլիսին ներկա Հանրային խորհրդի անդամ Արշակ Մադոյանն էլ ասաց, որ հայերը իրենց խնդիրը պետք է իրենք լուծեն համառ պայքարի արդյունքում, և չպետք է հույսը դնեն այս կամ այն կազմակերպությունների վրա:

<http://www.panorama.am/am/society/2010/04/08/danielyan/>

«Ներկայացումը ձախողվեց»

ԱՊՐԻԼ 08, 2010

A1+



Ղրղըզստանում տեղի ունեցող վերջին իրադարձությունները քաղաքացիների վերջին եւ միակ ճանապարհն էին: «Ա1+»-ի հետ զրույցում այս կարծիքն հայտնեցին իրավապաշտպաններ Միքայել Դանիելյանն ու Արթուր Սաքունցը:

Հելսինկյան ընկերակցության նախագահ Միքայել Դանիելյանը ողջունելի է համարում ղրղըզ ժողովրդի ընդվզումը իշխանությունների դեմ. «Եթե ժողովուրդն է որոշել իշխանությունը փոխել, դա նորմալ է: Ես չգիտեմ՝ ով է հրահրել կամ ֆինանսավորել այն, սակայն կարելու է, որ ժողովուրդն ինքն իր մեջ կարողացել է ուժ գտնել ընդվզելու»: Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցի կարծիքով՝ Ղրղըզստանում տեղի ունեցող վերջին իրադարձությունները ցայտուն օրինակն են այն բանի, որ իշխանությունների՝ անօրինական դաշտ մտնելն ինչպիսի հետեւանքներ կարող են ունենալ: Ըստ նրա՝ Ղրղըզստանում արդեն նախադեպ է ձեւավորվել իշխանափոխություն ոչ թե ընտրությունների, այլ հեղաշրջման ճանապարհով:

Վկայակոչելով Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի նախաբանը՝ ասաց. «Հռչակագրի նախաբանում հստակ նշված է՝ իշխանությունը ոչ մի անգամ չպետք է ընդունի այնպիսի օրենքներ, որոնք քաղաքացիներին իբրեւ վերջին միջոց՝ թողնի միակ ճանապարհը՝ ապստամբել»:

«Արդյոք իշխանության դեկն իր ձեռքը վերցրած ընդդիմությունը հետագայում կկարողանա՞ ձեւավորել մի միջավայր, որ այլեւս չլինեն նման հեղաշրջումներ: Սակայն հիմա թիվ մեկ խնդիրն է՝ դադարեցնել խժոժությունները», - շարունակեց Արթուր Սաքունցը:

Մեր այն հարցին, թե արդյոք Հայաստանում հնարավո՞ր է ղրղըզական սցենարի կրկնություն, իրավապաշտպան Միքայել Դանիելյանը նշեց. «Ամեն դեպքում հնարավոր է հեղափոխություն, միայն ժողովրդի շատ լուրջ կամք է հարկավոր եւ շատ նորմալ ընդդիմություն, որ կարողանա ժողովրդին իր ետեւից տանել»:

Իսկ Արթուր Սաքունցը կարծում է. «Հայաստանում ընդդիմադիր ուժերն ավելի սկզբունքային, հետեւողական պայքարի ճանապարհ են ընտրել եւ ապստամբության ճանապարհով չեն գնա հեղափոխության, ինչպես տեղի ունեցավ Ղրղըզստանում»:

Ինչ վերաբերում է Հայաստանում արձանագրված մարդու իրավունքների խախտումներին, ապա նրա կարծիքով՝ դրանք համակարգային բնույթ են կրում, որտեղ «դատական մարմինները պատժիչ գործիք են դարձել իշխանությունների ձեռքին»:

Իսկ թե արդյոք Երեւանում անցկացվող Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի համաժողովը (FIDH) կբերի դրական փոփոխություններ, Միքայել Դանիելյանը նշեց. «Եվրոպայի խորհուրդը մարտի 1-ից մինչ օրս Հայաստանի մասին 4 բանաձեւ է ընդունել, ինչ-որ բան փոխվե՞ց: Երբ կասեցնեն Հայաստանի ԵԽ

անդամակցությունը, այն ժամանակ ինչ-որ բան կարելի է սպասել»:

Արթուր Սաքունցի համոզմամբ՝ համաժողովի հետ կապված իշխանությունների ծրագրավորված «ներկայացումը» ձախողվեց: «Ձախողվեց իշխանությունների այն իմիտացիան, թե իբր իրենք կամք ունեն մարդու իրավունքների ասպարեզում կատարելու փոփոխություններ»:

<http://a1plus.am/am/politics/2010/04/8/kirgizstan>

Նրանք մարտնչում են հանուն ազատության

Ապրիլ 8, 2010

Հայկական ժամանակ

Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի երեւանյան համաժողովի պատվիրակների երեւանյան ելույթները հոգս ցնդեցրին իշխանությունների այն հույսերը, թե միջազգային ասպարեզում «կառուցողական համագործակցության» դիմաց Արեւմուտքը մոռացության կտա 2008 թվականի տասը սպանությունների բացահայտման եւ քաղբանտարկյալների հարցը: Հիշեցնեմ՝ իշխանության ներկայացուցիչները դեռ ամիսներ առաջ են հայտարարել Մարտի 1-ի էջը փակված լինելու մասին, մինչդեռ այս օրերին տասը սպանությունների եւ քաղբանտարկյալների թեման կրկին հասավ գազաթնակետին: Այսպիսով, Մարտի 1-ի էջը ոչ միայն փակված չէ, այլեւ հաստատուն ձեւով խրված է ՀՀ իշխանությունների կոկորդին: Ու չնայած հարցի սրման առիթը Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի երեւանյան համաժողովի ներկայացուցիչների ելույթներն են, բայց որ Մարտի 1-ը իշխանության կոկորդից ոչ ոք չի հանել, հասկանալի էր վերջին ամիսների պրոցեսների արդյունքում: Այն բանից հետո, երբ հանրապետական դատարկախոսները հայտարարեցին այդ էջը փակված լինելու մասին դրան հետեւեց միջազգային կառույցների հակահարվածների շարք: Նախ ԵԽԽՎ՝ Հայաստանի հարցով համազգեկուցողները կոշտ ձեւով արձագանքեցին նիկոյանական երգիծական հանձնաժողովի անհեթեթ զեկույցին: Սրան հետեւեցին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, ԱՄՆ պետդեպարտամենտի տարեկան զեկույցը, ԵԽԽՎ խոշտանգումների կոմիտեի հայտնի զեկույցները: Ճիշտ է, այդ փաստաթղթերից որեւէ մեկում հստակ ամրագրված չէ «քաղբանտարկյալ» տերմինը եւ նրանց անհապաղ ազատ արձակելու հարցը, իսկ տասը սպանությունների չբացահայտման պատասխանատուների հասցեն հնարավորինս լողոզված է, բայց սա հենց այն մեթոդաբանության արդյունքն է, որը Արեւմուտքը կիրառում է ՀՀ իշխանությունների հետ խաղում: Սա հայտնի է «մտրակի եւ թխվածքաբլիթի» քաղաքականություն անունով: Արեւմուտքը ցույց է տալիս, որ գոհ է սերժանտական իշխանության հնազանդության դրսևորումներից, բայց եւ չի պատրաստվում մի կողմ դնել նրա վրա ունեցած մի այնպիսի ազդեցիկ լծակ, ինչպիսին է Մարտի 1-ի սպանող եւ քաղբանտարկյալների առկայությունը: Մեծ հաշվով, սա մի լծակ է, որ Արեւմուտքը փորձելու է Հայաստանի նկատմամբ կիրառել այնքան, որքան հնարավոր է: Եւ այս լծակի սպառնալիքից Հայաստանին կարող է ազատել միայն այնպիսի իշխանությունը, որը մարտիմեկյան սպանող բացահայտելու, եւ երկրում քաղբանտարկյալների առկայությունը հավիտյանս հավիտենից բացառելու կամք կունենա:

Հ.Գ. Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի երեւանյան համաժողովը պետք է համարել ՀՀ իշխանության ՄԻԱԿ-ական կամ, ավելի ճիշտ կլինի ասել, բրիտանահայ Արմեն Սարգսյանի փառահեղ տապալումը: Իշխանական այդ թելը հույս ունեն ՄԻՄՖ-ի այցը տեղավորել Էմիր Կուստուրիցայի, Յան Գիլանի եւ այսօրինակ պուպուշ դեմքերի

այցելությունների շարքում, որոնք պիտի ծառայեին սերժանտական իշխանության PR-ին: ՄԻՄՖ-ի նախագահ Սուեր Բելասսենը, սակայն, կարծես արագ գլխի ընկավ, որ իրեն ուզում են օգտագործել, եւ այս ճշմարտության ընկալման պատճառով մի այնպիսի դոգայով հանդես եկավ Հայաստանում, որ անկասկած շուրջ մեջ է գցել ՀՀ իշխանություններին: Եւ ի դեպ, այն փաստը, որ իշխանությունները ուզում էին ամենագոնեիկ ձեռով օգտագործել Սուեր Բելասսենին եւ նրա կազմակերպությունը, ապացուցվում է ՄԻՄՖ-ի երեսնյան համաժողովի հեռուստատեսային լուսաբանմամբ: Հայկական հեռուստատեսությունները համաժողովի առիթով ասում են նախապես հայտնի հայրուրական տեքստերը, կարծես քաղբանտարկյալների մասին հայտնի ելույթները, հայտնի ակցիաները, եւ հայտնի վանկարկումները չեն եղել:

Նիկոլ Փաշինյան -

<http://armtimes.s701.sureserver.com/5670>

**Նոբելյան դափնեկիրը մեկուսաբանում
Ապրիլ 8, 2010**

Հայկական ժամանակ



Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի կողմից Երեւանում կազմակերպած «Արդարադատություն. Անկախ դատարանի առջեւ արդյունավետ պաշտպանության իրավունք. Նոր մարտահրավերներ» թեմայով համաժողովը, որը մեկնարկել էր նախորդ օրը, երեկ շարունակվեց միանգամից երկու վայրերում:

Համաժողովին մասնակցող 151 երկրների ներկայացուցիչների մասնակցությամբ չորս առանձին աշխատանքային խմբերում՝ «Արմենիա-Մարիթ» եւ «Երեբունի-Պլազա» հյուրանոցներում քննարկումներ էին ընթանում:

Այցելել են

Մինչ վերը նշված հյուրանոցներում համաժողովի շրջանակներում աշխատանքային խմբերը քննարկում էին արդարադատության վերաբերյալ տարբեր խնդիրներ, 2003-ի՝ Խաղաղության Նոբելյան դափնեկիր Շիրին Էֆադին քրեակատարողական հիմնարկներում հանդիպում էր քաղբանտարկյալների հետ: Նա նախ այցելել էր «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ եւ հանդիպել այնտեղ պահվող քաղբանտարկյալներ Սասուն Միքայելյանի, Ժորա Սափեյանի եւ Սարգիս Հացպանյանի հետ: Շիրին Էֆադին զրուցել էր քաղբանտարկյալների հետ, նրանց առողջական վիճակով հետաքրքրվել: Այնուհետեւ նա այցելել էր «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ եւ հանդիպել «ՀԺ» գլխավոր խմբագիր, քաղբանտարկյալ Նիկոլ Փաշինյանի հետ: Շիրին Էֆադին մեզ հետ զրույցում պատմեց, որ ինքը ցանկացել է

քաղբանտարկյալի հետ խցում հանդիպել, սակայն, ՔԿՀ-ի վարչակազմը չի համաձայնել եւ հանդիպումը տեղի է ունեցել տեսակցության համար նախատեսված սենյակում: Ըստ տիկին Էբադիի, երբ Նիկոլ Փաշինյանը մտել է տեսակցության սենյակ, ինքը մի պահ կարծել է, թե նա քաղբանտարկյալի փաստաթան է, քանի որ Նիկոլ Փաշինյանը ոչնչով բանտարկյալ չի հիշեցրել: Շիրին Էբադին մեզ պատմեց, որ երբ նախորդ օրը ինքը ՄԻՄՖ պատվիրակության կազմում հանդիպել է Սերժ Սարգսյանի հետ, հենց այդ ժամանակ է քաղբանտարկյալների հետ հանդիպելու պահանջ բարձրացրել: Ի պատասխան, Սերժ Սարգսյանը հայտարարել է, թե Հայաստանում քաղբանտարկյալներ չկան: Բայց, ի վերջո, արդյունքը եղել է այն, որ հաջորդ օրը ՀՀ իշխանությունները թույլատրել են, որպեսզի հեղինակավոր իրավապաշտպանը հանդիպի քաղբանտարկյալներից մի քանիսի հետ: Համաժողովում եւ դրանից դուրս

Մարտի 1-ի գոհերի հարազատները, Հայ ազգային կոնգրեսի ներկայացուցիչները քաղբանտարկյալներին ազատելու եւ Մարտի 1-ի մարդասպաններին պատժելու պահանջով բողոքի ցույց էին կազմակերպել «Արմենիա-Մարիոթ» հյուրանոցի դիմաց: Այդ ընթացքում ՀԱԿ երիտասարդները՝ կակաչների փնջերը ձեռքներին շրջում էին համաժողովի վայրում եւ ծաղիկներ էին բաժանում մասնակից կանանց՝ մայրության տոնի առթիվ: «Արմենիա-Մարիոթում» որեւէ միջադեպ չարձանագրվեց: Փոխարենը «Էրեբունի-Պլազայում» մթնոլորտն այլ էր, հյուրանոցի աշխատակիցները նախ թույլ չէին տալիս, որ ՀԱԿ երիտասարդները բարձրանան համաժողովի անցկացման վայր եւ ծաղիկներ բաժանեն: Նույնիսկ ՄԻՄՖ ներկայացուցչի հորդորներից հետո նրանք հրաժարվում էին ՀԱԿ երիտասարդներին ներս թողնել: Նրանց, թերեւս սարսափեցրել էին երիտասարդների վերնաշապիկները՝ քաղբանտարկյալների լուսանկարներով եւ «Ազատություն քաղբանտարկյալներին» անգլերեն մակագրությամբ: Ի վերջո, ՀԱԿ երիտասարդներին թույլատրվեց վերել բարձրանալ ՄԻՄՖ ներկայացուցչի հետ՝ հյուրանոցի անվտանգության աշխատակցի ուղեկցությամբ: Եթե այս դեպքում, իրավիճակը այս կերպ՝ «բանակցություններով» հանգուցալուծվեց, ապա Իզաբելլա Սարգսյանի եւ Լալա Ասլիկյանի նախաձեռնած ակցիայի պարագայում հյուրանոցի անվտանգության աշխատակիցները դրսևորեցին իրենց իրական կերպարը: Իզաբելլա Սարգսյանը եւ Լալա Ասլիկյանը հյուրանոցի դահլիճի դռան մոտ, որտեղ համաժողովի շրջանակներում քննարկում էր ընթանում, «Ազատություն 14 քաղբանտարկյալներին» պաստառ էին փակցրել եւ ի պաշտպանություն քաղբանտարկյալներին ազատելու պահանջի՝ ստորագրահավաք էին իրականացնում համաժողովի մասնակիցների շրջանում: «Էրեբունի-Պլազայի» անվտանգության աշխատակիցների՝ ակցիան արգելելու առաջին փորձը ավարտվել էր պաստառի տեղափոխությամբ: Սակայն, մոտ երեք ժամ անց, անվտանգության աշխատակիցները որոշել էին անցնել «գրոհի»: Իզաբելլա Սարգսյանը մեզ հետ զրույցում պատմեց, որ երբ դահլիճում քննարկում էր ընթանում եւ բոլորը ներսում էին, վարդագույն վերնաշապիկով ինչ-որ աղջիկ է եկել, ով ներկայացել է, որպես հյուրանոցի աշխատակից եւ սկսել է պահանջել, որ ստորագրահավաքը դադարեցվի, եւ Իզաբելլան ու Լալան այդտեղից հեռանան: Տեսնելով, որ ակտիվիստները չեն կատարում իր հրամանները, հյուրանոցի աշխատակցուհին ակցիայի սկզբից այդտեղ հենակետ հիմնած անվտանգության աշխատակիցներին հրամայել է պաստառը պոկել: Արդյունքում նրանցից մեկը հարձակվել է պաստառի վրա եւ այն պոկելու նպատակով Իզաբելլա Սարգսյանին հարվածելով, իսկ Լալա Ասլիկյանին քաշքշելով՝ նրանց մի կողմ է հրել եւ իր մյուս ընկերոջ հետ պոկել եւ պատռել են պաստառը: Բարձրացած աղմուկի վրա երբ լրագրողները դահլիճից դուրս են եկել, պաստառից սարսափող հյուրանոցի աշխատակիցները սկսել են թաքնվել, որպեսզի իրենց չտեսագրեն եւ չլուսանկարեն:

Իգաբեյլա Սարգսյանից տեղեկացանք, որ նա միջադեպից հետո ոստիկանության Կենտրոնի բաժին հաղորդում է ներկայացրել, որից հետո ոստիկանները բերման են ենթարկել «Էրեբունի-Պլազայի» երկու աշխատակիցներին, որոնք ոստիկանությունում սկսել են հերքել տեղի ունեցածը:

Ի դեպ, այս հյուրանոցի աշխատակիցների արձագանքը քաղբանտարկյալների խնդրին ամենեւին էլ պատահական չէ: Հիշեցնենք, որ հյուրանոցը կապվում է Ռոբերտ Քոչարյանի անվան հետ, այստեղ է տեղակայված նաեւ վերջինիս գրասենյակը, որի վարձակալության գումարը վճարվում է պետբյուջեից:

Ուշագրավ է, որ «Էրեբունի-Պլազայի» այս նույն դահլիճում երեկ ելույթ ունեցավ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Դավիթ Ավետիսյանը: Իհարկե, համաժողովի ընթացքում ելույթ ունեցած ՀՀ մնացած պետական պաշտոնյաների պես նա եւս իր խոսքից առաջ ստիպված էր ամոթանքներ լսել: «Դուք ի՞նչի մասին պետք է խոսեք: Դուք ամոթ չունեք: Դուք խոսեք այն մասին, որ ի կատար չեք ածում Եվրադատարանի վճիռները: Այդ մասին խոսեք», - այսպես է Ավետիսյանին ողջունել նախկին քաղբանտարկյալ Վարդգես Գասպարին: Իսկ Գյումրիի «Ասպարեզ» ակումբի նախագահ Լեւոն Բարսեղյանը, Ավետիսյանի ելույթը ողջունում էր «Կառավարությունը սպանում է, դատավորները՝ քողարկում» պաստառով, որը նա պահեց ողջ ելույթի ընթացքում: Ինչեւէ, ՀՀ դատական համակարգի օրինապաշտության մասին ելույթով հանդես գալուց հետո Դավիթ Ավետիսյանը արագ հեռացավ համաժողովի վայրից: Մարտի 1-ի զոհերի իրավահաջորդների ներկայացուցիչ Արտակ Զեյնալյանի ելույթի թեման նվիրված էր Մարտի 1-ին: Մասնավորապես, նա ներկայացրեց այն իրավիճակը, որ մինչ օրս ոչ ոք պատասխանատվության չի ենթարկվել, չի հարցաքննվել Մարտի 1-ի տասը սպանությունների համար: Միաժամանակ, ՀՀ իշխանությունները շարունակում են բանտերում պահել 14 քաղբանտարկյալների:

Վահագն Հովակիմյան -

<http://www.armtimes.com/5685>

Նոր «փետրվարի 26». FIDH-ը միացավ Համաժողովրդական պայքարին

8 April 2010

Zhamanak.com

Քրիստինե Խանումյան



Հայաստանի ազատասեր ժողովուրդ, դուք մենակ չեք

Մերժ Սարգսյանը, թերեւս, դեռ երկար կզոջա այն մասին, որ ամեն ինչ արել է, որպեսզի Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի 37-րդ համաժողովն անցկացվի հենց Երեւանում:

Ամենայն հավանականությամբ, Սարգսյանը երեկվա մասին կզոջա ճիշտ այնպես, ինչպես 2008-ի փետրվարի 26-ից հետո, երբ ի պաշտպանություն իրեն կազմակերպված հանրահավաքի մասնակիցները տասնյակներով լքեցին Հանրապետության հրապարակը եւ միացան Ազատության հրապարակում հանրահավաք անցկացնող իրենց քույրերին եւ եղբայրներին: Այն, ինչ տեղի ունեցավ երեկ Մատենադարանի մոտ՝ հիշեցրեց փետրվարի 26-ը:

Մատենադարանի մոտ սկսված հանրահավաքը կեսից անսպասելի ընթացք ունեցավ, քանի որ հանրահավաքի մասնակիցներին անակնկալ կերպով միացան FIDH համաժողովի մի քանի տասնյակ մասնակից իրավապաշտպաններ՝ կազմակերպության նախագահ տիկին Սուեր Բելասենի գլխավորությամբ: Նրանք, ովքեր, ըստ իշխանությունների սպասելիքների, պետք է լեգիտիմացնեին իրենց, ավելի խայտառակ կացության մեջ գցեցին իշխանություններին: Իրավապաշտպանները ոչ միայն ծափերով ու վեր պարզած բռնցքներով եկան հարթակ, այլ նաեւ նրանցից ոմանք էլույթներ ունեցան՝ ՀՀ իշխանություններից պահանջելով ազատ արձակել բոլոր քաղբանտարկյալներին: Օտարերկրյա իրավապաշտպանների հայտնվելը իրարանցում առաջացրեց Մատենադարանի հարակից տարածքում. իրավապաշտպանները հարթակ եկան ուղիղ «Արամ Խաչատրյան» համերգասրահից, որտեղ տեղի էր ունենում համաժողովի բացումը: Վերջիններիս ուղեկցում էին ընդդիմության ակտիվիստները, ովքեր առավոտվանից ակցիա էին կազմակերպել համերգասրահի մոտ: Մարդիկ ավելի քան 15 բուլե բուռն ծափերով եւ վանկարկումներով ողջունեցին իրավապաշտպաններին: Նրանցից առաջինը էլույթ ունեցավ նիգերիացի իրավապաշտպան Իբուցբուկբու Օբաբուենի Էզակիեն: «Ես եկա այստեղ եւ տեսա մարդկանց, ովքեր պայքարում են արդարության համար: Ես դատապարտում եմ այն, որ կարգին մարդիկ, լավ մարդիկ ինչպիսիք մենք եւ դուք եք, կարող ենք կանգնել, լռել եւ չպայքարել: Կա միայն մեկ արդարություն, եւ այդ արդարությունը մեր բոլորիս համար է: Որեւէ մեկին վնասելը մեզ համար հավասարազոր է բոլորին վնասելուն: Ես ինքս եղել եմ քաղբանտարկյալ, ես ինքս զրկված եմ եղել արդարադատությունից, եւ դրա համար ես երդվել եմ, որ իմ մնացած ողջ կյանքում պայքարելու եմ արդարության համար: Գալով այստեղ եւ տեսնելով այս հավաքված մարդկանց, ովքեր պայքարում են արդարադատության համար, արդարության համար, ես պահանջում եմ այս իշխանություններից անմիջապես ազատ արձակել քաղբանտարկյալներին», - հայտարարեց Էզակիեն՝ հայերեն վանկարկելով. «ազա-տու-թյուն»: FIDH նախագահ տիկին Բելասենը իր խոսքը սկսեց հայտարարելով, որ իրենք բոլորը Հայաստան են եկել հանուն քաղբանտարկյալների ազատության: «Բարեկամներ, Մարդու իրավունքների լիգայի դաշնությունը իր ողջ կազմով ձեզ հետ է: Նրանցից յուրաքանչյուրը ներկայացնում է աշխարհի որեւէ երկրի լիգա, եւ նրանցից յուրաքանչյուրն առանձին-առանձին կասեն, որ իրենք ձեզ հետ են: Մենք պահանջում ենք բանտարկյալների ազատ արձակումը: Ազատություն (հայերեն), հիմա, ազատություն, հիմա: Հիմա, հիմա (հայերեն)», - հանրահավաքի մասնակիցներին դիմեց տիկին Բելասենը: Իրանցի հայտնի իրավապաշտպան, Նոբելյան մրցանակի դափնեկիր Շիրին Էբադին հայտարարեց, որ իրենք բոլորը իրենց «հայ հայրենակիցների» հետ են, եւ եկել են աշխարհի տարբեր երկրներից եւ հավաքված մարդկանց ձայնը բարձրացնելու են ամբողջ աշխարհում: «Դուք՝ Հայաստանի ազատասեր ժողովուրդ, իմացեք, որ մենակ չեք: Այստեղ են 151 երկրների իրավապաշտպանները, եւ բոլորը միասին ձեզ հետ բարձրացնում են իրենց բողոքի ձայնը: Մենք՝ 151 երկրներից եկած իրավապաշտպաններս, ձեզ հետ ձեռք ձեռքի բռնած կազմվելու ենք մի շղթա, որպեսզի ձեր ձայնը ամբողջ աշխարհով տարածվի: Մենք՝ 151 երկրների ներկայացուցիչներս, ովքեր այսօր այստեղ ենք, մեզանից շատերը

Ժամանակին եղել են քաղաքատարկյալներ: Ես ինքս էլ քաղաքատարկյալ եմ եղել եւ շատ լավ հասկանում եմ, թե ինչ են իրենցից ներկայացնում քաղաքատարկյալները, եւ այս պահին պահանջում եմ, որպեսզի առանց նախապայմանների բոլոր քաղաքատարկյալները ազատ արձակվեն: Ազատություն (հայերեն)», - հայտարարեց տիկին Էբադին: Պաղեստինցի իրավապաշտպան Ռաժի Սուվարին հայտարարեց, որ «ոչ ոք ավելի լավ չգիտի, թե ինչ է նշանակում բռնաճնշումներ, ինչպես այդ բռնաճնշումների գոհերը»: «Մենք մեր համերաշխությունն ենք հայտնում ձեզ բոլորիդ, ովքեր որ պայքարում են բռնաճնշումների դեմ: Մարդու իրավունքների պաշտպանները ոչ մտավորական են, ոչ էլ գիտնական, նրանք ձեր նման պայքարողներ են: Մենք եկել ենք այստեղ Հայաստան՝ մեր համերաշխությունը հայտնելու համար այն արդար պայքարին, որ դուք տանում եք ձեր արդար դատը պաշտպանելու համար: Եվ իմացեք, դուք, որ այստեղ հավաքված եք, վաղը դուք կլինեք, իսկ նրանք, ովքեր այսօր իշխում են, նրանք կլինեն անցյալում: Ազատություն Հայաստանին, ազատություն Պաղեստինին», - հայտարարեց Սուվարին: Ֆրանսիացի իրավապաշտպան Ժան Պիեր Դյուբուան էլ նշեց, որ ինչպես որ Ֆրանսիան միշտ աջակցել է Հայաստանին՝ Ցեղասպանության ճանաչման հարցում, այնպես էլ կաջակցի մարդու իրավունքների պաշտպանության հարցում: «Մենք ունենք մեկ պահանջ՝ արդարություն Ցեղասպանության գոհերի համար եւ արդարություն՝ հանուն ազատության պայքարողների համար: Պահանջում ենք այդ արդարությունը հենց հիմա, մենք պահանջում ենք բոլոր քաղաքատարկյալների ազատ արձակումը, ինչպես այստեղ, այնպես էլ՝ ամբողջ աշխարհում: 200 տարուց ավելի է, ինչ ֆրանսիական հեղափոխությունը հաստատել է եղբայրության, ազատության եւ հավասարության սկզբունքները, եւ մենք պահանջում ենք, որ այսօր բոլոր 14 քաղաքատարկյալները ազատվեն եւ օգտվեն նույն իրավունքներից, ինչ որ բոլորը: Ազատություն (հայերեն)», - հայտարարեց Դյուբուան:

Իշխանությունը շարունակում է

ժողովրդի դեմ պայքարը

Մինչ միջազգային իրավապաշտպանները կգային հարթակ եւ «կխառնեին» հանրահավաքի նախապես որոշված ծրագիրը, արդեն ելույթ էին ունեցել Ալեքսանդր Արզումանյանի կինը՝ Մելիսա Բրաունը, Երեւանի նախկին քաղաքապետ Վահագն Խաչատրյանն ու նախկին վարչապետ Հրանտ Բազրատյանը: Խոսելով քաղաքատարկյալների կանանց վիճակից՝ Մելիսա Բրաունը ողջունեց այդ քաջ կանանց եւ նրանց քաջ ամուսիններին: Վահագն Խաչատրյանը անդրադարձավ գազի գնի անհիմն բարձրացմանը, եւ հայտարարեց, որ ինչքան էլ մտածել են այն հարցի շուրջ, թե ի վերջո ինչու են իշխանությունները գնացել այդ քայլին, այդպես էլ որեւէ հիմնավոր պատճառ չեն գտել: «Եկել ենք եզրակացության, որ իշխանությունը շարունակում է իր պատերազմը սեփական ժողովրդի դեմ: Այդ պատերազմը, որ վերսկսել էր երկու տարի առաջ՝ նախագահական ընտրությունների օրը, շարունակել մարտի 1-ով, ձերբակալություններով, դատական նիստերով, այսօր շարունակում է տնտեսական դաշտում: ...Այս ամենը շարունակվելու է այնքան ժամանակ, քանի դեռ մենք հանդուրժում ենք, իշխանությունը պարզապես մեր համբերությունն է փորձարկում, թե որքան կարող ենք մենք դիմանալ: Դիմացանք մի գնի բարձրացմանը, դիմացանք հաջորդին, հիմա սրան, եթե շարունակենք նստել տներում, եթե չփորձենք պայքարել, այդպես շարունակվելու է», - նշեց Խաչատրյանը: Հրանտ Բազրատյանն էլ անդրադարձավ կոնկրետ «ՀայՌուսգազարդի» եւ նրա տնօրեն Կարեն Կարապետյանի գործունեությանը՝ թվերով ապացուցելով, որ գազի գինը անհիմն բարձրացրեց այդ

կազմակերպությունը, չհիմնավորված եւ անարդյունավետ ծախսեր է անում, որոնք հասնում են մի քանի հարյուր միլիոն դրամի:

Հ.Գ. Նշենք, որ երեկվա հանրահավաքը աչքի ընկավ նաեւ նրանով, որ Մատենադարանին հարակից տարածքում գրեթե ոստիկաններ չկային: Այս հանգամանքը այնքան անսպասելի էր, որ երեկ ժամեր շարունակ դարձել էր մարդկանց խոսակցության թեման: Ըստ երեւոյթին, իշխանությունները այնքան էին վախեցած այդքան մեծ թվով իրավապաշտպանների ներկայությունից, որ նույնիսկ ոստիկաններին էին արգելել դուրս գալ փողոց:

<http://www.zhamanak.com/article/14575/article/14598/>

Հարվածեցին FIDH-ի իրավապաշտպանի աչքի առաջ 17:51 | ԱՊՐԻԼ 07, 2010 | ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Պարզվում է՝ «Էրեբունի» հյուրանոցում խիստ դյուրագրգիռ են ընդդիմությանը հիշեցնող յուրաքանչյուր առարկայի նկատմամբ, իսկ ընդդիմադիրների նկատմամբ գրեթե թշնամաբար են տրամադրված:

Այսօր Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի՝ FIDH-ի համաժողովի ընթացքում «Էրեբունի» հյուրանոցի անվտանգության աշխատակիցների ուշադրությունը կենտրոնացել էր «Ազատություն 14 քաղբանտարկյալներին» պաստառի վրա: Այն ակտիվիստներ Իգաբելլա Սարգսյանը եւ Լալա Ասիկյանը զգուշությամբ փակցրել էին պատին եւ ստորագրություններ էին հավաքում քաղբանտարկյալների ազատ արձակման համար: Անվտանգության աշխատակիցները նախ պահանջեցին փոխել պաստառի տեղը, որին ենթարկվեցին ստորագրություն հավաքողները, սակայն դա չբավարարեց նրանց:

Սպասելով, հարմար պահի՝ անվտանգության երեք աշխատակիցները՝ մեկ կին եւ երկու տղամարդ որոշեցին ուժի կիրառմամբ ազատվել «վտանգ» սպառնացող պաստառից:

«Նրանք հարձակվեցին մեր վրա, դեմքիս եւ ձեռքիս հարվածելով պատից պոկեցին պաստառը եւ տարան», - «Ա1+»-ին պատմեց Իգաբելլա Սարգսյանը:

Մեզ չէր հաջողվել նկարահանել նրան հարվածելու պահը, սակայն, երբ Իգաբելլայի ձայնը լսելով դուրս եկանք, նրա վրա հարձակվողները դեռ չէին հասցրել հեռանալ:

Մեր տեսախցիկը տեսնելով՝ Հյուրանոցի անվտանգության աշխատակիցները սկսեցին վազել եւ փակվեցին կողքի սենյակում՝ ձեռքով փակելով տեսախցիկը:

Դեպքը տեղի էր ունեցել FIDH-ի մի քանի իրավապաշտպանների աչքի առաջ, որոնցից մի տարեց կինը դուռը իր դեմքին փակող անվտանգության աշխատակիցներին անզերեւոյթ ասում էր. «Դուք չպետք է այդպես վարվեիք»:

Իգաբելլա Սարգսյանը մեզ հայտնեց, որ տեղի ունեցած հանցագործության առիթով պատրաստվում է հաղորդագրություն ներկայացնել ՀՀ ոստիկանություն:

Ի դեպ, Հայ ազգային կոնգրեսի երիտասարդներին, որոնք ապրիլի 7-ի տոնի առթիվ քաղաքատարկյալների եւ մարտի 1-ի 10 զոհերի հարազատների անունից ցանկանում էին ծաղիկներ փոխանցել FIDH-ի կին իրավապաշտպաններին, թույլ չտրվեց մտնել ներս: «Մասուն Միքայելյանի լուսանկարով չի կարելի», - երիտասարդներին ասացին հյուրանոցի անվտանգության աշխատակիցները:

Միայն FIDH-ի Հայաստանի ներկայացուցիչների միջամտությունից հետո երիտասարդներին, այն էլ անվտանգության ծառայության աշխատակիցների ուղեկցությամբ, թույլ տվեցին բարձրանալ կոնֆերանսի դահլիճ եւ ծաղիկներ բաժանել:

Իսկ թե ինչո՞վ է պայմանավորված ընդդիմության ներկայացուցիչների նկատմամբ «Էրեբունի» հյուրանոցի աշխատակիցների վերաբերմունքը, նույն հյուրանոցի աշխատակիցները մեզ խորհուրդ տվեցին պարզել, թե ով է հյուրանոցի իրական տերը:

Ի դեպ, այդ շենքում է գտնվում Ռոբերտ Քոչարյանի գրասենյակը:

Ավելի ուշ մեզ հայտնի դարձավ, որ Իգաբելա Սարգսյանին հարվածած երիտասարդը բերման է ենթարկվել ոստիկանություն:

<http://alplus.am/am/politics/2010/04/7/attack>

Ազատություն՝ քաղաքատարկյալներին



April 7, 2010

Հայկական ժամանակ

Երեկ «Արամ Խաչատրյան» մեծ համերգասրահում մեկնարկեց Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի 37-րդ համագումարը, որի շրջանակներում Երեւանում անցկացվում է նաեւ «Արդարադատություն. Անկախ դատարանի առջեւ արդյունավետ պաշտպանության իրավունք. Նոր մարտահրավերներ» թեմայով համաժողովը:



Այն ինչ տեղի ունեցավ համաժողովի ընթացքում՝ համերգասրահում, եւ դրանից դուրս՝ ֆիլիարմոնիայի շենքի մոտ, դժվար է բառերով նկարագրել:

Դեռեւս համաժողովի մեկնարկից առաջ ակնհայտ էր, որ ՀՀ իշխանությունները բոյկոտել են այս միջոցառումը: ՀՀ

պաշտոնյաներից համաժողովին մասնակցում էր միայն ՄԴ նախագահ Գագիկ Հարությունյանը, ով բացման արարողության ժամանակ ելույթով պետք է հանդես գար, նրան ուղեկցում էին ՄԴ անդամներ Վլադիմիր Հովհաննիսյանը եւ Կիմ Բալայանը: Նշված երեքից բացի համաժողովին մասնակցում էր նաեւ ՀՀ արդարադատության նախարար Գեորգ Դանիելյանը, ով նույնպես ելույթով պետք է հանդես գար: Նրա դեմքի արտահայտությունը հուշում էր, որ նրանք պարտադրված են այդտեղ եւ երագում են այդտեղից դուրս պրծնելու մասին: Թերեւս, մթնոլորտն էր նրանց համար անտանելի, որովհետեւ այն ներծծված էր ազատության շնչով, որովհետեւ նույն դահլիճում երկու հարյուրից ավել իրավապաշտպաններ էին հավաքված, որոնց մեծ մասը մարդու իրավունքների համար պայքարելու արդյունքում ամիսներ կամ տարիներ անցկացրել է բանտերում, բայց չի դադարել պայքարել:

Ինչեւէ, համաժողովի հենց սկզբում ՄԻՄՖ նախագահ Սուեր Բելասսենն իր բացման խոսքում հրապարակեց երեք կետից բաղկացած իրենց պահանջները՝ ուղղված ՀՀ իշխանություններին՝ «Անհապաղ ազատ արձակել քաղբանտարկյալներին, եթեր տրամադրել «Ա1+» հեռուստաընկերությանը եւ Մարտի 1-ին անհամաչափ ուժի կիրառման արդյունքում տասը զոհերի սպանության հանգամանքների անկախ եւ անկողմնակալ քննություն իրականացնել»: Ավելին, իր պահանջի լրջությունը եւս մեկ անգամ ընդգծելու համար ՄԻՄՖ նախագահն ասաց, որ իրենք հետամուտ են լինելու, որպեսզի իրենց պահանջները կատարվեն եւ հույս հայտնեց, որ ՀՀ իշխանությունները դրանց դրական կարձագանքեն: Այս խոսքերից հետո դահլիճում ծափահարությունների ալիք բարձրացավ:

Իսկ երբ ելույթի համար ամբիոնի մոտ հրավիրվեց Գագիկ Հարությունյանը, դահլիճում իրարանցում սկսվեց: Գյումրիի «Ասպարեզ» ակումբի նախագահ Լեւոն Բարսեղյանը նրա դիմաց պարզեց «Ազատություն 14 քաղբանտարկյալներին» պաստառը (անգլերենով գրված), դահլիճի մյուս կողմում պարզված էր քաղբանտարկյալների նկարներով պաստառը՝ «FREEDOM» (ազատություն) մակագրությամբ: Իսկ նախկին քաղբանտարկյալ Վարդգես Գասպարին անգլերեն վանկարկում էր. «Ամոթ, ամոթ ձեզ, դուք իրավունք չունեք խոսել»: Միջազգային իրավապաշտպաններից մի քանիսը հասկանալով, թե դահլիճում ինչ է կատարվում, որպես բողոքի ակցիային համերաշխություն, դուրս եկան դահլիճից՝ չցանկանալով լսել Հարությունյանի ելույթը: Մի քանի րոպե Գագիկ Հարությունյանը կարկամել էր, ի վերջո նա, կարծես իր մեջ ուժ գտնելով, սկսեց խոսել: Նրա խոսքն ավելի կարճ տևեց, քան իր կարկամած վիճակը: Հարությունյանի ամբիոնից հեռանալուց հետո պաստառները հավաքվեցին: Ընդմիջմանը իրավապաշտպանները դուրս եկան եւ խառնվեցին դրսում տեղի ունեցող բողոքի ցույցին:

Համաժողովի երկրորդ մասում Գեորգ Դանիելյանը դահլիճում մնացած միակ ՀՀ պաշտոնյան էր: Արդարադատության եւ մարդու իրավունքների, իշխանությունների անպատժելիության կործանարար հետեւանքների վերաբերյալ ելույթներից հետո, ի վերջո, հասավ նաեւ Գեորգ Դանիելյանի հերթը: Բայց նիստը նախագահող ՄԻՄՖ փոխնախագահ Սորայա Գուտիերեսը նրան միանգամից խոսքի իրավունք չտվեց, նա մինչ այդ հայտարարեց. «Մենք ողջունում եւ մեր աջակցությունն ենք հայտնում դրսում ընթացող բողոքի ցույցին եւ մեր համերաշխությունն ենք հայտնում նրանց պայքարին»: Դահլիճն արձագանքեց ծափահարություններով: Դրանից հետո նախագահողը ամբիոնի

մոտ հրավիրեց Գեորգ Դանիելյանին: Այս անգամ արդեն Լեւոն Բաքսեղյանը պարզեց «Ազատություն 14 քաղբանտարկյալներին» պաստառը, իսկ Վարդգես Գասպարին սկսեց անզլերեն ամոթանքներ տեղալ: Գեորգ Դանիելյանն ակնհայտ իրեն նվաստացած էր զգում, եւ դիմելով նախագահողին՝ ասաց, որ համաժողովում ելույթով հանդես գալը իր նախաձեռնությունը չի եղել, այլ միջոցառման կազմակերպիչներին: Ինչեւէ, մի քանի րոպե ամոթանք լսելուց հետո Դանիելյանը ցեղասպանության թեմայով ելույթ ունեցավ եւ աննկատ հեռացավ:



Համաժողովի երեկվա նիստը եզրափակեց ՄԻՄՖ պատվավոր նախագահ Պատրիկ Բողունը, ով հայտարարեց, որ պետք չի մոռանալ, որ իրենց համաժողովը Հայաստանում է անցկացվում եւ պարզաբանեց. «Մենք մեր համաժողովն անցկացնելու համար Հայաստանն ենք ընտրել, որովհետեւ հետեւում ենք այստեղի գործընթացներին: Իսկ եթե հետեւում ենք, ապա դա նշանակում է, որ այստեղ ամեն ինչ

նորմալ չէ, այստեղ գործ կա անելու: Հայաստանում արդարադատությունը չի համապատասխանում մարդու իրավունքների եվրոպական չափանիշներին, այստեղ մարդու իրավունքների հետ կապված խնդիրներ կան»: Պատրիկ Բողունը եւս մեկ անգամ կրկնեց ՄԻՄՖ նախագահի՝ ՀՀ իշխանություններին հղած պահանջը եւ ընդգծեց, որ դա իրենց բոլորի պահանջն է: «Իսկ այժմ մենք բոլորս այս դահլիճից դուրս կգանք եւ կմոտենանք այն մարդկանց, ովքեր առավոտվանից այնտեղ բողոքի ցույց են անում: Մենք մեր աջակցությունը կհայտնենք նրանց: Այդ ցույցը, մեր բոլորի պայքարի իմաստն է, անկախ նրանից, թե մենք որ երկիրն ենք ներկայացնում եւ որտեղ ենք պայքարում», - հայտարարեց Պատրիկ Բողունը: Նրա խոսքերից հետո դահլիճում ծափահարությունների հերթական ալիքը բարձրացավ, իսկ Նիգերիան ներկայացնող իրավապաշտպանը, ով ընդմիջմանն ակտիվ մասնակցել էր բողոքի ցույցին եւ դահլիճ էր եկել Բանտարկյալի զուլավոր գլխարկով հոտնկայս սկսեց վանկարկել. «Ազատություն, ազատություն»: Այսպիսով, համաժողովի մասնակիցները դուրս եկան դահլիճից եւ միացան դրսում ընթացող բողոքի ցույցին:

«Ազատություն», «Liberty»

FIDH-ի կազմակերպած համաժողովին մասնակցող հայաստանյան պաշտոնյաները եւ իրավապաշտպանները «Արամ Խաչատրյան» համերգասրահի մտան հետեւի մուտքից, թերեւս, որպեսզի չհանդիպեն այնտեղ բողոքի ակցիա նախաձեռնած քաղաքացիներին: Ի տարբերություն նրանց, միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների ներկայացուցիչները ոչ միայն համերգասրահի մտան Բազմության միջով, այլեւ, չնայած այն հանգամանքին, որ համաժողովը մեկնարկել էր, դահլիճ մտան միայն բողոքի ակցիայի մասնակիցների հետ զրուցելուց հետո: Իսկ դրսում հավաքվածները, որոնց թվում էին ՀԱԿ ներկայացուցիչներ, Մարտի 1-ի զոհերի ծնողները, իրենց ձեռքին ունեին Մարտի 1-ի զոհերի նկարները: Երիտասարդների մի մասը կրում էր Բանտարկյալների հագուստներ եւ ձեռնաշղթաներ, մյուս մասը՝ քաղբանտարկյալների նկարներով վերնաշապիկներ: Բոլորը միասին վանկարկում էին. «Մերժիկ, հեռացիր», «Ազատություն», «Պահանջում ենք արդարություն»: Լսելով այդ վանկարկումները եւ

տեսնելով «FIDH, մի դավաճանի դեմոկրատիային», «FIDH, դու թույլ ես տալիս ռեժիմին պահել 14 քաղբանտարկյալ» եւ այլ պաստառները, եւ փոքր ինչ նեղվելով այդ պաստառների բովանդակությունից, իրավապաշտպանները միանում էին նրանց, նրանց հետ հայերեն եւ անգլերեն լեզուներով «Ազատություն» վանկարկում, լուսանկարվում, ապա միայն մտնում դահլիճ: Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի նախագահ Սուեր Բելասսենը, Մենեգալի նախկին նախագահ Շիրին Էբադին, Միջազգային քրեական դատարանի գլխավոր դատախազ Աբդու Դիուֆը, Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի գործադիր տնօրեն Անտուան Բեռնարը եւ տասնյակ այլ իրավապաշտպաններ մոտեցան զոհերի նկարները բռնած քաղաքացիներին, իրենց համերաշխությունը հայտնեցին, գրկեցին ու ցավակցեցին Մարտի 1-ի զոհերի ծնողներին: Նիգերիայի իրավապաշտպան Իբուչուկու Օհաբունենի Էզիկեն իր ձեռքերին անցկացրեց ձեռնաշղթան եւ բանտարկյալի գլխարկը հագած նկարվեց բոլորի հետ, ապա վստահեցրեց. «Մենք այստեղ ենք, որ առաջին հերթին ձեզ լսենք, նրանց ովքեր անարդարության մեջ են: Մենք ձեր կողքին ենք»: Նա բանտարկյալի գլխարկով մտավ դահլիճ: Բոլորին ելույթով դիմեց նաեւ FIDH-ի Կոլումբիայի գլխավոր քարտուղար Լիզերմո Պերեսը: «Մենք այստեղ ենք ձեզ միանալու, ձեր արդարության պայքարի համար: Եվ մենք այստեղ ենք քաղբանտարկյալներին ազատ արձակելու համար: Ժողովրդավարության համար ձեր պայքարը մեր պայքարն է, եւ մենք այստեղ ենք ձեզ հետ լինելու համար», - դրսում հավաքված բազմությանը վստահեցրեց Պերեսը: Համաժողովի ավարտից հետո երիտասարդները միջազգային իրավապաշտպաններին հրավիրեցին մասնակցելու հանրահավաքին, որն արդեն մեկնարկել էր Մատենադարանի մոտ: Բազմաթիվ հյուրեր ընդունեցին հրավերը եւ «շղթայված» երիտասարդների ու ակցիայի մյուս մասնակիցների հետ «Ազատություն» վանկարկելով քայլեցին դեպի Մատենադարան, որտեղ նրանց դիմավորեցին ծափերով: Ի դեպ, երեկվա ակցիայի ժամանակ որեւէ ոստիկան չկար Օպերայի մոտ:

Սյուզաննա Պողոսյան
<http://www.armtimes.com/5519>

ԼԱՎ ՄԱՐԴԻԿ ԶՊԻՏԻ ԼՈՒՆ

April 7, 2010

Aravot



Երեկ Մատենադարանի մոտ Հայ ազգային կոնգրեսի նախաձեռնած հանրահավաքը անսովոր ընթացք ունեցավ: Դրան մասնակցեցին Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) 37-րդ համաժողովի պատվիրակ իրավապաշտպանները: Առաջինը Մատենադարանի հարթակից խոսեց Նիգերիայի քաղաքացիական ազատության կազմակերպության ղեկավար Եզիկե Իբուկիուկու Օհաբուեյնայուն (նկար երկրորդ): Նա, որ եկել էր իր ազգային տարագով եւ բանտարկյալի «գոլավոր» գլխարկով, ձայն խնդրեց ու նախ՝ իր մայրենիով, ապա՝ անգլերենով ողջունեց հանրահավաքի մասնակիցներին: «Գալով այստեղ՝ ես տեսա այս հավաքը, մարդկանց, որոնք պայքարում են արդարության համար: Ես դատապարտելի եմ համարում, որ լավ մարդիկ, ինչպիսիք դուք եք, ինչպիսին մենք ենք, կարող ենք կանգնել, լռել եւ չպայքարել: Կա միայն մեկ արդարություն, եւ այդ արդարությունը բոլորիս համար է: Որեւէ մեկին վնասելը մեզ համար հավասարազոր է վնասել բոլորին:

Ես անձամբ եղել եմ քաղբանտարկյալ, զրկված արդարադատությունից: Եվ դրա համար երդվել եմ՝ մնացած իմ ողջ կյանքում պայքարել արդարության համար: Եվ գալով այստեղ, տեսնելով այս հավաքված մարդկանց, որոնք պայքարում են արդարության համար, ես այս իշխանություններից պահանջում եմ՝ անհապաղ ազատ արձակել քաղբանտարկյալներին», - հայտարարեց նիգերիացի իրավապաշտպանը՝ հայերենով վանկարկելով «ազատություն» բառը:

<http://aravot.am/am/articles/politics/77212/view>

«ՓԵՏՐՎԱՐԻ 26»-2

7 April 2008

Aravot

FIDH-ի պատվիրակները եկել էին Մատենադարան, ինչպես իրենք ասացին՝ զորակցելու ՀՀ «ազատատենչ քաղաքացիներին»



Հայ ազգային կոնգրեսի երեկվա հանրահավաքը հիշեցրեց 2008թ. փետրվարի 26-ին Ազատության հրապարակում Համաժողովրդական շարժման բողոքի ակցիան, որին այն ժամանակ միացել էին Հանրապետության հրապարակում Սերժ Սարգսյանի հրավիրած հանրահավաքին հարկադրաբար մասնակցող ՀՀ հազարավոր քաղաքացիները, իսկ երեկ ցուցարարներին միացան Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) 37-րդ համաժողովի պատվիրակ իրավապաշտպանները՝ FIDH-ի նախագահ Սուեր Բելասենի գլխավորությամբ: Ընդդիմության երեկվա հանրահավաքը նախորդ զանգվածային միջոցառումներից, թերեւս, հենց նրանով էլ առանձնացավ, որ դրան մասնակցեցին աշխարհի 150

երկրներ ներկայացնող իրավապաշտպան տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչները, ինչը հանրահավաքի կազմակերպիչներին հարկադրեց սրբագրել իրենց «ռեզլամենտը». նախատեսված ոչ բոլոր ելույթները հնչեցին: Փոխարենը խոսեցին իրենք՝ օտարերկրյա իրավապաշտպանները, իսկ այն դրական էներգիան, որով լի էր երեկվա հանրահավաքը՝ պարզապես աննկարագրելի էր:

Բողոքի ակցիա՝ Օպերայի մոտ

Հիշեցնենք, որ մինչև հանրահավաքը՝ «Հայաստանի քաղբանտարկյալների եւ հալածյալների պաշտպանության կոմիտեի» նախաձեռնությամբ ՀԱԿ երիտթեւի ներկայացուցիչները բանտարկյալի «գոլավոր» հագուստով եւ անգլերեն լեզվով քաղբանտարկյալներին ազատ արձակելու եւ «Մարտի 1»-ի իրական պատասխանատուներին բացահայտելու եւ պատժելու պահանջով պաստառներով, նաեւ՝ քաղբանտարկյալների եւ մարտիմեկյան զոհերի լուսանկարները ձեռքներին՝ հավաքվել էին Օպերայի շենքի դիմաց, որտեղ «Արամ Խաչատրյանի» համերգասրահում ընթանում էր FIDH-ի 37-րդ համաժողովը: Դրա ընդմիջումներից մեկի ժամանակ համաժողովի պատվիրակները դուրս եկան դեպի ցուցարարները, որոնք նրանց ծրարներ փոխանցեցին: Ինչպես պարզվեց, ծրարում 2008թ. «Մարտի 1»-ի մասին պատմող տեսասկավառակ կար: Համաժողովի պատվիրակները, նաեւ FIDH-ի նախագահ Սուեր Բելասենը մոտեցան ցուցարարներին, գրկախառնվեցին զոհվածների հարազատների հետ, այնուհետեւ բռնկեցին վեր պարզելով՝ իրենց գորակցությունը հայտնեցին ակցիայի մասնակիցներին:

Հակառակ հյուրերի՝ ՀՀ ՄԴ նախագահ Գագիկ Հարությունյանը ակցիայի մասնակիցներից խույս տվեց ու շենք մտավ այլ դռնից:

Հանրահավաք՝ Մատենադարանի մոտ

Ավելի ուշ, Մատենադարանի մոտ, ՀԱԿ-ի հրավիրած հանրահավաքում ելույթ ունեցավ «Հայաստանի քաղբանտարկյալների կանայք» կազմակերպության ղեկավար, ՀՀ ԱԳ նախկին նախարար, նախկին քաղբանտարկյալ Ալեքսանդր Արզումանյանի տիկինը՝ Մելիսա Բրաունը: Նա ասաց, թե ինքն այլեւս քաղբանտարկյալի կին չէ, բայց ցավում եւ գորակցում է բոլոր այն կանանց, որոնց ամուսիններն ու որդիները դեռ անազատության մեջ են: «Մենք այսօր ունենք 14 քաղբանտարկյալներ եւ պիտի պայքարենք՝ մինչև վերջին քաղբանտարկյալը ազատ լինի, մեզ հետ լինի: Ես քաղբանտարկյալի կին չեմ, եւ եթե այսօր իմ իրավունքների համար չեմ պայքարում, պիտի ուրիշների իրավունքների համար պայքարեմ, որովհետեւ հասկանում եմ, թե ինչքան կարեւոր է մարդու իրավունքների պաշտպանների աշխատանքը», - ասաց նա՝ հավելելով, որ նախորդ օրը քաղբանտարկյալների հարազատները հանդիպել են FIDH-ի ներկայացուցիչների հետ, շատ ազատ եւ հանգիստ մթնոլորտում իրենց մտահոգություններն են հայտնել եւ խոստում ստացել, որ FIDH-ի համար կարեւորագույն հարցեր մնացին քաղբանտարկյալների ազատ արձակումն ու «Մարտի 1»-ի բացահայտումը: «Մենք մեծ հույս ունենք, որ նրանք իրենց խոսքին տեր կկանգնեն», - ասաց տիկին Բրաունը՝ մեկ անգամ եւս պահանջելով ազատ արձակել քաղբանտարկյալներին, բացահայտել «Մարտի 1»-ը:



Հանրահավաքում ՀԱԿ մամուլի խոսնակ Արման Մուսիսյանը միջոցառման մասնակիցների անունից ուղերձով դիմեց FIDH-ի համաժողովի մասնակիցներին՝ դատապարտել 2008թ. մարտի 1-2-ի դեպքերը եւ ջանքեր գործադրել Հայաստանում ժողովրդավարության ամրապնդման ուղղությամբ եւ չդառնալ իշխանությունների համար գործիք: Ուղերձում, այդուհանդերձ, շեշտված էր, որ միաժամանակ Երեւանում անցկացվող այդ համաժողովը հնարավորություն է՝ անդրադառնալու ՀՀ-ում մարդու իրավունքների խնդիրներին: Ա. Մուսիսյանը շեշտեց, որ նաեւ ՀՀ քաղաքացիների եւ ընդդիմության համատեղ պայքարի շնորհիվ FIDH-ը իր 37-րդ համաժողովի անունից երեկ եւս մեկ անգամ կոչ է արել ՀՀ իշխանություններին անհապաղ ազատ արձակել բոլոր քաղբանտարկյալներին եւ կրկնել «Մարտի մեկը» արդյունավետ հետաքննելու իր պահանջը:

ՀԱԿ-ը դիմեց Վարչական դատարան

Ընդդիմության երեկվա հանրահավաքում Հայաստանում գազի գնի բարձրացմանն ու գնաճին անդրադարձան ՀԱԿ-ի տնտեսական հանձնախմբի ներկայացուցիչներ՝ ՀՀ առաջին նախագահի՝ տնտեսական հարցերով նախկին խորհրդական Վահագն Խաչատրյանն ու ՀՀ նախկին վարչապետ Հրանտ Բազրադյանը:



Վ. Խաչատրյանը հանրահավաքի մասնակիցներին տեղեկացրեց, որ 7230 քաղաքացի արդեն միացել են գազի սակագնի թանկացման դեմ Հայ ազգային կոնգրեսի հայցադիմումին, որը երեկ արդեն ներկայացվեց Վարչական դատարան: Ի դեպ, ՀԱԿ-ի ներկայացուցիչները հայցադիմումի պատճենները ներկայացրել են նաեւ «ՀայՌուսգազարդ»-ին,

«Տրանսգազ» ընկերությանը, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին ու նաեւ ՀՀ ֆինանսների նախարարությանը: Ինչպես փոխանցում են լրատվական գործակալությունները, այդ հաստատությունների ընդհանուր բաժնի աշխատակիցները սկզբում զարմացել են՝ տեսնելով հայցադիմումների քանակը, ու տարակուսել, թե դրանք ինչպես են մուտքագրելու: Բայց ավելի ուշ, իմանալով, որ հայքը մեկն է, իսկ մյուսները միայն համահայցվորներ են, թեթեւացած շունչ են քաշել: Ի դեպ, Վարչական դատարանը 7 օրվա ընթացքում բոլոր 7230 համահայցվորներին պետք է տեղյակ պահի, թե հայքը վարույթ ընդունել է, թե՞ ոչ: Բայց վերադառնանք հանրահավաքում Վ. Խաչատրյանի ելույթին. իսկ նա ի պատասխան ՀՀ քաղաքացիների կողմից հնչող թերահավատ հարցադրումներին՝ բայց դատարանը կրավարարի՝ քաղաքացիների եւ ընդդիմության պահանջը, նկատեց, որ իրենք միամիտ չեն եւ առանձնակի հույսեր հայաստանյան դատարանների հետ չեն կապում: Նա շեշտեց, որ

հիմա խնդիրն այս է՝ մենք պատրաստ ենք պայքարել մեր իրավունքների, արժանապատվության, ազատ ապրելու համար: «Եթե նստենք տանն ու չպայքարենք՝ գների աճը շարունակություն է ունենալու, ինչպես եղել է նախկինում, երբ մեր հասարակությունը դա հանդուրժել է», - հայտարարեց Վահագն Խաչատրյանը՝ հավելելով, որ դատարանները մի օր ստիպված են լինելու արդար որոշումներ կայացնել:

FIDH-ի պատվիրակները նաեւ ելույթ ունեցան

Հանրահավաքում նախատեսված ելույթները սահմանափակվեցին, երբ Օպերայի «Արամ Խաչատրյան» համերգասրահից, որտեղ Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) 37-րդ համաժողովն էր ընթանում, պատվիրակ իրավապաշտպանները միացան հանրահավաքի մասնակիցներին: Հանրահավաքի մասնակիցները նրանց բոլորին դիմավորեցին ջերմ ծափողջույններով եւ անգլերենով ազատություն՝ «freedom» բացականչություններով:

Հանրահավաքում ելույթ ունեցավ FIDH-ի նախագահ Սուրբ Բելասենը, որին հավաքվածները շատ երկար ժամանակ ծափահարեցին: Մարդկանց ոգևորությունը չափազանց մեծ էր, իսկ տիկին Բելասենը երեկ երեք անգամ մոտեցավ բարձրախոսին: «Սիրելի բարեկամներ, ողջ աշխարհը մարդու իրավունքների մարտիկների միջոցով այսօր ներկա է այստեղ: Մենք բոլորս այստեղ ձեզ հետ ենք քաղբանտարկյալների ազատության համար: Սիրելի բարեկամներ, մարդու իրավունքների լիզայի դաշնությունը իր ողջ կազմով ձեզ հետ է: Նրանցից յուրաքանչյուրը, որ ներկայացնում է աշխարհի մարդու իրավունքների պաշտպանության որեւէ լիզա, ուզում է ասել, որ ձեզ հետ են: Մենք պահանջում ենք բոլոր քաղբանտարկյալների ազատ արձակում», - իր բոլոր երեք ելույթները տիկին Բելասենը եզրափակում էր հայերեն «ազատություն» վանկարկելով: Նա նաեւ արձագանքեց ներկաների՝ «հիմա» պահանջին եւ միացավ դրան, բայց անգլերենով՝ «freedom now»:

Հետո նա ձայնը փոխանցեց իրանցի իրավապաշտպան, խաղաղության Նոբելյան մրցանակակիր Շիրին Էրադին. «Սիրելի հայեր, հավատացեք, որ մենք ձեզ հետ ենք: Մենք եկել ենք աշխարհի տարբեր երկրներից եւ մենք ձեզ հետ ձեռք ձեռքի բռնած կազմելու ենք մի շղթա, որպեսզի ձեր ձայնը լսեն ամբողջ աշխարհում: Դուք՝ Հայաստանի ազատատենչ ժողովուրդ, իմացեք, որ մենակ չեք: Այստեղ են աշխարհի 150 երկրների իրավապաշտպանները, ու բոլորը ձեզ հետ միասին բողոքի ձայն են բարձրացնում: Մեզանից շատերը, որ ներկա են այստեղ, եղել են քաղբանտարկյալներ: Ես ինքս նույնպես քաղբանտարկյալ եմ եղել, եւ մենք շատ լավ հասկանում ենք քաղբանտարկյալները իրենցից ինչ են ներկայացնում, եւ այս պահին պահանջում եմ՝ առանց նախապայմանի բոլոր քաղբանտարկյալներին ազատ արձակել»:

Խոսեց նաեւ Մարդու իրավունքների պաշտպանության ֆրանսիական լիզայի նախագահ Ժան Պիեր Դյուբուան. «Սիրելի բարեկամներ, մեր լիզան ուրախ է այսօր լինել ձեր կողքին, որովհետեւ մենք գիտենք հայերի խնդիրները, եւ ֆրանսիացիները համերաշխ են հայ ժողովրդի հետ եւ՝ Ցեղասպանության ճանաչման, եւ՝ այսօր ազատության ձեռքբերման հարցում: Մենք ունենք մեկ պահանջ՝ արդարություն Ցեղասպանության գոհերի համար, արդարություն՝ հանուն ազատության պայքարողների, բոլոր նրանց համար, ովքեր վնասվել եւ սպանվել են: Մենք այսօր միասին ենք՝ պահանջելու

քաղաքականությանը, որպեսզի որեւէ երկրում ոչ մի քաղաքականական չլինի, որ լինի ազատություն՝ աշխարհի բոլոր քաղաքացիների համար»:

«Հայաստանի իշխանությունները ծրագրել էին, որ FIDH-ի համաժողովի անցկացումը Հայաստանում թույլ կտա այդ ֆորումը դարձնել իշխանությունների պրոպագանդայի գործիք, բայց մենք կարողացանք տապալել նաեւ այդ ծրագիրը: Ահա սա է զանգվածային միջոցառումների, մեր ժողովրդի հետեւողական պայքարի ուժը», - հայտարարեց Լեւոն Զուրաբյանը:

Երեկ հանրահավաքը եզրափակեց ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը: Նրա ելույթը կարդացեք «Առավոտի» 9-րդ էջում: Հանրահավաքին հաջորդեց երթը, որն այս անգամ անցավ սիրավիր ոստիկանների ուղեկցությամբ:

ՆԱԻԲԱ ՄԱՍԻԿՈՆՅԱՆ

<http://aravot.am/am/articles/politics/77214/view>

**ՄԻՄԾ-ի համաժողովը Երեւանում շարունակում է իր աշխատանքը
07.04.2010**

Radio Free Europe / Radio Liberty

Տաթևիկ Լազարյան

Երեւանում չորեքշաբթի օրը աշխատանքը շարունակեց Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) համաժողովը: Հայաստանյան ընդդիմությունը, ի տարբերություն համաժողովի բացման օրվան, «Մարիոթ» հյուրանոցի [որտեղ ընթանում է համաժողովը] մոտ էր եկել առանց ֆեդերացիան քննադատող պաստառների: Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի նախագահ Սուրբ Բելասենը եւ ֆեդերացիայի համաժողովի այլ մասնակիցները, հիշեցնենք, երեկ մասնակցեցին ընդդիմության հանրահավաքին: Բելասենը, Մարդու իրավունքների ֆրանսիական լիգայի նախագահ Ժան-Պյեր Դյուբուան, իրանցի իրավապաշտպան, Խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր Շիրին Էֆադին ելույթներ ունեցան հանրահավաքում:

«Իրենց գործնական մոտեցումը եւ աջակցելը քաղաքականությանը գործին բերեց այն վիճակին, որ մենք այսօր իրենց ասում ենք՝ շնորհակալություն», - «Ազատություն» ռադիոկայանին ասաց Հայ ազգային կոնգրեսի ներկայացուցիչ Արամ Մանուկյանը՝ շարունակելով. - «Բոլոր պաստառները փոխվեցին. եթե երկու օր առաջ բողոքում էին, այսօր ասում ենք՝ շնորհակալություն»:

Հայ Ազգային Կոնգրեսի տարածած հաղորդագրության համաձայն, երեկվա «բազմահազարանոց հանրահավաքը եւ երթը, ինչպես նաեւ մի շարք այլ հանրային միջոցառումները անցել են անսովոր մթնոլորտում». - «Ավելի քան երկու տարվա ընթացքում առաջին անգամ դրանք չեն ուղեկցվել բազմաքանակ ոստիկանության ներկայությամբ, ոստիկանության կողմից սպառնալիքներով, ցուցարարների նկատմամբ ճնշումներով եւ սադրանքներով, ինչպես նաեւ քաղաքացիների ազատ կամքի նկատմամբ ապօրինի միջամտություններով»:

ՀԱԿ-ը սա բացատրում է Երեւանում անցկացվող Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի ֆորումի մեկնարկով. - «Իշխանությունները որոշել են դիմել էժանազին խորամանկության եւ միջոցներ ձեռնարկել, որ ֆորումի մասնակիցների համար տեսանելի չլինի բռնապետության իրական դեմքը»:

Ըստ ընդդիմության՝ այն, որ Ֆորումի անցկացման ժամանակաշրջանում իշխանությունները որոշել են կատարել իրենց սահմանադրական պարտականությունները, բացահայտեց մի քանի իրողություն. - «Ակնհայտ է, որ իշխանությունների մտահոգված են միայն դեմոկրատական իմիտացիոն քողածածկույթի ստեղծմամբ, բայց ոչ երբեք ժողովրդավարական ազատությունների ապահովման իրենց անմիջական պարտականություններով: Անվիճելի է, որ ընդդիմությունը եւ հասարակական կազմակերպությունները գործում են օրենքներին համապատասխան եւ ի վիճակի են սեփական ուժերով պահպանել հասարակական կարգը: Ակնհայտ է, որ երկու տարի շարունակ իշխանությունների եւ նրա կամակատար գործիք դարձած ոստիկանության նպատակը եղել է ոչ թե հասարակական կարգի պահպանումը, այլ համաժողովրդական շարժումը ճնշելու նպատակով սադրանքների եւ հալածանքների իրագործումը, այսինքն՝ հենց ոստիկանությունն է մշտապես հանդես գալիս հասարակական կարգը խախտողի դերում»:

Այսօրվա նիստում իր ելույթից հետո Հայաստանի վճռաբեկ դատարանի նախագահ Դավիթ Ավետիսյանը, ի պատասխան «Ազատություն» ռադիոկայանի հարցին, ասաց, թե չի համարում, որ Հայաստանում կան քաղաքական բանտարկյալներ:

«Քաղաքական բանտարկյալներ հասկացողությունը որպես իրավաբանական կատեգորիա ինձ համար հասկանալի չէ: Եվ ես չեմ կարծում, որ մեր դատարանի դատական ակտերով քաղաքական բանտարկյալներ կան բանտերում նստած: Նրանք դատապարտվել են կոնկրետ հանցագործություններ կատարելու համար», - ասաց նա:

«Մարիոթ» հյուրանոցում այսօր տեղի ունեցավ եւս մեկ միջադեպ. քաղաքացիական ակտիվիստ Իզաբելլա Սարգսյանին, ով հետընտրական իրադարձությունների կապակցությամբ ազատազրկվածներին ազատ արձակելու պահանջով ստորագրահավաք էր իրականացնում, անվտանգության աշխատակիցները քաշքշել էին ու պոկել պատիկ փակցված պաստառը:

«Պատրաստվում եմ գնալ ոստիկանություն, հայտարարություն տալ հանցագործության մասին», - «Ազատություն» ռադիոկայանին ասաց Սարգսյանը:

<http://www.azatutyun.am/content/article/2005652.html>

Սուեր Բելասեն. «Մենք չենք աջակցում ոչ մեկին եւ ոչ էլ մյուսին: Մենք այստեղ ենք մարդու իրավունքների պաշտպանության համար»



Իրավապաշտպաններ Սուեր Բելասենը (աջից) եւ Շիրին Էբադին ընդդիմության հանրահավաքում, 6-ը ապրիլի, 2010թ.

07.04.2010

Radio Free Europe / Radio Liberty

Իրինա Հովհաննիսյան

Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) նախագահ Սուեր Բելասենը չորեքշաբթի օրը «Ազատություն» ռադիոկայանի հետ բացառիկ հարցազրույցում կարծիք հայտնեց, որ Հայաստանում քաղաքատարկյալների առկայությունն անվիճելի է:

«Ես հանդիպել եմ հանրապետության նախագահին՝ շատ պարզ նպատակով՝ նա է, որ պետք է ինձ լսեր, եւ իմ ուղերձն էր՝ քաղաքական բանտարկյալների ազատ արձակումը, 2008-ի մարտի 1-ի իրադարձությունների հետեւանքով զոհվածների մահվան հանգամանքների հետաքննությունը, խոսքի ազատությունն ու արդարադատության իրականացումը, այս համատեքստում նաեւ անազատության մեջ գտնվողների նկատմամբ խոշտանգումների բացառումը: Ե՛վ հանրապետության նախագահի, ե՛ւ նաեւ ընդդիմության առաջնորդ Տեր Պետրոսյանի հետ մեր հանդիպումների նպատակը քաղաքական բանտարկյալների խնդիրն էր», - նշեց Բելասենը՝ ընդգծելով. - «Քաղաքատարկյալների առկայությունն անվիճելի է, ես ինքս եմ նրանց այցելել բանտերում, հանդիպել նրանց ընտանիքներին: Թե քանիսն են՝ հստակ չեմ կարող ասել, բայց նրանք գոյություն ունեն»:

FIDH-ի նախագահը հավելեց, որ ՀԱԿ-ի երեկվա հանրահավաքին մի պահ միանալը եւ ամբիոնից ելույթ ունենալը եւս նույն նպատակն էր հետապնդում. իրենք հանրահավաքին միացել են ոչ թե նրա համար, որ դա ընդդիմության հանրահավաքն էր, այլ որովհետեւ քաղաքատարկյալների ազատ արձակման պահանջը հանրահավաքի առանցքային

Թեման էր:

«Մենք քաղաքական կուսակցություն չենք, մենք Մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություն ենք: Հետեւաբար, մեր նպատակը այդ հանրահավաքին մասնակցելով, քաղաքական բանտարկյալների ազատ արձակումն էր: Մենք նպատակահարմար գտանք դիմել ոչ թե քաղաքական ուժին, ոչ թե իշխանություններին, այլ այնտեղ գտնվող ժողովրդին: Հանրահավաքում միայն կուսակցականներ չէին, այնտեղ շարքային քաղաքացիներ էին, որոնք անհանգստացած են քաղաքանտարկյալների վիճակով: Մենք ցանկանում էինք այդ մասով մեր աջակցությունը հայտնել հավաքվածներին», - հայտարարեց Սուեր Բելասենը եւ հավելեց. – «Մենք չենք աջակցում ոչ մեկին եւ ոչ էլ մյուսին, մենք այստեղ ենք մարդու իրավունքների պաշտպանության համար»:

Որպես Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի նախագահ Բելասենը կարեւորեց այն հանգամանքը, որ համաժողովի ընթացքում մի քանի ընդդիմադիրներ հնարավորություն են ունեցել պաշտոնյաների ներկայությամբ բարձրաձայնել քաղաքանտարկյալների ազատ արձակման խնդիրը. - «Այնտեղ էին արդարադատության նախարարը, Սահմանադրական դատարանի նախագահը եւ մարդու իրավունքների համար պայքարողները կարողացան իրենց պահանջները ներկայացնել: Այդ ամենն անցավ շատ խաղաղ եւ քաղաքակիրթ ձևով: Սա ժողովրդավարական երկրի պատկեր է՝ այն ինչ մենք ցանկանում ենք»:

Սուեր Բելասենը ողջունելի համարեց նաեւ այն, որ երեկվա հանրահավաքին հազարավոր ցուցարարներ էին մասնակցում, «բայց ոստիկանական ուժեր չկային»:
<http://www.azatutyun.am/content/article/2005213.html>

Սուեր Բելասեն. «Մենք նրանց կողքին ենք, ովքեր զոհվել են հանուն ազատության եւ սեփական արժանապատվության»

7 April 2010

Zhamanak.com

Քրիստինե Խանումյան



(Ֆոտո՝ www.tert.am-ի)

Մարտի 1-ի զոհերի եւ քաղբանտարկյալների հարազատները երեկ հանդիպեցին Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի՝ FIDH նախագահ տիկին Սուեր Բելասենի հետ:

Քանի որ երեկ Մեռելոց էր, ապա զոհերի հարազատները առավոտյան պետք է գնային գերեզմաններ:

Սակայն իմանալով, որ տիկին Բելասենը Հայաստանում է, նրանք՝ իրենց որդիների լուսանկարները ձեռքին ՀԱԿ գրասենյակի շենքից շարժվեցին դեպի «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հ/կ գրասենյակ, որտեղ այդ պահին գտնվում էր տիկին Բելասենը: Այս հ/կ-ն հենց այն կազմակերպությունն է, որի հետ FIDH-ը

համագործակցում է, եւ որի միջոցով էլ կազմակերպվել է FIDH 17-րդ համաժողովը:

Սակայն հենց այս կազմակերպության գործունեության առնչությամբ վերջին շրջանում բազմաթիվ դժգոհություններ են հնչել առ այն, որ որպես ոչ կառավարական

կազմակերպություն հանդես եկող այս հ/կ-ն, իրականում հենց Հայաստանի

կառավարության կողմից վերահսկվող հ/կ է, եւ որի կողմից հատկապես հետընտրական զարգացումների մասին FIDH-ին տված տեղեկությունները ավելի շատ իշխանական տեսակետներն են արտահայտում:

Այս հանգամանքի շուրջ երեկ լուրջ բանավեճ եղավ քաղբանտարկյալների եւ տիկին Բելասենի զրույցի ժամանակ: Սակայն մինչ այդ, մարտի 1-ի զոհերի հարազատների պատվիրակության հերթն էր: Զոհերի հարազատները նախ Բելասենին հանձնեցին իրենց կողմից՝ ավելի վաղ տարածված հայտարարությունը, որի տակ ստորագրել էին տաս զոհերից իննի հարազատները, բացառությամբ սպա Համլետ Թադևոսյանի հարազատների: Այնուհետեւ զոհերի հարազատները հերթով իրենց խոսքն ասացին FIDH նախագահին՝ ե՛ւ պատմելով այն մասին, թե ինչպես եւ ինչ

հանգամանքներում են զոհվել իրենց զավակները, ե՛ւ նաեւ այն մասին, թե ինչ վիճակում է հետաքննությունը: Սակայն ամենաանսպասելին տիկին Բելասենի խոսքն էր. նա խոսեց առանց այլեւայլությունների, ուղիղ եւ այնքան թիրախային, որ հազիվ թե հնարավոր լինի նրա կողմից հնչեցված սուր մտքերը հետագայում սխալ թարգմանության արդյունք

համարել: «...Դուք դա երբեք չեք մոռանա, դուք միշտ ապրելու եք դրանով, դա փաստ է եւ այդպես կլինի, բայց եւ այնպես, անհրաժեշտ է օգնել ձեր վշտին, չնայած այն բանին, որ այն ոչ մի տեղ չի անհետանա: Եվ ձեր վշտին որեւէ կերպ օգնել հնարավոր է միայն

արդարության եւ ճշմարտության միջոցով: Վիշտը ձերն է, արդարադատության ու

ճշմարտության որոնումը մեր աշխատանքն է, դա մեր աշխատանքն է այստեղ, բայց նաեւ ամբողջ աշխարհում: Ես գիտեմ, որ դա ամենեւին չի թեթեւացնում ձեր ցավը, բայց

իմացեք, որ մենք բոլորս այստեղ ենք եկել տարբեր երկրներից, որտեղ եւս մենք

հանդիպում ենք նման հրեշավոր իրավիճակների հետ, եւ ուզում եմ ասել, որ նման

ահավոր իրավիճակներում, երբ ամեն ինչ նույնքան անելանելի ու փակուղային էր թվում,

ինչպես այստեղ, որոշ երկրներում մենք հասել ենք նրան, որ մեղավորները՝ մինչեւ

ամենավերին օղակները, ներառյալ գործող նախագահներ, կանգնեն եթե ոչ

ներպետական արդարադատության առաջ, ապա՝ միջազգային դատարանի առաջ: Ահա

այս փորձն ունենալով, հավատացեք, մենք այստեղ ենք եկել ոչ թե որեւէ մեկի, այդ թվում՝

նախագահի ձեռքը սեղմելու համար, մենք եկել ենք այստեղ, որպեսզի ցույց տանք այդ

փորձը, եւ ասենք՝ ահա թե մենք ինչ ենք պահանջում եւ ահա թե ինչի ենք ուզում հասնել:

Հարցը, որ մենք ինքներս մեզ տվել ենք՝ արդյո՞ք մենք պետք է ձեզանից հեռու լինեինք,

ոչինչ չանելով եւ այստեղ չգալով, դա արդյո՞ք կլավացներ իրավիճակը: Մենք որոշեցինք,

որ մենք պետք է գանք ու ցույց տանք, որ մենք նրանց կողքին ենք, ովքեր տառապում են,

ում սպանում են, ովքեր զոհվել են հանուն ազատության եւ սեփական

արժանապատվության: Ես չեմ կարծում, որ ձեր որդիները հենց այնպես են զոհվել, որ դա

ոչ մի արդյունք չի ունենա: Ես վստահ եմ, որ ինչ-որ առումով այդ մահերը կբացեն իրավիճակը եւ երկրին հնարավորություն կտան մի քայլ առաջ շարժվել... Ես գիտեմ, որ հայրն ու մայրը, ովքեր խոսում են իրենց զոհված որդու մասին, երբեք ոչինչ չեն չափազանցնում եւ երբեք սուտը չեն ասում, ձեր շուրթերից դա այլ ձեւ է հնչում, եւ ես բոլոր հնարավոր ամենաբարձր մակարդակներով կփոխանցեմ այն ամենը, ինչը որ դուք ինձ ասացիք: Ես կցանկանայի հրապարակավ խոստանալ, որ ինչպես որ մենք մարտ ամսին եկանք այստեղ, ինչպես այդ օրվանից մենք այս թեման երբեք չեն թողել, այնպես էլ՝ երբեք չենք թողնի: Եթե մեր օգնությունը պետք է ներպետական դատարաններում, եվրոպական դատարաններում, բոլոր մակարդակներով այն արդարադատությունը, որ հասանելի է մեզ, մենք կաջակցենք: ...Ես չեմ ուզում դատարկ խոստումներ տալ, բայց ես ուզում եմ, որ դուք հասկանաք, որ եթե մենք այդ կոնգրեսն անց ենք կացնում այստեղ եւ այդ թեմայով, դա ձեզ եւ ձեր երեխաների համար է, որպեսզի ամբողջ աշխարհը լսի, թե ինչ է կատարվել եւ մեզ հետ միասին պահանջի հետաքննություն անցկացնել: Ես վստահ եմ՝ կգա այն օրը, երբ արդարությունը կիմացվի, եւ մեղավորները կպատժվեն, ամեն դեպքում մեզ համար դա առաջնային նպատակ է, եւ ես վստահ եմ, որ վաղ թե ուշ մենք դրան կհասնենք», - զոհերի հարազատների հետ զրույցում հայտարարեց տիկին Բելասենը:

Այս հանդիպումից ընդամենը մեկ ժամ անց տիկին Բելասենի հետ հանդիպել են նաեւ քաղբանտարկյալների հարազատները, որն անցել է մի փոքր ավելի լարված մթնոլորտում, քանի որ քաղբանտարկյալների հարազատները տիկին Բելասենի առաջ կոնկրետ պահանջներ են դրել. օրինակ՝ որ տիկին Բելասենը իրենց հարազատների վերաբերյալ հայտարարություն անի հենց այստեղ՝ Հայաստանում եւ ոչ թե երկրից հեռանալուց հետո: Այնուհետեւ քաղբանտարկյալների հարազատները նշել են, որ ընդհանրապես չեն ճանաչում այն իրավապաշտպան կազմակերպությանը, որը ՀՀ-ում հանդես է գալիս որպես FIDH-ի գործընկեր: Հարազատները նշել են, որ այս երկու տարվա ընթացքում երբեք այդ կազմակերպությունից որեւէ աջակցություն չեն ստացել: «Մենք չենք հավատում Ձեր կազմակերպությանը, քանի որ այն իրավապաշտպան կազմակերպությունները, որոնք այս երկու տարիների ընթացքում եղել են մեր կողքին, այսօր բոլորովին են Ձեր համաժողովը», - ասել են քաղբանտարկյալների հարազատները: «Մենք հավատարիմ ենք մեր սկզբունքներին եւ մեզանից կախված ամեն ինչ անելու ենք, որպեսզի ՀՀ-ում ազատ արձակվեն բոլոր քաղբանտարկյալները: Մենք մեր կոնֆերանսն անցկացնելու համար 5 երկրի ընտրություն ունեինք, սակայն եկանք Հայաստան, քանի որ ՀՀ-ում այնպիսի վիճակ է, որ երկիրը կամ պետք է առաջ գնա, կամ խիստ հետընթաց արձանագրի», - իր հերթին ասել է տիկին Բելասենը: Քաղբանտարկյալների հարազատները FIDH ներկայացուցիչներին հրավիրել են այսօր կայանալիք Կոնգրեսի հանրահավաքին:

<http://www.zhamanak.com/article/14575/>

Մարդու իրավունքներին նվիրված համաժողով՝ առանց իրավապաշտպանների

7 April 2010

Zhamanak.com

Արման Գալոյան

Այսօր Երեւանում կմեկնարկի Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի համաժողովը:

Սակայն դեռ օրեր առաջ այս համաժողովի կապակցությամբ լուրջ սկանդալներ էին ծագել: Ու հետեւանքը եղավ այն, որ մի շարք իրավապաշտպան կազմակերպություններ ի սկզբանե հայտարարեցին համաժողովը բոյկոտելու մասին: Այդ համաժողովին հրաժարվեց ելույթ ունենալ նաեւ մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանը. վերջինս համաժողովին կներկայանա վաղը նոր միայն: Բանն այն է, որ իշխանություններն ի սկզբանե փորձել են անել ամեն ինչ, որպեսզի համաժողովը վերցնեն իրենց ղեկավարության տակ: Նախատեսված էր, որ այդ համաժողովի բացմանը ելույթ է ունենալու Սերժ Սարգսյանը: Սակայն բարձրացված աղմուկի պատճառով իշխանությունները ստիպված եղան նահանջել, եւ հիմա հայտնի է, որ այդ համաժողովի բացմանը Սերժ Սարգսյանի փոխարեն ելույթ է ունենալու ՄԴ նախագահ Գագիկ Հարությունյանը: Եթե անկեղծ լինենք, ապա որեւէ լուրջ տարբերություն Գագիկ Հարությունյանի եւ Սերժ Սարգսյանի միջեւ չկա: Համենայնդեպ, ՄԴ նախագահը նույնքան մեղսակից է ներկա ավագակախմբի ձեւավորման գործում, որքան Սերժ Սարգսյանն ու Ռոբերտ Քոչարյանը: Ավելին՝ Գագիկ Հարությունյանն այս ողջ ընթացքում եղել է այդ ողջ անօրինականություններն իրավաբանորեն հիմնավորողն ու վավերացնողը: Այնպես որ, նա եւս պատասխատվություն է կրում այսօր Հայաստանում ստեղծված իրավիճակի համար:

Իսկ Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի համաժողովի հետ կապված սկանդալները սկսվեցին Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցի հետ կապված պատմությունից: 2010թ. մարտի 19-ին այս կազմակերպության ինտերնետային կայքում տեղադրվել էր հայտարարություն՝ Հայաստանում արդար դատաքննության վերաբերյալ: Հայտարարության տակ ստորագրել էին Քաղաքացիական հասարակության ինստիտուտը, Հայաստանի Հելսինկյան կոմիտեն, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը, Համագործակցություն հանուն ժողովրդավարության եւ Ընդդեմ իրավական կամայականության կազմակերպությունները: Հայտարարության մեջ անդրադառնալով 2008թ. մարտի 1-ի իրադարձություններին՝ նշվում էր, որ 10 մարդ սպանվել է եւ 200 հոգի վնասվածքներ են ստացել բախումների հետեւանքով: Սակայն ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հայտարարել է, որ համաձայն չէ նշված ձեւակերպումների հետ: «Սույն հայտարարությամբ հայտնում ենք, որ ՀՔԱ Վանաձորի գրասենյակը չի ստացել հայտարարության տեքստը մինչ հրապարակումը, համաձայն չէ տեքստում նշված ձեւակերպման հետ եւ իր ստորագրությունը հետ է վերցնում հիշատակված պատճառներով», - հայտարարել էր Արթուր Սաքունցը: Հետո արդեն Միքայել Դանիելյանի ղեկավարած Հելսինկյան ասոցիացիան, Արթուր Սաքունցի Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը, Վարդան Հարությունյանի Իրավունքի եւ ազատության կենտրոնը հայտարարել էին, որ չեն մասնակցելու այդ համաժողովին: Ամենայն հավանականությամբ, այդ համաժողովին չի մասնակցի նաեւ Բորիս Նավասարդյանի ղեկավարած Երեւանի մամուլի ակումբը, Աշոտ Մելիքյանի Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն, Լեւոն Բարսեղյանի Գյումրիի Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը:

Փոխարենը այս համաժողովին մասնակցելու են միջոցառման կազմակերպիչը՝ «Քաղաքացիական հասարակության ինստիտուտի» ղեկավար Արման Դանիելյանը, այդ կազմակերպության խորհրդի նախագահ Արտակ Կիրակոսյանը, Հայաստանի

Հելսինկյան կոմիտեի նախագահ Վահան Իշխանյանը, «Դիֆենս» հ/կ ղեկավար Կարեն Անդրեասյանը: Մյուս մասնակիցների վերաբերյալ այլ մանրամասներ երեկ ճշտել չհաջողվեց: «Քաղաքացիական հասարակության ինստիտուտի» նախագահ Արման Դանիելյանը մեզ հետ հեռախոսազրույցում տեղեկացրեց, որ իրենք 200-ից ավելի մարդու են հրավերք ուղարկել: «Ում հետաքրքրում է, կգա, ում ոչ՝ չի գա: Ես տեղյակ չեմ, ով կգա, ով ոչ», - ասաց նա՝ հավելելով, որ այդ համաժողովին մասնակցությունը պարտադիր չէ: <http://www.zhamanak.com/article/14573/>

Լեւոն Տեր-Պետրոսյանը մոտեցավ ցուցարարներին

ԱՊՐԻԼ 07, 2010

A1+



Այսօր ժամը 10:00-ից «Արմենիա-Մարիոք» հյուրանոցի բակը լեցուն էր, բայց ոչ հյուրերով: Մի քանի տասնյակ մարդիկ էին՝ քաղաքատարկյալների լուսանկարները՝ հագուստներին փակցրած եւ 2008թ. մարտի 1-ի զոհերի նկարները ձեռքերին: Նույն ժամին հյուրանոցում մեկնարկում էր FIDH-ի համաժողովի նիստը: Հավաքվածները, համաժողովի արտասահմանցի պատվիրակներին տեսնելով, ժամանակ առ ժամանակ վանկարկում էին՝ «Ազատություն քաղաքատարկյալներին»:

Սակայն նրանց ծափերն ու ուրախությունը ավելի սաստկացան, երբ հյուրանոցից դուրս եկավ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը: Վերջինս մոտեցավ հավաքվածներին, մի քանի բառ փոխանակեց, այնուհետեւ հեռացավ:

Նա եկել էր ոչ թե ակցիայի մասնակցելու, այլ հանդիպելու, ինչպես հետագայում հայտնեց ՀԱԿ համակարգող Լեւոն Զուրաբյանը, ԵՄ ընդլայնման եւ եվրոպական հարեւանության քաղաքականության հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեին:

«Հանդիպումը հիմնականում նվիրված էր ԵՄ եւ Հայաստանի համագործակցությանը: Բնականաբար երկուստեք մտահոգության հանդիսացող բոլոր հարցերը քննարկեցին, ներառյալ ԼՂ խնդրի կարգավորումը, հայ-թուրքական հարաբերությունները, մարդու իրավունքների վիճակը եւ քաղաքատարկյալների ճակատագիրը», - ասաց Լեւոն Զուրաբյանը, ով եւս մասնակցել է հանդիպմանը:

Զուրաբյանի խոսքերով՝ Հանձնակատարին ներկայացվել են նաեւ քաղաքական ճգնաժամի կարգավորման՝ Հայ ազգային կոնգրեսի ժամանակացույցը:

Ավելի ուշ ակցիայի մասնակիցներին մոտեցավ նաեւ Շտեֆան Ֆյուլեին: Նա մի քանի հարցեր տվեց, այնուհետեւ հեռացավ:

Ի դեպ, այսօրվա ակցիան շարունակությունն էր երեկվա բողոքի միջոցառման, որը կայացել էր Արամ Խաչատրյանի արձանի մոտ՝ FIDH-ի համաժողովի մասնակիցների ուշադրությունը հրավիրելու հայ քաղաքատարկյալների խնդրին:

Բայց ի տարբերություն երեկվա, երբ ակցիայի մասնակիցները մեղադրում էին, ապա այսօր շնորհակալություն էին հայտնում համաժողովի մասնակիցներին՝ հասկացողության համար:

«Այսօրվա եւ երեկվա հանդիպումները ցույց տվեցին, որ նրանք շատ լուրջ են վերաբերվում Հայաստանի այս վիճակին, ծանոթ են իրականությանը: Հայտարարեցին, որ ամբողջ աշխարհով տարածելու են տեղեկատվություն Հայաստանում տիրող իրավիճակի մասին եւ ըստ ամենայնի, աջակցելու են մեզ: Ստացվեց այնպես, որ եկել էին իշխանությունների հրավերով, իշխանությունների հետ միջոցառման, բայց դուրս եկան իշխանությունների դեմ», - «Ա1+»-ին ասաց ՀՀԾ վարչության անդամ Արամ Մանուկյանը: Հիշեցնենք, որ երեկ FIDH-ի համաժողովի մասնակիցներից շատերը ներկա էին ՀԱԿ հանրահավաքին, անգամ պահանջեցին հայ քաղաքատարկյալների ազատությունը:

<http://a1plus.am/am/politics/2010/04/7/protest>

«Կառավարությունը սպանում է, դատավորները՝ քողարկում»

ԱՊՐԻԼ 07, 2010

A1+

2008թ. մարտի 1-ի 10 զոհերի սպանություններն ու ՀՀ -ում դեռեւս 14 քաղաքատարկյալների առկայությունն այսօր դարձավ Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի համաժողովի քննարկման առարկա:

Մինչ բուն թեմային անցնելը, որը պետք է ներկայացնեք մարտի 1-ի 10 զոհերի իրավահաջորդների ներկայացուցիչ Արտակ Զեյնալյանը, խոսք տրվեց Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Դավիթ Ավետիսյանին:

Պարոն Ավետիսյանը դեռ չէր հարցրել խոսել, երբ նախկին քաղաքատարկյալ Վարդգես Գասպարին վեր կացավ տեղից եւ ասաց. «Դուք ի՞նչի մասին պետք է խոսեք: Դուք ամոթ չունեք: Դուք խոսեք այն մասին, որ ի կատար չէք ածում Եվրադատարանի վճիռները: Այդ մասին խոսեք»: Այդ ընթացքում Դավիթ Ավետիսյանը ժպտում էր, ինչն ավելի զայրացրեց Գասպարին:

«Ձեր քաղաքավարի ժպիտը տարեք ձեր տուն», - ասաց Գասպարին եւ FIDH-ի իրավապաշտպաններին բաժանեց դատավոր Ավետիսյանի նկարով թռուցիկները:

Դավիթ Ավետիսյանը մինչ իր նախապատրաստած «Ճշմարտություն, արդարադատության իրականացում եւ փոխհատուցում» թեմայով զեկույցին անցնելը՝ դիմեց միջազգային իրավապաշտպաններին. «Այս ելույթը վկայում է այն մասին, որ մեր երկրում կա ազատ արտահայտվելու իրավունք»:

Վարդգես Գասպարին երեկ նույնաբովանդակ պատասխան էր տվել ՀՀ ՍԴ նախագահ Գագիկ Հարությունյանը, սակայն այսօր Գասպարին չլռեց. «Ձեր ելույթը վկայում է, որ դուք ամոթ չունեք»: Գասպարին շարունակեց սփյուռքահայ մի լրագրող. «Պարոն Ավետիսյան դուք ստում եք, ավելի լավ կլինի չխոսեք: Դուք այստեղ անելիք չունեք»: Այսօր դատական համակարգի վերաբերյալ կրկին իր բողոքը հայտնեց Գյումրիի «Ասպարեզ» ակումբի նախագահ Լևոն Բարսեղյանը, սակայն նա փոխել էր երեկվա իր պաստառի բովանդակությունը: «Կառավարությունը սպանում է, դատավորները քողարկում», պաստառով Բարսեղյանը կանգնեց դատավոր Ավետիսյանի ողջ ելույթի ընթացքում:

Իր ելույթից անմիջապես հետո, որի հիմնական միտքն այն է, որ ՀՀ վճռաբեկ դատարանը հետեւում է եվրոպական չափանիշներին, Ավետիսյանը որքան հնարավոր է արագ հեռացավ:

2008թ. մարտի 1-ի դեպքերը ամփոփ ներկայացրեց Արտակ Զեյնալյանը՝ միջազգային իրավապաշտպաններին տեղեկացնելով, որ 2008թ. մարտի 1-ի դեպքերից մինչ օրս որեւէ մեկը պատասխանատվության չի ենթարկվել 10 սպանությունների համար, անգամ չի հարցաքննվել կասկածյալի կարգավիճակով:

Զեյնալյանը հույս հայտնեց, որ FIDH-ի իր խոստմանը համաձայն՝ հետևողական կլինի մարտի 1-ի 10 սպանությունների եւ քաղբանտարկյալների ազատ արձակման հարցում: Նշենք, որ այսօր Երևանում FIDH-ի 37 -րդ համաժողովի 150 իրավապաշտպաններ իրենց աշխատանքները իրականացրեցին երկու խմբով՝ «Արմենիա Մարիոթ» եւ «Էրեբունի» հյուրանոցներում ներկայացրեցին Մարդու իրավունքների ոլորտում իրենց երկրներում առկա խնդիրները եւ դրանք հաղթահարելու ուղիները:

«Ազգային արդարադատության կայացումը» թեմայի շրջանակներում Պաղեստինի Մարդու իրավունքների կենտրոնի նախագահ Ռաջի Սուրանին վստահեցրեց, որ մարդու իրավունքների խախտումների հետեւանքով գոհի կարգավիճակում հայտնված քաղաքացիների ներգրավումը արդարադատություն իրականացնելիս անհրաժեշտ նախապայման է: Քննարկման մասնակիցները ներկայացրեցին իրենց երկրում առկա նախադեպերը:

Այս առումով իրավիճակը տխուր էր ոչ միայն Հայաստանում, սակայն ելույթ ունեցողները ի տարբերություն ՀՀ-ի ԵԽ անդամ երկրների ներկայացուցիչներ չէին:

Համաժողովն իր աշխատանքները կավարտի վաղը:

<http://a1plus.am/am/politics/2010/04/7/david-avetisyan>

Արդարադատության նախարարի համար կարևոր չեն FIDH-ի գնահատականները

07.04.10

Tert.am

Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) նախագահ Սուր Բելասենը Երևանում երեկ հայտարարեց, որ թեև Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության առումով առաջընթաց է գրանցվել, սակայն կան դեռևս մտահոգող խնդիրներ: Մասնավորապես, տիկին Բելասենն անդրադարձավ քաղբանտարկյալների խնդրին և մարտյան դեպքերի 10 գոհերի սպանությունների չբացահայտմանը: FIDH-ը ՀՀ իշխանություններին կոչ արեց անհապաղ ազատ արձակել քաղբանտարկյալներին:

Այս հարցերի վերաբերյալ մեկնաբանություն ստանալու ակնկալիքով Tert.am-ը դիմեց ՀՀ արդարադատության նախարար Գևորգ Դանիելյանին, ով, պարզվում է, այնքան էլ գոհ չէ FIDH-ի հարցադրումներից:

«Ես էական նշանակություն չեմ տալիս, թե ով ինչ հարցադրումներ է արել, որովհետև ես իրավասու եմ պատասխանել միայն միջազգային պետական կառույցների հարցադրումներն: Ինչ վերաբերում է միջազգային ոչ ֆորմալ կառույցներին, բնականաբար ես ևս կարող եմ արձագանքել, սակայն սա չեմ կարող համարել որպես պաշտոնական դիրքորոշում», - հայտարարեց նախարարը:

Ավելին, Դանիելյանն ասաց, որ նման արտահայտություններ այսօր նաև անում են հայաստանյան հասարակական որոշ կազմակերպություններ, «սակայն դա չի նշանակում, թե մենք համամիտ ենք նրանց հետ և պետք է խոսենք այդ ուղղությամբ, այդ խնդիրների մասին»:

Նշենք, որ մարտյան դեպքերից հետո FIDH-ը, ի թիվս միջազգային այլ կառույցների, նույնպես հանդես էր եկել այդ իրադարձությունների վերաբերյալ զեկույցով:

Անդրադառնալով հիշյալ զեկույցին՝ Գևորգ Դանիելյանն ասաց. «Մինչև զեկույցը պաշտոնական շրջանառության մեջ դնելը, մեզ մոտ արդեն իսկ կատարվել էին աշխատանքներ, որպեսզի Քրեական դատավարության օրենսդրությունը համապատասխանեցվեր միջազգային իրավունքի չափանիշներին»:

Նախարարը նշեց նաև, որ այսօր Հայաստանում կան վարչական և քաղաքացիական դատավարության հետ կապված խնդիրներ, և շրջանառության մեջ են համապատասխան նախագծեր:

«Շատ կարճ ժամանակահատվածում մենք կունենանք օրենսդրություն, որը եթե մի պահ զերծ մնա կապանքներից, ապա կգնահատվի ժողովրդավարական», - վստահեցրեց նախարարը:

<http://tert.am/am/news/2010/04/07/fidh/>

Բողոքի ակցիաները Երևանում շարունակվում են. Տեր-Պետրոսյանն ու Ֆյուլեն մոտեցել են ակցիայի մասնակիցներին

April 7, 2010

Panorama.am

Այսօր «Արմենիա Մարիոք» հյուրանոցում ԵՄ ընդլայնման եւ եվրոպական հարեւանության քաղաքականության հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեի հետ է հանդիպել ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը: Այդ հանդիպմանը ներկա գտնված ՀԱԿ համակարգող Լևոն Զուրաբյանը տեղեկացրեց, որ Ֆյուլե-Տեր-Պետրոսյան հանդիպման ընթացքում քննարկվել են բազում հարցեր, այդ թվում՝ դարաբաղյան հիմնախնդրի կարգավորման, հայ-թուրքական գործընթացին և Հայաստանում մարդու իրավունքներին վերաբերող հարցեր:

Նրա խոսքով, ԵՄ հանձնակատարին են ներկայացվել քաղաքական ճգնաժամի կարգավորման ՀԱԿ-ի ժամանակացույցը, որն ավելի վաղ ներկայացվել էր ԵԽ-ին:

Նկատենք, որ հանդիպումից հետո Շտեֆան Ֆյուլեն և Տեր-Պետրոսյանը մոտեցել են հյուրանոցի դեմ բողոքի ակցիայի մասնակիցներին ու կարճ ժամանակ անց բաժանվել նրանցից:

Հիշեցնենք, որ երեկվանից, երբ Երևանում մեկնարկեց Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) 37-րդ համագումարը, Հայ Ազգային կոնգրեսի ակտիվիստները բողոքի ակցիա են կազմակերպում այն հաստատությունների մոտ, որտեղ ընթանում են համագումարի աշխատանքները: Ակցիայի մասնակիցները բանտարկյալների կարգավիճակը խորհրդանշող համազգեստով և շղթայված ոտքերով ու ձեռքերով պահանջում էին ազատ արձակել քաղբանտարկյալներին:

<http://www.panorama.am/am/politics/2010/04/07/action/>

Հանդիպել է քաղբանտարկյալներին

ԱՊՐԻԼ 07, 2010

A1+

Իրանցի իրավապաշտպան Շիրին Էբադին «Նուբարաշեն» ՔԿՀ-ում այսօր հանդիպել է անազատության մեջ գտնվող Նիկոլ Փաշինյանին:

Նա հնարավորություն է ունեցել այցելել նաև քաղբանտարկյալներ Սասուն Միքայելյանին, Սարգիս Հացպանյանին և Ժորա Սափեյանին: Նրանց նա հանդիպել է «Դատապարտյալների հիվանդանոց»-ում: Հանդիպումները կայացել են Սերժ Սարգսյանի խոստումից հետո:

«Որ կալանավայր ցանկանաք, կարող եք այցելել», - երեկ FIDH համաժողովի շրջանակներում Երևանում գտնվող իրավապաշտպանին խոստացել էր Սերժ Սարգսյանը:

Սակայն իրավապաշտպանը Նիկոլ Փաշինյանին հանդիպել է ոչ թե բանտախցում, ինչպես ինքն էր ցանկանում, այլ տեսակցության սենյակում:

Նոբելյան մրցանակի դափնեկիր Շիրին Էբադին, ով նախկին քաղբանտարկյալ է, արդեն 20 տարի է պայքարում է քաղբանտարկյալների ազատության համար: Նա նշել է, որ Իրանում ներկայումս 1000-ից ավելի քաղբանտարկյալ կա ու նրանց այցելելը գրեթե անհնար է:

<http://a1plus.am/am/social/2010/04/7/fidh>

Տեղեկացնելու են ողջ աշխարհին

07/04/2010

Հայկական Ժամանակ



Երեկվա Հայ ազգային կոնգրեսի հանրահավաքը սկսվելիս միակ արտասովոր բանը, որ անմիջապես աչքի էր զարնում, ուստիկանների սակավությունն էր:

Եղածներն էլ իրենց անչափ զուսպ ու համեստ էին պահում: Հարթակի վրա էին Կոնգրեսի մաս կազմող բոլոր ուժերի լիդերները: Հանրահավաքը վարում էր ՀԺԿ քարտուղար Գրիգոր Հարությունյանը: Երեկվա հանրահավաքը սկսվեց ՀՀ արտաքին գործերի նախկին նախարար Ալեքսանդր Արզումանյանի կնոջ՝ Մելիսա Բրաունի ելույթով: «Մենք այսօր ունենք 14 քաղբանտարկյալներ ու մենք պիտի պայքարենք՝ մինչև վերջին քաղբանտարկյալը ազատ լինի», - հայտարարեց Մելիսա Բրաունը: Նա պատմեց, որ նախօրեին իրենք հանդիպել են Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի

ներկայացուցիչների հետ, ովքեր խոստացել են, որ հետամուտ են լինելու, որ ՀՀ իշխանությունները ազատ արձակեն բոլոր 14 քաղբանտարկյալներին եւ նաեւ հետամուտ են լինելու Մարտի 1-ի բացահայտմանը: «Մենք հույս ունենք, որ նրանք իրենց խոսքի տերը կլինեն: Այսօր մենք նրանց կբացատրենք նաեւ, թե ինչ թատրոն է կազմակերպված իրենց համար», - ասաց Մելիսա Բրաունը, նկատի ունենալով ոստիկանությանը: «Որովհետեւ ոստիկանությունն ու ր է», - ասաց տիկին Բրաունը ու հավելեց, որ կցանկանար ՄԻՄՖ ներկայացուցիչներին հրավիրել Կոնգրեսի ամենուրեքայա ակցիաներին, որոնց ժամանակ ոստիկանությունը, ինչպես հայտնի է, պարբերաբար իրեն վայրագ է պահում:



«Մեր պահանջը շատ պարզ է՝ ազատել քաղբանտարկյալներին, պատժել Մարտի 1-ի մարդասպաններին», - իր ելույթը եզրափակեց Մելիսա Բրաունը: Այնուհետեւ Կոնգրեսի առաջնորդ Լեոն Տեր-Պետրոսյանի մամուլի խոսնակ Արման Մուսինյանն ընթերցեց Կոնգրեսի ուղերձը Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիային, որում մասնավորապես ասվում է, որ «ՄԻՄՖ համաժողովը հրապարակայնորեն, պարզ եւ սկզբունքային ուղերձ հղի հայաստանյան

իշխանություններին՝ պահանջելով քաղբանտարկյալների անհապաղ ազատ արձակումը»: Կոնգրեսի տնտեսական հանձնաժողովի ներկայացուցիչներ Վահագն Խաչատրյանը եւ Հրանտ Բագրատյանը հանդես եկան տնտեսական թեմայով ելույթներով՝ բացատրելով, թե ինչպես են իշխանությունները թալանում ժողովրդին: Հաջորդը նախատեսված էր Կոնգրեսի համակարգող Լեոն Ջուրաբյանի ելույթը, ինչը, սակայն, ընդհատվեց: Հայաստանում գտնվող Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի անդամները, որ Երեսնում անցկացնում են իրենց 37-րդ համագումարը, «Արամ Խաչատրյան» համերգասրահում իրենց նիստն ավարտելուց հետո գրեթե ողջ կազմով եկան ՀԱԿ-ի հանրահավաքին, բարձրացան հարթակ ու բարձրախոսը վերցրին Կոնգրեսի ներկայացուցիչների ձեռքից: Նիգերիայի քաղաքացիական ազատության կոմիտե հ/կ-ի ղեկավար Իբուչուկու Օհաբուենի Էզիկեն, ողջունելով հանրահավաքի մասնակիցներին, ասաց. «Գալով այստեղ, ես տեսա այս հավաքը, մարդկանց, որ պայքարում են արդարության համար: Ես համարում եմ դատապարտելի, որ կարգին մարդիկ, լավ մարդիկ, կարող են լռել եւ չպայքարել: Կա միայն մեկ արդարություն եւ այդ արդարությունը մեր բոլորիս համար է: Մեծ հայ ժողովուրդ, որեւէ մեկին վնասելը մեզ համար հավասարազոր է վնասել բոլորին: Ես անձամբ եղել եմ քաղբանտարկյալ եւ դրա համար երդվել եմ, որ իմ մնացած ամբողջ կյանքում պայքարելու եմ արդարության համար: Գալով այստեղ, տեսնելով այսքան մարդկանց, որ պայքարում են արդարության համար, ես պահանջում եմ այս իշխանություններից՝ անմիջապես ազատ արձակել քաղբանտարկյալներին»: Նա իր ելույթն ավարտեց հայերեն լեզվով «Ազատություն» վանկարկելով: Հանրահավաքի մասնակիցների արձագանքը բուռն էր. նրանք եւս սկսեցին ակտիվ վանկարկել՝ «Ազատություն»: Հետո ելույթ ունեցավ ՄԻՄՖ նախագահ Սուեր Բելասսենը: «Միբելի բարեկամներ, ողջ աշխարհը այսօր ներկա է այստեղ մարդու իրավունքների ոլորտում մարտիկների միջոցով: Մենք բոլորս այստեղ ենք, ձեզ հետ, հանուն քաղաքական բանտարկյալների ազատության», - ասաց տիկին Բելասսենը եւ սկսեց հայերենով վանկարկել «Ազատություն»: Մատենադարանի հրապարակն ալեկոծվում էր Բելասսենի հայտարարությանը մարդկանց արձագանքից: «Միբելի

բարեկամներ, մարդու իրավունքների լիզայի դաշնությունը իր ողջ կազմով ձեզ հետ է: Նրանցից յուրաքանչյուրը ներկայացնում է աշխարհի որեւէ երկրի լիզա եւ նրանցից յուրաքանչյուրն առանձին-առանձին կասի, որ ինքը ձեզ հետ է: Մենք պահանջում ենք՝ ազատ արձակել քաղբանտարկյալներին», - ասաց Սուեր Բելասսենն ու էլի սկսեց վանկարկել՝ «Ազատություն»: «Ազատություն», «Նիկոլ», «Սասուն». վանկարկում էին հանրահավաքի մասնակիցները, հետո սկսեցին վանկարկել՝ «Հիմա, հիմա»: Բելասսենը Լեւոն Զուրաբյանից հարցրեց, թե ինչ են մարդիկ վանկարկում, երբ վերջինս բացատրեց, ՄԻՄԾ նախագահն արձագանքեց վանկարկելով. «Yes, now, now, հիմա, հիմա, հիմա»: Այնուհետեւ Ելույթ ունենալու ցանկություն հայտնեց հայտնի իրավապաշտպան Շիրին Էֆադին, ով մարդու իրավունքների պաշտպանության համար 2003 թվականին արժանացել է խաղաղության Նոբելյան մրցանակի: «Հավատացեք, որ մենք ձեզ հետ ենք: Մենք եկել ենք աշխարհի տարբեր երկրներից, եւ ձեր բողոքի ձայնը բարձրացնելու ենք ամբողջ աշխարհում: Դուք՝ Հայաստանի ազատասեր ժողովուրդ, իմացեք, որ մենակ չեք, այստեղ են 151 երկրների իրավապաշտպանները եւ բոլորը միասին ձեզ հետ բարձրացնում են իրենց բողոքի ձայնը: Մենք, 151 երկրներից եկած իրավապաշտպաններս, ձեզ հետ ձեռք ձեռքի բռնած, կազմելու ենք մի շղթա, որպեսզի ձեր ձայնը ամբողջ աշխարհում տարածվի: Մենք, 151 երկրների ներկայացուցիչներիցս շատերը, ժամանակին եղել ենք քաղբանտարկյալներ: Ես ինքս էլ եղել եմ քաղբանտարկյալ եւ այս պահին պահանջում եմ՝ առանց նախապայմանի, առանց որեւէ պայմանի, բոլոր քաղբանտարկյալները ազատ արձակվեն», - ասաց Էֆադին: Պաղեստինից ժամանած իրավապաշտպան Ռաժի Սուվանին ասում էր. «Քույրեր եւ եղբայրներ, ոչ ոք ավելի լավ չգիտի, թե ինչ է նշանակում բռնաճնշումներ, քան այդ բռնաճնշումների զոհերը: Մենք մեր համերաշխությունն ենք հայտնում ձեզ բոլորիդ, որ պայքարում եք բռնաճնշումների դեմ: Մարդու իրավունքների պաշտպանները ոչ մտավորական են, ոչ էլ գիտնական, նրանք ձեզ նման պայքարողներ են: Մենք Երեւան ենք եկել՝ հայտնելու մեր համերաշխությունը ձեզ եւ ձեր արդար պայքարին: Եւ իմացեք, դուք, որ այստեղ հավաքված եք, վաղը դուք կլինեք, իսկ նրանք, որ այսօր իշխում են, նրանք կլինեն անցյալում»: Հանրահավաքի մասնակիցները սկսեցին վանկարկել «Մերժիկ, հեռացիր»: «Ազատություն Հայաստանին, ազատություն Պաղեստինին», - եզրափակեց իրավապաշտպանը: Կրկին ձայն խնդրեց ՄԻՄԾ նախագահը ու էլի սկսեց վանկարկել «Ազատություն, liberation, հիմա, հիմա»: Ելույթ ունեցավ նաեւ Մարդու իրավունքների ֆրանսիական լիզայի նախագահ Ժան Կլեր Դյուբուան: «Ֆրանսիայի ժողովուրդը համերաշխ է հայ ժողովրդի հետ եւ՝ ցեղասպանության ճանաչման հարցում եւ՝ ազատության ձեռքբերման հարցում: Մենք ունենք մեկ պահանջ՝ արդարություն ցեղասպանության զոհերի համար, արդարություն ազատության համար պայքարող հայերի համար: Եւ պահանջում ենք արդարությունը հենց հիմա: Մենք պահանջում ենք բոլոր քաղբանտարկյալների ազատ արձակումը, ինչպես այստեղ, այնպես էլ ամբողջ աշխարհում: 200 տարուց ավելի է, ինչ Ֆրանսիական հեղափոխությունը հաստատել է արդարության, հավասարության, ազատության սկզբունքները: Եւ մենք պահանջում ենք, որ այսօր բոլոր 14 քաղբանտարկյալները ազատ արձակվեն եւ օգտվեն նույն հավասարության իրավունքներից, ինչ բոլորը: Այսօր ֆորումում հավաքված բոլոր մասնակիցները՝ բոլոր մասնակից երկրներից այստեղ են, որ պաշտպանեն մարդու իրավունքները եւ պահանջեն քաղբանտարկյալների ազատ արձակումը», - ասում էր ֆրանսիացի իրավապաշտպանը: Նրա գրեթե յուրաքանչյուր նախադասություն ընդհատվում էր հանրահավաքի մասնակիցների վանկարկումներով՝ «Հիմա, ազատություն»: Իսկ վերջում Դյուբուան եւս հայերենով «Ազատություն» ու «Հիմա» էր

վանկարկում: Եւս մեկ անգամ ձայն խնդրեց ՄԻՄՖ նախագահը: «Հանուն մարդու իրավունքների՝ ազատեք բոլոր քաղբանտարկյալներին», - դիմելով ՀՀ իշխանություններին, մի քանի անգամ կրկնեց Սուրբ Բեկասսենը, որից հետո ՄԻՄՖ անդամները հանրահավաքի մասնակիցների «Լեւոն, նախագահ» եւ այլ վանկարկումների ներքո հեռացան: Նրանց գնալուց հետո Կոնգրեսի համակարգող Լեւոն Զուրաբյանն ասաց. «Այսօր կատարվեց մի կարեւոր բան, եւ պատահական չէ, որ ապրիլի 6-ին մենք կարողացանք շատ լուրջ մի նպատակի հասնել. ՀՀ իշխանությունները պլանավորել էին, մտածում էին, որ միջազգային ֆեդերացիայի ֆորումի անցկացումը Հայաստանում թույլ կտար այս ֆորումը դարձնել իշխանությունների պրոպագանդայի գործիք, բայց մենք մեր գործողություններով կարողացանք տապալել այդ ծրագիրը: Ահա սա է զանգվածային միջոցառումների, մեր գործի, հետեւողական պայքարի ուժը: Այն, ինչ իշխանությունները մտածել էին որպէս իրենց քարոզելու գործիք, այսօր դարձավ նրանց վարկաբեկման եւ խայտառակման ամենակարեւոր իրադարձությունը: Իսկ տեսնելով, թէ ինչքան հետեւողական է ժողովուրդը պայքարում ժողովրդավարական արժանությունների եւ մարդու իրավունքների վերականգնման համար, մենք ձեռք բերեցինք հավատարիմ ընկերներ, որոնք ամբողջ աշխարհում տարածելու են մեր պայքարը, մեր ճշմարտությունը, անելու են այնպէս, որ այն քաղաքական եւ ինֆորմացիոն բլոկադան, որ փաթաթվել էր մեր վզին, այլեւս գոյություն չունենա»: Այս ամենից հետո նախատեսված մնացած ելույթները ծրագրից հանվեցին եւ հանրահավաքը եզրափակվեց Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթով: Նա խոսեց ներքաղաքական եւ արտաքին քաղաքական խնդիրների մասին եւ իր ելույթը եզրափակեց այսպէս. «Վերջում ես չեմ կարող չանդրադառնալ այսօր այս հարթակում տեղի ունեցած կարեւոր իրադարձությանը, որին դուք ականատես եղաք. այն միջոցառումը, որը մեր իշխանություններին թվում էր, թէ պետք է դառնա իրենց լեգիտիմացման կամ ճերմակեցման կարեւոր իրադարձություններից մեկը, դարձավ ուղղակի դրա հակառակը, ճիշտ ինչպէս 2008 թվականի փետրվարի 26-ին, բայց այս անգամ արդեն միջազգային մակարդակով: Փաստորէն, Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիան եւ մեր հանրահավաքը այսօր միացան, մենք ընդհանուր համաժողով իրականացրինք: Դա ցույց է տալիս, որ մենք մենակ չենք եւ չէինք էլ կարող լինել, որովհետեւ աշխարհի բոլոր քաղբանտարկյալները, բոլոր քաղաքական հալածյալները եւ բոլոր ազատատենչ մարդիկ մեզ հետ են, ինչպէս մենք ենք բոլոր այդպիսի մարդկանց հետ»:

Երթ

Հանրահավաքին հետեւած երթի ընթացքում քաղաքացիները քննարկում էին տեղի ունեցածը: Դժվար է ասել՝ ամենամեծ ոգեւորությունը առաջացրել էր առաջին նախագահի ելոյթը, թէ միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների ներկայացուցիչների պահանջները՝ քաղբանտարկյալներին ազատ արձակելու մասին: Երթը, որ անցավ Մաշտոցի պողոտայով, Ամիրյան փողոցով, Հանրապետության հրապարակով, Նալբանդյան, Թումանյան, Տերյան փողոցներով, ընթացավ նույն էներգետիկայով, ինչ հանրահավաքը: Երթն ավարտվեց Հյուսիսային պողոտայում: Հրաժեշտ տալով առաջին նախագահին եւ երթի մասնակիցներին, ՀԱԿ համակարգող Լեւոն Զուրաբյանը հայտարարեց, որ թեւէ այլեւս բողոքելու պատճառ չկա FIDH համաժողովի մասնակիցներից, սակայն քանի որ ակցիաներ կային նախատեսված, դրանք տեղի կունենան: Մասնավորապէս, այսօր «Էրեբունի» եւ «Մարիոթ» հյուրանոցների մոտ կանցկացվի շնորհակալական ակցիա՝ ուղղված

իրավապաշտպաններին, որոնք, Ձուրաբյանի խոսքերով, ֆանտաստիկ ակցիա անցկացրեցին՝ միանալով հանրահավաքին:

Սյուզաննա Պողոսյան
Լուսինե Բարսեղյան -
<http://www.armtimes.com/print/5517>

Ու՞մ համար են կազմակերպվում հանրահավաքները

07.04.2010

Azgayin gaghapar

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

«Մենք պետք է զլոբալացնենք այս շարժումը, ազատություն Հայաստանին, ազատություն Պաղեստինին», Մատենադարանի հարթակում ապրիլի 6-ի հանրահավաքին հայտարարեց Հայ ազգային կոնգրեսի համակարգող Լևոն Ձուրաբյանը՝ գտնվելով Լևոն Տեր-Պետրոսյանից ընդամենը մի երկու մետր հեռավորության վրա: Դժվար է ասել, թե ՀԱԿ-ը լուրջ կապեր ունի պաղեստինցիների հետ, կամ արդյոք այնպիսի ռեսուրսների է արդեն տիրապետում, որ որոշել է բացահայտորեն դեմ դուրս գալ Իսրայելի իշխանություններին, որովհետև Պաղեստինի ազատությունն, ամեն դեպքում, անմիջականորեն առնչվում է նրա հարևանի հետ, բայց մի բան պարզ է, որ Հայ ազգային կոնգրեսը, փաստորեն, պատրաստ է միանալ այն բոլոր երկրների մղած պայքարին, որոնց քաղաքացիներից գոնե մեկը գոնե մի երկու բառանոց ողջույնի խոսքով հանդես կգա իրենց հանրահավաքներին. Ձուրաբյանի հայտարարությունից առաջ Մատենադարանի հարթակում ելույթ էր ունենում մի պաղեստինցի: Նրանից առաջ մի նիգերիացի էր, հետո իրանցի, հետո ֆրանսիացի: Կային նաև այլ ազգությունների մարդիկ, որոնք սակայն ելույթ չունեցան, բայց որոնց հայտնվելն ու գնալը հանրահավաքի մասնակիցներն ընդունեցին նույնքան բուռն ծափողջույններով, որքան բուռն ընդունում են իրենց առաջնորդ Լևոն Տեր-Պետրոսյանին:

Այս հանրահավաքը, ըստ էության, որևէ հետաքրքրություն չէր էլ երկայացնի, չլինեին այդ մարդիկ: Սովորական, ոչ այդքան մարդաշատ հանրահավաք էր: Հետո ելույթ ունեցողները ասեցին, թե իշխանությունները թատրոն են կազմակերպել, որ ոստիկանների սակավությունը միայն ցուցադրական



«Լևոն Տեր-Պետրոսյանի նոր ընկերները»

միջոցառում է, որպեսզի ապրիլի 6-ին Երևանում մեկնարկած Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (ՄԻՄՖ) համագումարի մասնակիցներին համոզեն, թե Հայաստանում մարդու իրավունքները պաշտպանված են և ցանկացողները կարող են ազատորեն հանրահավաքներ անցկացնել. նրանց ոչ ոք չի խանգարի: Բայց երբ ժամանեցին ՄԻՄՖ-ի մեկ



«Գալով այստեղ տեսա այս հավաքը մարդկանց, որ պայքարում են արդարության համար: Մարդու իրավունքների լիզայի ողջ դաշնությունը ձեռք էտ է». այսպիսի բովանդակային ելույթներ են ունենում միջազգային իրավապաշտպանները:

տասնյակից ավելի մասնակիցներ՝ «ազատության» վանկարկումներով, արդեն իսկապես պարզ դարձավ, որ հանրահավաքն իսկապես թատերական ներկայացում էր՝ այլ հարց է, թե որ կողմն էր որոշել այն բեմադրել:

Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի համաժողովի անցկացումը Հայաստանում ինքնին նշանակալի երևույթ էր: Բայց այն բանից հետո, երբ պարզվեց, որ այս համաժողովում ելույթ են ունենալու Հայաստանի նախագահը և մի շարք այլ պաշտոնյաներ, հայաստանյան մի շարք իրավապաշտպաններ որոշեցին այն բոյկոտել: Ի դեպ, Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանը ևս չի մասնակցելու այս համաժողովին այն պարզ պատճառով (նա ներկա է եղել միայն բացմանը), որ մարդու իրավունքների պաշտպանների այս կազմակերպությունը նրան ուղղակի չի հրավիրել:

Ի տարբերություն Հայաստանի ՄԻՊ-ի, Լևոն Տեր-Պետրոսյանը նախօրոք դաստիարակչական միջոցառումներ է ձեռնարկել: ՄԻՄՖ-ի նախագահ Սուրեն Բելասսենի հետ հանդիպման ժամանակ առաջին նախագահը պատմել է, որ Հայաստանում ժողովրդավարության և մարդու իրավունքների ոլորտում վիճակը վատ է, որ քաղաքատարկյալներ կան և դրանից հետո դիմել շանտաժի հայտնի և վաղուց արդարացված մեթոդին՝ ասելով, որ «եթե առաջիկայում տեղի ունենալիք ՄԻՄՖ կոնգրեսը սկզբունքային դիրքորոշում չարտահայտի այս հարցերի վերաբերյալ, ապա դա մի կողմից խորը հիասթափություն կպատճառի հասարակությանը, մյուս կողմից՝ մեծ նվեր կհանդիսանա Հայաստանի բռնապետական իշխանությանը՝ նրանց խրախուսելով էլ ավելի խստացնել քաղաքական ճնշումներն ու հալածանքները»: Հանրահավաքը ցույց տվեց, որ Տեր-Պետրոսյանի «խրատները» տեղ են հասել. ՄԻՄՖ-ի նախագահը մի քանի գործընկերներով եկավ հայաստանյան ընդդիմադիրների հետ «ազատություն» գոռալու:

Դժվար է ասել, թե ովքեր են այս մարդիկ, ինչ են ներկայացնում իրենցից, ինչ են արել իրենց երկրներում: Հարկավ, նրանցից շատերն իսկապես լուրջ ներդրում ունեն մարդու իրավունքների պաշտպանության հարցում, շատերը նախկինում եղել են քաղաքատարկյալներ: Բայց 2008թ. Հայաստանի նախագահական ընտրություններից հետո հայտնված «քաղաքատարկյալներն» ապացուցեցին, որ ամեն քաղաքատարկյալի չէ, որ



«Լևոն Տեր-Պետրոսյանի նոր ընկերները»

կարելի է քաղբանտարկյալ կոչել, որովհետև բացառված չէ, որ, օրինակ, Մուշեղ Մաղաթեյանը ևս մի գեղեցիկ օր դառնա միջազգային իրավապաշտպան՝ իրեն ներկայացնելով նաև նախկին քաղբանտարկյալ:

Մեկ այլ, ավելի հետաքրքիր հարց է այն, թե ինչպիսի երկրներ են ներկայացնում ՄԻՄԳ-ի անդամները: Մատենադարանի հարթակ եկածների մեջ զգալի թիվ էին կազմում աֆրիկյան երկրներից ժամանածները: Այս մարդիկ եկել և Հայաստանում պահանջում էին հարգել մարդու իրավունքները: Նման պահանջով հանդես գալն, իհարկե, բավական մոդայիկ է: Բայց որքան էլ Հայաստանում մարդու իրավունքների վիճակը հեռու է կատարյալ լինելուց, կարելի՞ է այն գոնե մոտավոր համեմատության մեջ դնել աֆրիկյան երկրներում առկա վիճակի հետ: Համեմատողներին կարելի է ընդամենը մի ամսով գործուղման ուղարկել սև մայրցամաք:

Իսկ ապրիլի 6-ի հանրահավաքն իսկապես գունագեղ միջոցառում էր, որից գոհ մնացին թե՛ մասնակիցները, թե՛ գլխավոր կազմակերպիչը: Եվ այս թատերական ներկայացումը ևս մեկ անգամ ապացուցեց, որ Հայաստանում հանրահավաքները չեն կազմակերպվում են հանուն և ի բարօրություն ժողովրդի, այլ դրանք ընդամենը ներկայացումներ են՝ արտասահմանյան այս կամ այն կազմակերպություններին ինչ-որ բան ցույց տալու նպատակով: Այս մեկը ՄԻՄԳ-ի պատվին էր:




«Նիգերիայի ներկայացուցիչ Եզիկե Իբուկիուկու Օհաբունեսայուն մեծ ժողովրդականություն վայելեց»

<http://nationalidea.am/printnews.php?pg=publications&id=3409>

Միջազգային քրեական դատարանն իրավասու է անդրադառնալու Հայոց ցեղասպանության դատական կարգով ճանաչման հարցին

April 7, 2010

Panorama.am



Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Գևորգ Դանիելյանն ընդունել է Միջազգային քրեական դատարանի դատախազ պարոն Լուի Մորենո-Օկամպոյին, իսկ այնուհետև՝ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի ղեկավար Յանեշ Լենարչիչին և նրանց ուղեկցող պատվիրակությանը:

Հիշյալ երկու բարձրաստիճան անձինք Երևանում են գտնվում Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) 37-րդ համագումարի աշխատանքներին մասնակցելու նպատակով: Ըստ արտադարձաբարության նախարարության մամուլի բաժնի, Լուի Մորենո-Օկամպոյի հետ, մասնավորապես, քննարկվել է Հայոց ցեղասպանության հարցում Հայաստանի դիրքորոշման, ինչպես նաև՝ այդ ոճրագործության դատական ճանաչման հեռանկարների հարցը: Մասնավորապես, կողմերը հանգրվանել են այն եզրահանգմանը, որ Միջազգային քրեական դատարանն իրավասու է անդրադառնալու Հայոց ցեղասպանության դատական կարգով ճանաչման հարցին: Միաժամանակ, պարոն Լուի Մորեն-Օկամպոն կարծիք է հայտնել, որ կոնկրետ այդ հարցին անդրադառնալու իրավական լիարժեք հենք ապահովելու նկատառումով անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել Հռոմի դատավարության համաձայնագրի առնչությամբ Սահմանադրական դատարանի դիրքորոշումը:

Կոնկրետ Հայոց ցեղասպանության առնչությամբ Գևորգ Դանիելյանը նկատել է, որ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը անհրաժեշտ է առաջին հերթին Թուրքիային և, ընդհանրապես՝ բոլոր ժողովուրդներին ու պետություններին, քանզի այդ ոճրագործությունը, ցավոք, դարձել է իրական սպառնալիք՝ ցանկացած տարածաշրջանում: Որևէ մեկը դեմ չէ, որ իրավապաշտպան կազմակերպությունները իրենց բոլոր ուժերը ուղղեն այժմեական խնդիրների վրա, սակայն դրանք կարող են տրամաբանական հանգրվանի հասնել, եթե չեն անտեսվում հիմնարար նշանակություն ունեցող ոճրագործությունները:

Յանեշ Լենարչիչը, իր գոհունակությունը հայտնելով ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի կողմից հրապարակված «Դատավարությունների դիտարկում» զեկույցի կապակցությամբ իշխանությունների արձագանքի առնչությամբ, միաժամանակ հայտնել է պատրաստակամություն՝ ապահովելու համապատասխան փորձագետների համատեղ աշխատանք: Մասնավորապես, կողմերը համաձայնվել են, որ նպատակահարմար է աշխատանքները կազմաերակել 2 փուլով. առաջին փուլը կվերաբերի միայն զեկույցում ներառված որոշ հարցերի լրացուցիչ քննարկմանը, իսկ երկրորդ փուլը՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի առնչությամբ տարածայնությունների մասնագիտական փորձաքննությանը:

Գ. Դանիելյանի առաջարկով, Յանեշ Լենարչիչը տվել է նաև որոշ պարզաբանումներ զեկույցի առանձին դրույթների առնչությամբ: Մասնավորապես, հստակ պարզաբանվել է «նոր անկախ քննչական մարմին» ստեղծելու վերաբերյալ դրույթը: Ըստ Յանեշ Լենարչիչի, զեկույցում ոչ թե ընդգծված է ինստիտուցիոնալ առումով նոր քննչական մարմին ստեղծելու, այլ այնպիսի ընթացակարգեր սահմանելու խնդիրը, որի դեպքում քննիչների կամ մինչդատական վարույթ իրականացնող պաշտոնատար անձի կողմից դատավարության մասնակիցների, մասնավորապես տուժողների և կասկածյալների, մեղադրյալների նկատմամբ բռնություններ գործադրելու վերաբերյալ յուրաքանչյուր հաղորդում անհապաղ և անվերապահորեն դառնա քննարկման առարկա հենց այդ քննչական մարմնում: Իսկ այդ անձանց ցուցմունքները, որպես ապացույց չեն ընդունվի, եթե վերջիններիս կողմից այդ բնույթի հաղորդումները նշված կարգով չքննարկվեն:

Կողմերը պայմանավորվել են շարունակել համագործակցությունը և նպաստել մի շարք այլ օրենսդրական ակտերի մշակման աշխատանքներին: Մասնավորապես, այս փուլում

առանցքային նշանակություն ունեցող համարվել են «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքը և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը:

<http://panorama.am/am/society/2010/04/07/genocide/>

Հին կարգախոսներ, նոր շրջապատ. հայ ընդդիմադիրները ոգևորված էին՝ իրենց հանրահավաքին FIDH-ի մասնակցությամբ

ՄԻՐԱՆՈՒՅՇ ԳԵՒՈՐԳՅԱՆ

7 April, 2010

ArmeniaNow.com



Երեքշաբթի երեկոյան՝ ապրիլի 6-ին, ընդդիմադիր Հայ ազգային կոնգրեսի (ՀԱԿ) հանրահավաքը իշխանությունների վարած ներքին և արտաքին քննադատության արդեն մշտական ֆոնի վրա առանձնացավ Երևանում գտնվող Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) 37-րդ համագումարի մասնակիցների ներկայությամբ:



FIDH նախագահ Սուեր Բելասենը երկու ձեռքով հաղթանակի նշան է ցույց տալիս ընդդիմության ապրիլի 6-ի հանրահավաքի մասնակիցների ներկայությամբ

Հավաքված ժողովուրդը մեծ խանդավառությամբ ընդունեց աշխարհի տարբեր երկրների իրավապաշտպանների ելույթները, որոնք պահանջում էին «հայ քաղբանտարկյալների անհապաղ ազատ արձակում»: FIDH նախագահ Սուեր Բելասենը նույնիսկ հայերեն վանկարկեց՝ ազատությո՜ւն:

«Մենք բոլորս այստեղ ենք՝ ձեզ հետ, հանուն քաղբանտարկյալների ազատության», - ասաց Բելասենը:

ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը (նրա աջակիցները 2008 թ. վիճահարույց նախագահական ընտրություններից հետո փողոցներում անդադար հանրահավաքներ էին կազմակերպում, ինչն էլ հանգեցրեց բախումների) այս անգամ խոսեց հիմնականում «իշխանական ճամբարում նկատվող աննախադեպ խուճապի և դրա հետևանքով սկիզբ առած ներքին զգվոտոցի ու ինքնահոշոտման գործընթացի և Ղարաբաղի խնդրի աղետալի հանգուցալուծման վերահաս իրողության» մասին:

(Հայաստանի իշխանությունները հերքում են, որ 2008 թ. մարտի 1-2-ի խռովության մեջ ունեցած դերակատարության համար կալանավորված, դատված կամ դատապարտված ընդդիմության որևէ ներկայացուցիչ մեղադրվել է քաղաքական հայացքների համար:)

Ըստ Տեր-Պետրոսյանի՝ հակառակ թվացյալ հրատապությանը, ներկա պահին անիմաստ է խոսել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման մասին, քանի որ այն կախված է բացառապես Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծումից կամ ղարաբաղյան կարգավորման գործընթացում էական տեղաշարժի արձանագրումից:

«Իսկ էական տեղաշարժ հասկացության տակ, Մինսկի խմբի համանախագահների միջև գոյացած կոնսենսուսի համաձայն, այսօր հասկացվում է ոչ այլ ինչ, եթե ոչ [ներկայումս հայկական զինված ուժերի վերահսկողության ներքո գտնվող Ղարաբաղի հարակից] հինգ շրջանների անմիջական վերադարձը Ադրբեյջանին, անորոշ թողնելով ապագայում լուծվելիք մնացյալ սկզբունքային հարցերը, ինչպիսիք են, մասնավորապես, խաղաղապահ ուժերի կամ դիտորդների տեղակայումը, Լաչինի միջանցքի ռեժիմը և Ղարաբաղի վերջնական կարգավիճակը: Այսինքն՝ հայկական կողմը կատարում է միանգամայն շոշափելի, կարելի է ասել, նյութական զիջում՝ դրա դիմաց ստանալով միայն դատարկ ու չերաշխավորված խոստումներ, եթե, իհարկե, [որպես այդպիսին] հաշվի չառնենք հաղորդակցության ուղիների մասնակի ապա-շրջափակումը և հայ-թուրքական սահմանի բացումը», - ասաց Տեր-Պետրոսյանը:

Ըստ Տեր-Պետրոսյանի ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը այժմ կանգնած է դժվարին երկրնտրանքի առջև՝ կամ ստորագրել ԼՂՀ խնդիրը կարգավորող համաձայնագիրը և հարուցել սեփական ժողովրդի ցասումը, կամ ժամանակ շահելու համար մերժել այն՝ զայրացնելով միջազգային հանրությանը:

«Իրավիճակի պարադոքսն այն է, որ երկու դեպքում էլ նա [Սարգսյանը], իշխանությունը կորցնելու է. ստորագրելու պարագայում նրան տապալելու են ներքին ուժերը, իսկ մերժելու պարագայում՝ միջազգային հանրությունը՝ նրա վերաբերյալ կուտակած առատ կոմպրոմատների օգտագործմամբ՝ սկսած կեղծված ընտրություններից ու խոցելի լեզիտիմությունից, ավարտած հոկտեմբերի 27-ի ու մարտի 1-ի սպանդներով, քաղաքական հալածանքներով, անձնական կոռուպցիայով և անվայել հոբբիներով», -

կանխագուշակեց Տեր-Պետրոսյանը:

Նա հավելեց, որ Սարգսյանը կրնորի ստորագրման տարբերակը և սկուտեղի վրա Ադրբեջանին կհանձնի հինգ շրջանները, որպեսզի միջազգային հանրությունից գոնե անձնական անձեռնմխելիությունը և ունեցվածքը վայելելու երաշխիքներ ստանա:

Հանրահավաքի ընթացքում խոսվեց նաև գազի սակագների բարձրացման վերաբերյալ: ՀԱԿ-ի ներկայացուցիչները հայտարարեցին, որ ապրիլի 6-ին՝ 6 հազարից ավելի ընտանիքների հետ միասին իրենք հայց են ներկայացրել ՀՀ վարչական դատարան, որպեսզի անվավեր ճանաչվի Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝ գազի սակագինը 37,5 տոկոսով բարձրացնելու որոշումը:

ՀԱԿ-ի համակարգող Լևոն Զուրաբյանն ասաց, որ ապրիլին Հայաստանում սպասվում են բուռն զարգացումներ, այդ պատճառով սխալ են համարում նախօրոք հայտարարել հաջորդ հանրահավաքի օրը: Հանրահավաքն ավարտվեց երթով:

http://www.armenianow.com/hy/news/22106/armenian_opposition_rally

ՀԵՆՑ ԱՅՆՊԵՍ ՉԵՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԵԿԵԼ

6 April 2010

Aravot

«Մենք եկել ենք այնպիսի երկրներից, որտեղ մարդիկ նույնպես բախվում են նմանատիպ հրեշավոր եւ ծանր իրավիճակների: Ես ուզում եմ ասել, որ այսպիսի դեպքերում, երբ իրավիճակը թվում էր նույնքան անելանելի եւ փակուղային, ինչպես այստեղ, որոշ երկրներում մենք հասել ենք նրան, որ մեղավորները ամենաբարձր մակարդակներում, այդ թվում՝ գործող նախագահների, եթե չեն կանգնել ազգային դատարանի, ապա միջազգային ատյանների առջև կանգնել են: Վստահ եղեք, որ մենք չենք եկել այստեղ, որպեսզի սեղմենք որոշ մարդկանց ձեռքերը, այլ եկել ենք՝ ցույց տալու մեր այդ փորձը եւ ասելու, թե ինչ ենք ուզում եւ ինչի ենք ձգտում: Մենք որոշել ենք գալ այստեղ՝ ցույց տալու, որ մենք նրանց կողմից ենք, ովքեր տառապում են, մենք նրանց կողմից ենք, որոնց սպանում են, նրանց կողմից, ովքեր զոհվել են ազատության եւ սեփական արժանապատվության համար», - երեկ մարտիմեկյան զոհերի եւ նախկին ու ներկա քաղաքատարկյալների հարազատների հետ հանդիպման ժամանակ հայտարարել է Երեւանում գտնվող Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) նախագահ Սուեր Բելասենը՝ վստահեցնելով, որ իրեն հասանելի ամենաբարձր մակարդակներում կպատմի այն, ինչ լսել է երեկ զոհվածների ծնողներից:

<http://aravot.am/am/articles/politics/77149/view>

Սուեր Բելասեն. Հայաստանի մայրաքաղաքն այսօր վեր է ածվել մարդու իրավունքների մայրաքաղաքի

06/04/2010

Panorama.am



Նախագահ Սերժ Սարգսյանն այսօր ընդունել է Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի նախագահ տիկին Սուեր Բելասենին, ով Երևանում է ֆեդերացիայի 37-րդ համաժողովի անցկացման առիթով: Ըստ նախագահի մամուլ գրասենյակի, Սերժ Սարգսյանը բարձր է գնահատել Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի՝ Հայաստանի հետ ծավալած համագործակցությունը և ողջունել նման ներկայացուցչական կազմով համաժողովը Երևանում անցկացնելու որոշումը:

ՀՀ նախագահը նշել է, որ Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում դեռևս բազմաթիվ խնդիրներ կան, սակայն ակնհայտ է, որ հնարավոր չէ դրանք բոլորը միանգամից լուծել: «Այստեղ մենք առաջնորդվում ենք ամեն ինչ համեմատության մեջ դիտարկելու սկզբունքով. եթե այսօր այդ խնդիրներն ավելի շատ են քան մի քանի տարի առաջ, ուրեմն, մեր գործունեությունը խիստ վերանայման կարիք ունի: Իսկ եթե առաջընթաց է նկատվում, ապա նշանակում է, որ գործադրվող ջանքերը ճիշտ ուղղությամբ են», նշել է նախագահ Սարգսյանը:

Տիկին Բելասենը շնորհակալություն է հայտնել ՀՀ նախագահին՝ համաժողովը բարձր մակարդակով անցկացնելու գործում Հայաստանի ներդրած ջանքերի համար: Նա ՄԻՄԾ-ի համաժողովի անցկացումը մեր տարածաշրջանում բնորոշել է որպես պատմական իրադարձություն՝ նշելով, որ «Հայաստանի մայրաքաղաքն այսօր վեր է ածվել մարդու իրավունքների մայրաքաղաքի»: Տիկին Բելասենն ասել է, որ մարդու իրավունքների պաշտպանության առումով Հայաստանը տարածաշրջանում շահեկան դիրքերում է, և այսօր Հայաստանի միջոցով կարևորվում է ողջ տարածաշրջանը:

Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի նախագահը հույս է հայտնել, որ Հայաստանի հետ համագործակցությունը կշարունակի զարգանալ՝ կատարելագործելով մարդու իրավունքների պաշտպանությանը կոչված հայաստանյան կառույցների գործունեությունը: Նա միաժամանակ նշել է, որ Հայաստանի իշխանություններին ուղղված իր բազմաբնույթ դիմումները երբևէ անարձագանք չեն մնում:

ՀՀ նախագահը հաջողություն և արդյունավետ աշխատանք է մաղթել համաժողովի մասնակիցներին և հույս հայտնել, որ նրանք այս օրերին նաև հնարավորություն կունենան ծանոթանալու մեր երկրի պատմությանն ու ավանդույթներին:

<http://www.panorama.am/am/politics/2010/04/06/suer-belassen/?sw>

ԵՐԿՈՒ ԾԱՆՐ ՀԱՆԴՊՈՒՄ

6 April 2010

Aravot



FIDH-ի նախագահ Սուեր Բելասենը երեկ հանդիպել է մարտիմեկյան զոհերի, նաև նախկին ու ներկա քաղաքականության հարազատների հետ:

Երեկ Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) նախագահ Սուեր Բելասենի համար, ըստ ամենայնի, շատ հազեցած ու լարված օր է եղել: Նա իր նախաձեռնությամբ հանդիպել է ե՛ւ մարտիմեկյան զոհերի, ե՛ւ նախկին ու ներկա քաղաքականության հարազատների հետ: Մինչ մարտիմեկյան զոհերի հարազատները հանդիպում էին տիկին Բելասենի հետ, զոհերի հարազատներին աջակցող ակտիվիստները, որոնք 10 զոհերի մեծադիր լուսանկարները բռնած՝ երթով հասել էին «Քաղաքացիական հասարակության ինստիտուտի» գրասենյակ (հանդիպումներն այստեղ են տեղի ունեցել), շենքի դիմաց ակցիա էին կազմակերպել՝ որպես մարտիմեկյան սպանությունների բացահայտված չլինելու դեմ բողոքի նշան: Իսկ զոհերի հարազատները, ինչպես տեղեկանում ենք «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» իրավապաշտպան կազմակերպության պաշտոնական կայքից, պատմել են մարտյան դեպքերի մանրամասները՝ փաստելով, որ իրենց որդիները բախման հետևանքով չեն զոհվել, այլ խաղաղ ցույցի էին դուրս եկել ու կրակոցներից են զոհվել իրենց մայրաքաղաքի կենտրոնում՝ խաղաղ պայմաններում: Զոհվածներից Արմեն Ֆարմանյանի հայրը՝ Վաչագան Ֆարմանյանը, նշեց, որ թեպետ արյունալի դեպքերից անցել է երկու տարի, սակայն սպանությունները դեռ բացահայտված չեն:

«Դատախազությունը, իրավապահ մարմինները ոչնչով չեն զբաղվում, ընդհակառակը՝ անընդհատ ուզում են փակել «Մարտի 1»-ի էջը: Իմ որդին ո՛չ զենք է ունեցել, ո՛չ լուս, ո՛չ բենզին: Մի թե խաղաղ ցուցարարին սպանում են»□

Զոհերից մեկի՝ Սամվել Հարությունյանի հայրն էլ պատմեց, որ իր որդին հայտնաբերվել է մարտիմեկյան դեպքերից 3 օր անց՝ հիվանդանոցում, անճանաչելի վիճակում, իսկ 41 օր անց նա մահացել է. «Քրիստոնեական կրոնի համաձայն, այսօր մեռելոց է, եւ մենք պիտի գերեզման գնայինք, բայց եկել ենք այստեղ՝ հավատով, որ դուք այս հարցին ճիշտ լուծում կտաք»: Իսկ զինծառայող Տիգրան Աբգարյանի մայրը՝ տիկին Ռուզանը, արցունքոտ աչքերով դիմել է Սուեր Բելասենին. «Ախր, իմ երեխան 18 տարեկան էր, ոստիկանական զորքերի զինծառայող: 40 օր անգիտակից պառկած էր, 19-ամյակը հենց հիվանդանոցում լրացավ: Եթե իմ որդին զոհվեր սահմանի վրա կամ ռազմի դաշտում, կմտածեի, որ հայրենիքի համար տվեցի: Ես նրան հայրենիքի պաշտպան էի ուղարկել: Ո՞վ սպանեց իմ զինվորին: Որդուս սպանել են քաղաքի կենտրոնում՝ Լեռնի փողոցի վրա, որտեղ ցուցարարներ չեն եղել: Ինչպե՞ս պատահեց, որ իմ որդին զոհվեց: Ո՞վ է կրակել 18-ամյա զինվորի վրա»:

FIDH-ի նախագահը այդ հանդիպման ժամանակ հայտարարել է, թե ինքը գոհերի հարազատների վիշտը թեև մեղմել չի կարող, բայց կարող է օգնել նրանց՝ արդարադատությամբ եւ ճշմարտությամբ: «Հավատացեք, որ մենք չենք եկել այստեղ ինչ-որ մարդկանց ձեռք սեղմելու համար: Մենք եկել ենք բարձրաձայնելու այս կարեւոր հարցերի մասին եւ պահանջելու, որ արդարադատություն իրականացվի: Ես պաշտոնապես խոստանում եմ, որ ինձ հասանելի բոլոր բարձր աստիճաններում կբարձրացնեմ ձեզ հուզող հարցերը: Ողջ աշխարհը մեզանից կիմանա, թե ինչ է տեղի ունեցել ձեր զավակների հետ: Կցանկանայի պաշտոնապես ասել, որ 2008-ի մարտից ի վեր այդ թեման երբեք մեր ուշադրությունից դուրս չի մնացել եւ դուրս չի մնա», - շեշտեց FIDH-ի նախագահը:

«Հուսով եմ, որ հասկանում եք նաեւ, որ եթե եկել ենք այստեղ, ապա դա նրա համար չէ, որ բարձրաստիճան պաշտոնյաների ձեռքը սեղմենք, այլ՝ որ օգնենք իրավապաշտպաններին ու այն մարդկանց, ովքեր դարձել են անարդարության զոհ: Մենք երբեք չենք կարող որեւէ մեկի ազատության մասին մտածել՝ նստելով նեղ շրջապատում: Եթե բարձրաստիճան ներկայացուցիչներին հրավիրում ենք ֆորում, ապա նրա համար, որ հնարավորություն ունենանք ուղղակիորեն նրանց դիմելու: Այս ամենն արվում է ձեր ամուսինների, կոլեգաների ու տղաների ազատության համար, ու իզուր չէ, որ մեզ հետ եկել են նաեւ միջազգային քրեական դատարանի գլխավոր դատախազն ու այլ շատ իրավապաշտպաններ», - երեկ նախկին ու ներկա քաղբանտարկյալների հարազատների հետ հանդիպման ժամանակ էլ հայտարարել է FIDH-ի նախագահը: Տիկին Բելասենն ու նաեւ կազմակերպության ներկայացուցիչ Անտուան Բեռնարը փորձել են փարատել քաղբանտարկյալների հարազատների կասկածները, թե FIDH-ը Հայաստան է եկել գործող ռեժիմին լեգիտիմացնելու համար:

Ի դեպ, ի տարբերություն «Մարտի 1»-ի գոհերի հարազատների հետ հանդիպման՝ FIDH-ի եւ քաղբանտարկյալների հարազատների հանդիպումն անցել է լարված մթնոլորտում: Քաղբանտարկյալների հարազատները Սուեր Բելասենից պահանջել են համաժողովից հետո ՀՀ-ում մարդու իրավունքների ոլորտի վերաբերյալ հայտարարություն անել հե՛նց մեր երկրում եւ ոչ թե հեռանալուց հետո: «Մինչեւ Երեւան գալը՝ մենք հայտարարել ենք, որ պետք է անհապաղ ազատ արձակվեն բոլոր քաղբանտարկյալները, եւ մեր հայտարարությունը ուժի մեջ է», - իր հերթին հավաստիացրել է տիկին Բելասենը՝ հավելելով, որ մարտիմեկյան դեպքերի եւ դրանց հետեւանքների գնահատականը FIDH-ը տվել է դեպքերից անմիջապես հետո եւ չի խուսափել «քաղբանտարկյալ» բառից: Ի դեպ, քաղբանտարկյալների հարազատները FIDH-ի ներկայացուցիչներին հրավիրեցին այսօր նախատեսված Հայ ազգային կոնգրեսի հանրահավաքին, նաեւ FIDH-ի ներկայացուցիչներին առաջարկեցին շրջել մարզային ավտոկայաններում եւ տեսնել, թե իշխանություններն ինչպես են փակում Երեւան բերող ավտոճանապարհները:

ՆԱԻԲԱ ՄԱՍԻԿՈՆՅԱՆ

<http://aravot.am/am/articles/politics/77150/view>

Բելասենը կխոսի Մարտի 1-ի մասին

6 April 2010

Հայկական ժամանակ



Այսօր, ժամը 13-00-ին, պետական ֆիլհարմոնիայի դահլիճում կսկսվի Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի 37-րդ համագումարի շրջանակներում անցկացվելիք «Արդարադատություն, նոր մարտահրավերներ» համաժողովը: Այս միջոցառումը մեծ աղմուկ է առաջացրել Հայաստանում: Հիշեցնենք, որ հայաստանյան մի շարք հասարակական կազմակերպություններ, որոնք զբաղվում են մարդու իրավունքների պաշտպանության հարցերով, հայտարարել են համաժողովը բոյկոտելու մասին, նույնիսկ Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանն է հայտարարել, որ հրաժարվում է ելույթ ունենալ համաժողովի ընթացքում: Թե հ/կ-ների ներկայացուցիչներին, եւ թե հասարակության ավելի լայն շերտերին զայրացրել է այն հանգամանքը, որ համաժողովում ելույթ են ունենալու ՀՀ իշխանությունները, պետական այն ինստիտուտների ղեկավարները, որոնք ամեն օր զբաղված են Հայաստանում մարդկանց իրավունքները ոտնահարելով: Եւ ահա, մի քանի օր է ՀՀ-ում գտնվող՝ Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) նախագահ Սուեր Բելասսենը հանդիպումներ է ունենում մեր երկրում: Երեկ նա հանդիպել է Մարտի 1-ի գոհերի եւ քաղբանտարկյալների հարազատների հետ, եւ այս հանդիպումների ժամանակ հավաստիացրել, որ իրենց համաժողովի հիմնական նպատակը Մարտի 1-ի մարդասպանների պատժին ու բոլոր քաղբանտարկյալների ազատ արձակմանը հասնելն է: Ասվել է, որ Մարտի 1-ի եւ քաղբանտարկյալների խնդիրները լինելու են համաժողովում FIDH-ի նախագահի ելույթի հիմնական թեմաները: Իսկ ահա, նախօրեին FIDH-ի նախագահ Սուեր Բելասսենի հետ է հանդիպել ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը: Ինչպես նշված է Կոնգրեսի տարածած հաղորդագրության մեջ, հանդիպման ընթացքում Լևոն Տեր-Պետրոսյանը ներկայացրել է Հայաստանում ժողովրդավարության եւ մարդու իրավունքների ոլորտում տիրող անմխիթար վիճակը, դատական համակարգի լիակատար կախվածությունն ու իշխանությունների պատժիչ գործիքի վերածվելու հանգամանքը եւ, մասնավորապես, քաղբանտարկյալների առկայության փաստը: «Առաջին նախագահը շեշտել է նաեւ, որ եթե առաջիկայում տեղի ունենալիք ՄԻՄՖ կոնգրեսը սկզբունքային դիրքորոշում չարտահայտի այս հարցերի վերաբերյալ, ապա դա մի կողմից՝ խորը հիասթափություն կպատճառի հասարակությանը, մյուս կողմից՝ մեծ նվեր կհանդիսանա Հայաստանի բռնապետական

իշխանությանը՝ նրանց խրախուսելով էլ ավելի խստացնել քաղաքական ճնշումներն ու հալածանքները»,- ասված է Կոնգրեսի հաղորդագրության մեջ:

Ի դեպ, երեկ քաղբանտարկյալների հարազատների հետ հանդիպման ժամանակ Սուեր Բելասենը հպարտությամբ փոխանցել է Լեւոն Տեր-Պետրոսյանի հիշեցումն այն մասին, որ 1988 թվականին Լեւոն Տեր-Պետրոսյանը բանտից ազատվել է հենց իրենց կազմակերպության՝ FIDH-ի միջնորդությամբ:

<http://www.armtimes.com/5432>

ՀՀ ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՀԸ ՀԱՆՂԻՊԵԼ Է ՍՈՒԵՐ ԲԵԼԱՍԵՆԻ ՀԵՏ

6 April 2010

Aravot

Ապրիլի 4-ին ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը հանդիպել է Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) նախագահ Սուեր Բելասենին: Հանդիպման ընթացքում ՀՀ առաջին նախագահը ներկայացրել է Հայաստանում ժողովրդավարության եւ մարդու իրավունքների ոլորտում տիրող անմխիթար վիճակը, դատական համակարգի լիակատար կախվածությունն ու իշխանությունների՝ պատժիչ գործիքի վերածվելու հանգամանքը, մասնավորապես նաեւ քաղբանտարկյալների առկայության փաստը: Առաջին նախագահը շեշտել է, որ եթե FIDH-ի՝ առաջիկայում տեղի ունենալիք համաժողովը սկզբունքային դիրքորոշում չարտահայտի այս հարցերի վերաբերյալ, ապա դա մի կողմից՝ խոր հիասթափություն կպատճառի հասարակությանը, մյուս կողմից՝ մեծ նվեր կհանդիսանա Հայաստանի բռնապետական իշխանությանը՝ նրանց խրախուսելով էլ ավելի խստացնել քաղաքական ճնշումներն ու հալածանքները: Հանդիպմանը մասնակցել են նաեւ Կոնգրեսի կենտրոնական գրասենյակի ներկայացուցիչներ Լեւոն Զուրաբյանն ու Ավետիս Ավագյանը:

<http://aravot.am/am/articles/politics/77155/view>

Նոբելյան մրցանակակիրը «համեմատաբար բարվոք» է համարում մարդու իրավունքների վիճակը Հայաստանում



(PHOTOLUR)

Իրանցի իրավապաշտպան, Խաղաղության Նոբելյան մրցանակակիր Շիրին Էբադի
06.04.2010

Radio Free Europe / Radio Liberty

Հասմիկ Սմբատյան

Երևանում անցկացվող Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) 37-րդ համագումարին մասնակցելու համար Հայաստան եկած իրանցի իրավապաշտպան, Խաղաղության Նոբելյան մրցանակակիր Շիրին Էբադին հետխորհրդային երկրների շարքում «համեմատաբար բարվոք» է համարում Հայաստանում մարդու իրավունքների վիճակը□

Մինչև համաժողովի մեկնարկը լրագրողների հետ հանդիպմանը իրանցի իրավապաշտպանը, մասնավորապես, ասաց. - «Համագումարը Հայաստանում անցկացնելու որոշում կայացնելիս մենք չէինք պնդում կամ հավատում, որ այստեղ մարդու իրավունքների ոտնահարումներ չկան, մենք գիտենք, որ դրանք առկա են: Ամեն դեպքում մենք որոշեցինք այստեղ անցկացնել, քանի որ մտածեցինք, որ այստեղ այնքան վատ չէ, որքան մյուս երկրներում: Մենք միասնաբար կաշխատենք անել ամեն ինչ՝ իրավիճակը բարելավելու համար»□

«Մենք եկել ենք, որպեսզի Հայաստանը իրական առաջընթաց արձանագրի արդարադատության ոլորտում», - նույն ասուլիսում հայտարարեց Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի նախագահ Սուեր Բելասենը՝ հավելելով. - «Մեր գալու նպատակն այստեղ այն է, որ Հայաստանը իրական առաջընթաց ապրի, իսկ յուրաքանչյուր առաջընթաց հենվում է նախեստաջ արդարադատության իրականացման վրա»□

Համագումարը նվիրված է հենց արդարադատության ոլորտի նոր մարտահրավերներին:

«Հայաստանում մարդու իրավունքների վիճակը, մարտի 1-ի դեպքերի բացահայտումն ու

քաղաքական բանտարկյալներն են լինելու մեր ուշադրության կենտրոնում», - հայտարարեց Բելասենը՝ վերահաստատելով այն, ինչ ասել էր երեկ Մարտի 1-ի զոհերի հարազատների հետ ունեցած իր հանդիպման ժամանակ: - «Ես չեմ եկել միայն պաշտոնատար անձանց ձեռքերը սեղմելու համար, եւ երեկ ես դա ասացի զոհերի հարազատների հետ հանդիպմանը: Ոչ մի մարդ արարած, ոչ մի հայր կամ մայր չի կարող այն բաներից հետո, ինչ եւ լսեցի երեկ, մնալ անսիրտ եւ չփորձել ձեռնարկել հնարավորը, որպեսզի այդ հարցերին լուծում տրվի: Հետեւաբար մենք պետք է հիշեցնենք իշխանություններին, որ չի կարելի լռության մատնել այս ամենը, նրանք պետք է անեն ամեն ինչ, ամեն ինչ պետք է բացահայտվի: Մենք չենք եկել այստեղ պարզելներ բաժանելու ումանց, այդ բոլոր ոճիրները պետք է բացահայտվեն, եւ որեւէ մեկը չպետք է մնա անպատիժ: Ամեն ինչ անելու ենք նաեւ քաղբանտարկյալներին ազատ արձակելու համար: Վստահ եղեք, որ միջազգային համերաշխությունը ձեր կողքին է, եւ մենք կհասնենք նրանց ազատ արձակմանը»:

Հարկ է նշել, որ հայաստանյան իրավապաշտպաններից ոմանք բոյկոտել են համագումարը:

«Դա իրենց՝ մեր կոլեգաների դիրքորոշումն է, եւ մենք ողջունում ենք ցանկացած դիրքորոշում», - ասաց Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիային անդամակցող «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» կազմակերպության կառավարման խորհրդի նախագահ Արտակ Կիրակոսյանը:

Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանը եւս հրաժարվել է ելույթ ունենալ համագումարում:

«Մեզ համար կարեւոր էր, որ քաղբանտարկյալներին եւ մարտի 1-ին առնչվող հարցերը համագումարում բարձրացվեին առավելագույնս ապակուսակցական ձեւով, սակայն օմբուդսմենը հրաժարվեց ելույթ ունենալու իր հնարավորությունից՝ պատճառաբանելով թե՛ այդ ֆորմատով չի կարող ներկայացնել իր կարծիքը: Օմբուդսմենի բացակայության բացը կլրացնի Արտակ Զեյնալյանը, ով զբաղվում է թե՛ զոհերի հարազատների իրավունքներով եւ թե՛ քաղբանտարկյալներ հարցերով», - ասաց Արտակ Կիրակոսյանը:

Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի նախագահ Սուեր Բելասենին այսօր ընդունել է Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը: Երկրի նախագահը հաջողություն եւ արդյունավետ աշխատանք է մաղթել համաժողովի մասնակիցներին եւ հույս հայտնել, որ նրանք այս օրերին նաեւ հնարավորություն կունենան ծանոթանալու մեր երկրի պատմությանն ու ավանդույթներին □

<http://www.azatutyun.am/content/article/2004323.html>

Երթն առաջնորդեցին քաղբանտարկյալները

22:44 | ԱՊՐԻԼ 06, 2010 | ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա1+



Հայ Ազգային Կոնգրեսի այսօրվա երթն առաջնորդեցին «քաղբանտարկյալները»:
Քաղբանտարկյալների հագուստներով՝ Հայ Ազգային Կոնգրեսի երիտասարդ անդամները զարմանք էին առաջացրել Երեւանի կենտրոնական փողոցներում: Երիտասարդներից ոմանք ստիպված էին դուրս գալ երթի շարքերից եւ անցորդներին իրազեկել, որ Կոնգրեսի այսօրվա հանրահավաքի եւ երթի հիմնական թեման ՀՀ-ում մարդու իրավունքների խնդիրն է, մասնավորապես դեռեւս քաղբանտարկյալների առկայությունը, մարտի 1-ի 10 սպանությունների բացահայտումը:
Կոնգրեսի հանրահավաքին Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի՝ FIDH-ի իրավապաշտպանների մասնակցությունը, նրանց ելույթները խիստ ոգեւորել էին երթի մասնակիցներին: «Այսօրվա հանրահավաքը ինձ հիշեցրեց 2008թ. փետրվարի 26-ի մեր հանրահավաքը, երբ Մերժ Սարգսյանը մարդկանց մարզերից ավտոբուսներով բերել էր իր հանրահավաքին, իսկ մարդիկ նրան լքեցին եւ միացան Տեր-Պետրոսյանին: Մեր իշխանությունները FIDH -ին թույլ տվեցին, որ գան Երեւան եւ համաժողով անցկացնեին, բայց նրանք եկան եւ միացան այսօրվա մեր հանրահավաքին: Սա նշանակում է, որ մեր պայքարը արդար է եւ ընդունելի աշխարհի համար: Մերժ Սարգսյանը պետք է հետեւություն անի այսօրվա հանրահավաքում հնչած ելույթներից»,- «Ա1+»-ին ասաց երթի մասնակից Տիգրան Ասատրյանը:

Ռուզաննա Սարգսյանին ոգեւորել էր հատկապես FIDH-ի նախագահ Սուեր Բելասենի ելույթը եւ մարտի 1-ի 10 սպանությունների բացահայտման հարցում հետեւողական լինելու խոստումները. «ՀՀ իշխանությունները պետք է հասկանան, որ ՀՀ-ն մի խուլ գյուղ չի եւ աշխարհը գիտի, թե ինչ կատարվել եւ կատարվում ՀՀ-ում: Եթե մինչ օրս այդ մասին լռում են, այդ լռությունն էլ իր գինն ունի, որը պետք է վճարի ոչ թե հայ ժողովուրդը, այլ Մերժ Սարգսյանն ու Ռոբերտ Քոչարյանը»:

Ի դեպ, Հայ Ազգային Կոնգրեսի այսօրվա երթին գերակշռում էին երիտասարդներն ու երեխաները: «Մենք գիտեինք, որ այսօր ոստիկանները չեն լինի, իսկ լինելու դեպքում էլ զուսպ կլինեն, դրա համար էլ չվախեցանք երեխաներին բերել երթի»,- ասաց 3 ամյա Կարինեի մայրը:

Այսօրվա երթի ողջ ընթացքում, որը սկսվեց Մատենադարանի մոտից, անցավ Մաշտոցի պողոտայով, Ամիրյան, Նալբանդյան, Թումանյան փողոցներում, երթի մասնակիցները հիմնականում վանկարկում էին. «Ազատություն», «Ազատ, անկախ Հայաստան», «Պայքար, պայքար»:

Ավանդույթի համաձայն՝ Հյուսիսային պողոտայում Կոնգրեսի անդամներն ու համակիրներին հրաժեշտ տվեց Տեր-Պետրոսյանը:

Վաղվա անելիքների մասին հայտարարեց Կոնգրեսի կենտրոնական գրասենյակի համակարգող Լեւոն Զուրաբյանը:

Վաղը ժամը 10.00-ից 13.00-ն Կոնգրեսի անդամները կհավաքվեն Հանրապետության

հրապարակում, որից հետո կրաժանվեն երկու խմբի՝ «Արմենիա-Մարիոթ» եւ «Էրեբունի» հյուրանոցների մոտ միջոցառումներ անցկացնելու համար: «Մենք ոչ թե բողոքի ակցիա կանենք, այլ մեր միջոցառումներով շնորհակալություն կհայտնենք FIDH-ի անդամներին մեր այսօրվա միջոցառումներին միանալու եւ իրենց ֆանտաստիկ ելույթների համար», -ասացին ակցիայի կազմակերպիչները <http://alplus.am/am/politics/2010/04/6/ert>

Հյուրերը մոտեցան ցուցարարներին

15:50 | ԱՊՐԻԼ 06, 2010 | ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Ա1+



Օպերայի շենքի դիմաց՝ Արամ Խաչատրյանի արձանի մոտ այսօր ծածանվում էին անգլերեն գրված ցուցապաստառներ ու քաղբանտարկյալների լուսանկարներ: Մի քանի տասնյակ քաղաքացի անընդմեջ վանկարկում էին՝ «Ազատություն քաղբանտարկյալներին», «Պայքար, պայքար, մինչեւ վերջ» եւ այլն: Ցուցարարների առաջին շարքում բանտարկյալների հագուստներով ու քաղբանտարկյալների լուսանկարները հագուստին ամրացրած ՀԱԿ ակտիվիստներն էին, ինչպես նաեւ 2008թ. մարտի 1-ի զոհերի հարազատները:

Այսօր Երեւանում՝ «Արամ Խաչատրյան» համերգասրահում մեկնարկել է Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի 37-րդ համագումարը, որին մասնակցելու համար Հայաստան են ժամանել 300 պատվիրակներ՝ աշխարհի տարբեր երկրներից: Թեւոս Մաթեոսյանը, ով հազել էր բանտարկյալի հագուստ, «Ա1+»-ին ասաց, որ իր հագուստը խորհրդանշում է, որ Հայաստանում դեռեւս կան քաղբանտարկյալներ, մարդու իրավունքները ոտնահարվում են ամեն քայլափոխի, եւ սա բողոքի հերթական ցույց է ընդդեմ տիրող իրավիճակի. «Եկել ենք այստեղ, որ համագումարի մասնակիցներին

իշխանությունները չիսաբեն ու ասեն, որ Հայաստանում ամեն ինչ կարգին է: Իմանան, որ համապետական քառս է տիրում»:

Մարտի 1-ին գոհված Գոռ Քլոյանի հայրը՝ Սարգիս Քլոյանը, զարմացած է, թե ինչու նման հեղինակավոր կազմակերպությունը Հայաստանում է կոնֆերանս անցկացնում:

«Ոնց կարելի է Հայաստանում անցկացնել մարդու իրավունքների միջազգային կոնֆերանս: Չէ՞ որ սա այն երկիրն է, որը ճանաչում է միայն փող, փող եւ շատ փող: Իշխանավորների աթոռներից արյան հոտ է փչում: Այդ արյունը մեր զավակների արյուն է: Նրանք եկել են իշխանության արյան վրայով»:

Օտարերկրյա պատվիրակությունների անդամներին ակցիայի մասնակիցները նամակներ էին հանձնում, որում կար 2008թ. մարտի 1-ի վերաբերյալ տեսասկավառակ: Նրանք անտարբեր չէին անցնում ցուցարարների կողքով, հետաքրքրվում էին, թե ինչու են հավաքվել այստեղ: Իսկ FIDH-ի նախագահ Սուեր Բելասենը մոտեցավ ցուցարարներին, գրկախառնվեց գոհվածների հարազատների հետ, այնուհետեւ բռունցքը վեր պարզելով՝ մտավ շենք:

Հակառակ հյուրերի՝ ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը շենք մտավ այլ դռնից, որպեսզի չհանդիպի ակցիայի մասնակիցներին: Ի դեպ, ի տարբերություն այլ ակցիաների այս անգամ տարածքը չէր հսկում որեւէ ոստիկան: Անգամ Պակիստանի ներկայացուցիչը «Ա1+»-ից հետաքրքրվեց, թե ինչպես է, որ ոստիկանները չեն մոտենում եւ արգելում որեւէ գործողություն անել:

<http://a1plus.am/am/politics/2010/04/6/protesters>

Մեր առաջին մտահոգությունը արդարադատության իրականացումն է

Ապրիլ 06, 2010

Hra.am



Այսօր հրավիրած ասուլիսում «Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի» (FIDH) նախագահ Սուեր Բելասենն ասաց, որ Հայաստան գալու իրենց նպատակն է, որ երկիրը իրական առաջընթաց ապրի: Նա մտահոգություն հայտնեց Հայաստանում գործող լրագրողների համար՝ նշելով, որ վտանգված է խոսքի ազատությունը՝ «այն լրագրողները, ովքեր փորձում են մարտի մեկի հետ կապված ճշմարտություններ վեր հանել, վտանգվում են»:

«Անշուշտ, դժվար է փոխել, մասնավորապես, դատական համակարգը: Մեր առաջին մտահոգությունը արդարադատության իրականացումն է և թե ինչպես այն կարող է անդրադառնալ քաղաքացիականների վիճակի վրա, - ասաց տիկին Բելասենը,-

Քաղաքանտարկյալներից կտտանքների միջոցով է կորզվում խոստովանությունը, շատ կարևոր է, թե փաստերն ինչպես են ձեռք բերվում»□

FIDH-ի գործադիր տնօրեն Անտուան Բեռնարդի խոսքով՝ ներպետական արդարադատության իրականացումը դարձել է միջազգային դիտարկման թեմա և միջազգային համամարդկության բարօրության խնդիր□

«Ներպետական արդարադատության զարգացման համար պետք են որակյալ դատավորներ և մեր բախտը բերել է, որ ներկա է լինելու նաև սահմանադրական դատարանի դատավոր Գագիկ Հարությունյանը»□

Քաղաքացիական հասարակության ինստիտուտ հկ-ի (ՔՀԻ) խորհրդի նախագահ Արտակ Կիրակոսյանն էլ հավելեց, որ Հայաստանում նման գիտաժողովի անցկացումը կարևոր է այնքանով, որ ամենանշանակալի մարդկանց շուրթերից պետք է հնչի մարդու իրավունքների խնդիրները□

«Մենք չենք կարող արդարադատության ոլորտում առաջընթաց ունենալ, քանի դեռ 10-ից ավել քաղաքանտարկյալներ չեն ազատվել ու մարտի մեկի 10 գոհերի մահվան պատասխանատուները չեն գտնվել,- ասաց Կիրակոսյանը,- Ներկայում մի բան կա միայն շատ ոգևորող, որ ունենք շատ լավ փաստաբաններ, որ կարողանում են խնդիրը լավ ձևակերպել ու պաշտպանել մարդկանց՝ ի հակառակ գոործող իրավապահ մյուս մարմինների»□

Սուեր Բելասենի խոսքով՝ իրենք չեն եկել Հայաստան՝ «միայն պաշտոնատար անձանց ձեռքը սեղմելու կամ ոմանց պարզներ տալու համար»□

«Երբ FIDH-ի մակարդակով որևէ աշխատանք ենք կատարում, համագործակցում ենք իշխանության հետ, ովքեր պատասխանատու են այս կամ այն կառույցի համար, առանց երկխոսության իշխանության հետ հնարավոր չէ աշխատել»,- ասաց նա՝ շնորհակալություն հայտնելով իշխանություններին, որ վերջինս ընձեռեց հնարավորություն՝ Հայաստանում գիտաժողովն անցկացնելու ու պաշտպանական ոլորտի ներկայացուցիչներին հյուրընկալելու համար, «ինչը ոչ բոլոր երկրներում է հնարավոր»□

2003թ աշխարհի նոբելյան մրցանակակիր Շիրին Էֆադինի համոզմունք հայտնեց, որ լրագրողները մարդու իրավունքների պաշտպանների լավագույն բարեկամներն են։Նրա խոսքով՝ Բաքվում իրավիճակը նման է Հյաստանին, իսկ իր հայրենիքում՝ Իրանում, բազմաթիվ լրագրողներ բանտերում են և նման միջոցառում այնտեղ չէր կարող կազմակերպվել□

Ասուլիսի ավարտին Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի նախագահը հիշեց երկու օր առաջ Հայաստանի առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հետ ունեցած հանդիպումը՝ նշելով, որ իր համար պատիվ ու հաճույք էր նրա հետ հաղնդիպելը□

«Հայաստանի առաջին նախագահն ասաց, որ հույսեր է կապում մեր այստեղ գտնվելու հետ։ Թե՛ նրա, թե՛ մեզ համար կարևոր է քաղաքանտարկյալների ազատ արձակումն ու ոճիրների անպատիժ չմանլը», ընդգծեց տիկին Բելասենը□

Նա ասում է, որ Հայաստանում ազգի մասշտաբով մեծ զորակցություն կա քաղաքականության արձակելու համար և իրենք պատրաստ են միասին հասնելու նրանց ազատ արձակմանը □

<http://www.hra.am/am/hr-reviews/2010/04/06/brifing>

Համաժողովն ինքնին ճնշում է

Ապրիլ 06, 2010

Hra.am



Հարցազրույց Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի նախագահ Սուրբ Բելասենի հետ համաժողովի մեկնարկից առաջ:

Երեկ դուք հանդիպեցիք մարտի 1-ի զոհվածների հարազատների և քաղաքականության արձակելու կանաչ հետ: Ի՞նչ հետք թողեց Ձեր վրա այդ հանդիպումները և ի՞նչ հեռանկարներ եք տեսնում այդ հարցի հետ կապված:

Ինձ համար չափազանց էմոցիոնալ, զգացմունքային էին երեկվա հանդիպումները, ու ես՝ ինքս ինձ համար հայտնաբերեցի շատ դրամատիկ պահեր: Երեկվա հանդիպումները դրամատիկ էին: Ես նորից վերապրեցի այն, որ զոհվածները 20-ից 30 տարեկան էին և այդ մարդիկ այս պահին էլ ցավի մեջ էին: Ես հասկանում եմ, որ միակ բանը, ինչը կհանգստացնի այդ մարդկանց, արդարությունն է, որն, ի վերջո, պիտի գտնվի և արդարադատությունն է, որին պետք է հասնենք: Ես ուզում եմ հավատացնել ու ասել, որ FIDH-ը է անելու հնարավորը մարտիմեկյան դեպքերը հանգամանքները բացահայտելու համար:

Ինչո՞ւ դուք նախաձեռնեցիք այդ հանդիպումները: Ի՞նչ եք անելու, ո՞րն է լինելու ձեր առաջին քայլը հանդիպումներից հետո:

Ինձ համար գործում է մի օրենք □ որ երկիրն էլ, որ ես գնամ, առաջին հերթին ուզում եմ տեսնել, բանտարկյալների, քաղաքականության արձակելու նրանց ընտանիքներին, և դա էր պատճառը, որ Հայաստանում հանդիպեցի նրանց: Մյուս պատճառը նման հանդիպումների համար այն է, որ իշխանություններն են մեզ թույլ տալիս հանդիպել նրանց կամ խոշտանգումների զոհ դարձածներին: Մեր ձայնն ավելի արագ է տեղ հասնում և մեզ հաջողվում է մարդկանց ազատել բանտերից: Իմ ժամանակը շատ չէ հանդիպելու բոլորի հետ և գաղափար էր հանդիպել նրանց ընտանիքների հետ, լսել

նրանց ևս մեկ անգամ հասկանալու, արձանագրելու, որ նրանք պետք է անհապաղ ազատ արձակվեն: Երբ ասում եմ մեր ձայնը լսելի դարձնել, նկատի ունեմ նաև առաջիկայում սպասվող կոնգրեսը, որն այսօր մեկնարկում է Երևանում, որտեղ 300-ից ավելի մասնակիցներ են սպասվում և այս հարցը պարտադիր հնչեցնելու ենք տարբեր երկրներից ժամանող իրավապաշտպանների համար՝ մեր ուղերձը տեղ հասցնելու: □

Ձեր վերջին հայտարարության մեջ դուք հորդորել էիք իշխանություններին և հույս էիք հայտնել, որ մինչ համաժողովի մեկնարկը Հայաստանը կտեսնեք առանց քաղաքատարկյալների, սակայն ինչպես տեսնում եք նրանց շարունակում են պահել բանտերում: Նախագահի հետ այսօր Ձեր հանդիպման ժամանակ կրկին անդրադառնալով, եք այդ խնդրին: □

Անկասկած: Ես անպայման պիտի խոսեմ նրա հետ այդ մասին՝ վերահաստատելով մեր պահանջը՝ ազատ արձակել քաղաքատարկյալներին, ինչպես նաև մարտի 1-ի տասը զոհերի մահվան հանգամանքների բացահայտման, արդարադատության և Հայաստանում խոսքի ազատության վիճակի մասին: □

Եվ մարտիմեկյան զոհերի և քաղաքատարկյալների հարազատները ակնկալիքներ ունեն մարդու իրավունքներին նվիրված այս համաժողովից: Ի՞նչ ակնկալիքներ ունեք դուք այս առումով, մասնավորապես նախագահի հետ հանդիպումից հետո: Մտավախություն չունե՞ք, թե համաժողովն այդ առումով անարդյունավետ կլինի: □

Ամեն դեպքում մենք չենք կարող կանխատեսել, թե ինչ տեղի կունենա և ինչ կանի նախագահը, բայց մենք չենք կարող չօգտագործել այս հնարավորությունը մեր գործն անելու համար: Համաժողովին մասնակցելու են բարձր հեղինակություն ունեցող անձինք և նրանց ձայնը, կարծում եմ, մեծ ռեզոնանս կառաջացնի: Համաժողովի ճնշումը շատ մեծ է լինելու, այս անգամ ես միայնակ չեմ: Համաժողովի մասնակից իրավապաշտպանների մեծ բազմությունն ինձ հետ է, և մեր ճնշումը, իրոք, ահռելի է լինելու: Սա այն է, ինչ մենք կարող ենք անել: □

Մինչ Ձեր ժամանումը տեղական իրավապաշտպան կազմակերպություններ, քաղաքացիներ ու հասարակական գործիչներ դիմում էին Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիային համաժողովի օրակարգում փոփոխություններ մտցնելու համար: Թեմային հետևողականորեն անդրադառնում էր նաև մամուլը: Ի վերջո ինչ որ փոփոխություններ արվեցի՞ն: □

Օրակարգի կառուցվածքը վաղուց էր հայտնի, և մենք օրակարգը կազմելիս խորհրդակցել ենք մեր հայաստանյան կազմակերպության՝ «Քաղաքացիական հասարակության ինստիտուտի» մեր գործընկերների հետ: Իհարկե, ինչ-որ փոփոխություններ եղան, որովհետև ցանկացած օրակարգ նախնական է և այն փոփոխության ենթարկվել է: Եվ քանի որ շատ հայտնի մարդիկ են հանդես գալու այս համաժողովին, դրանով է բացատրվում օրակարգում մինչ այժմ կատարված փոփոխությունները. ինչ-որ մարդիկ հրաժարվել կամ ընդգրկվել են օրակարգում: □

Նկատի ունեմ համաժողովի բացման արարողության ժամանակ տեղական իրավապաշտպանների ելույթները, ինչի շուրջ էլ, հիմնականում ըն դվզումներ էին առաջացել: Հայտնի է միայն քաղաքացիական հասարակության խորհրդի նախագահ Արտակ Կիրակոսյանին ընձեռած հնարավորության մասին: □

Մեզ համար շատ կարևոր է, որ առաջինը ելույթ ունենա Արտակ Կիրակոսյանը: Դա նշանակում է, որ ելույթի առաջին հնարավորությունը տրվում է հենց իրավապաշտպան կազմակերպությանը: Նա խոսելու է հենց իրավապաշտպանության անունից և դնելու է իր դրոշմը: Նորից ուզում եմ հաստատել ու հիշեցնել, որ համաժողովը բաց է բոլորի համար: Մարդիկ կարող են գրանցվել ու իրենց մասնակցությունը հաստատել, իսկ խոսքի և բանավեճերի հնարավորությունը ապահովում են հաջորդ օրերին նախատեսված ֆորումները □

Ինչպես եք վերաբերում հանգանանքին, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին չի գոհացրել համաժողովի մասնակցության ձևաչափը: Ավելին նա ասել է, որ համաժողովն արդեն իր բացասական հետևանքը թողել է. «ունենիք մի քանի հասարակական կազմակերպություններ, որոնք միասնական աշխատում էին, այդ միասնականությունն էլ արդեն խարխլեցին»:

Այս ընթացքում ես Մարդու իրավունքների պաշտպանին հանդիպել եմ մի քանի անգամ, նաև Փարիզում: Նրա միակ խնդրանքն այն էր, որ ելույթ ունենար ոչ թե պլենար նիստերում, այլ բացման արարողությանը: Դա նրա ուղղակի պահանջն էր. խոսք տալ բացման արարողության ժամանակ, սակայն համաժողովի ընթացակարգը շատ հստակ էր, և մենք նման հնարավորություն չունեինք □

Ըստ Ձեզ, ինչո՞ւ այսքան ընդվզումների ու տարբեր խոսակցությունների առիթ դարձավ մարդու իրավունքներին նվիրված այս համաժողովը: Հիմնական բողոքն այն էր, որ մեծ մասամբ իշխանության ներկայացուցիչներն են հանդես գալու ելույթներով:

Կարծում եմ՝ դա նորմալ է, քանի որ սա շատ մեծ իրադարձություն է: Տարօրինակ կլիներ, եթե անտարբերության մատնվեր: Սա դրական և ոչ թե բացասական ցուցանիշ է: Մեզ համար սկզբունքային հարց է իշխանությունների հետ աշխատելը, որովհետև հենց նրանք են, ում մոտ մենք պետք է բարձրացնենք հարցերը և նրանք են, որ պետք է լուծում տան այդ հարցերին: Այլ ընդդիմախոս մենք չունենք: Սակայն մենք ձայն ենք տալիս նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին, որոշ դեպքերում, նրանց թույլ ձայնը շատ բարձր է հնչելու այս համաժողովի շրջանակներում □

Մի կողմից համաժողովի հետ կապված բողոքներ էին հնչում, բայց մյուս կողմից մարդիկ ակնկալիքներ ու մեծ սպասումներ ունեն այս համաժողովից, մասնավորապես, նրանք, ովքեր արդեն հանդիպում են ունեցել Ձեզ հետ և համակրանքով են լցված Ձեր նկատմամբ: Կարծես նրանց հույսերը մեծացան ակնկալիքների առումով □

Հույս միշտ էլ կա: Եթե այդ հույսը չլիներ, մենք այստեղ ի՞նչ ունենք անելու: Ես ուզում եմ, որ մենք իրատես լինենք: Այն, որ այսպիսի համաժողովը տեղի է ունենում Երևանում, սա արդեն ինքնին ճնշում է իրենից ներկայացնում: Ես հույս ունեմ, որ հուսախաբ չենք լինի և այդ ճնշումը իր արդյունքը կտա:

Հարցազրույցը՝ Ժաննա Ալեքսանյանի

<http://www.hra.am/am/interview/2010/04/06/forum>

Ազատություն քաղաքանտարկյալներին

Ապրիլ 06, 2010
Hra.am



Այսօր Արամ Խաչատրյան մեծ համերգասրահում մեկնարկեց Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH-ի) 37-րդ համագումարը՝ «Արդարադատություն. Նոր մարտահրավերներ, անկախ դատարանի առջև արդյունավետ պաշտպանության իրավունք» թեմայով

FIDH ֆորումը նվիրված է 2009թ. հուլիսի 15-ին Չեչնիայում սպանված իրավապաշտպան Նատալյա Էստեմիրովայի հիշատակին

Իր բացման խոսքում Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի նախագահ Սուեր Բելասենը կրկնեց FIDH-ի համաժողովի համար կարևորագույն 2 պահանջները՝ ուղղված իշխանություններին՝ մարտի մեկի գործով անաչառ հետաքննության անցկացում, քաղբանտարկյալների ազատ արձակում

Տիկին Բելասենն ասաց, որ պատահական չէ, որ՝ իրենք ֆորումն անցկացնում են Մեծ եղեռնի 95-րդ տարելիցի և հայ-թուրքական հարաբերությունների վերսկսման նախաշեմին։ Նրա խոսքով՝ անկախ դատական համակարգի ստեղծումը ժամանակ է պահանջում, իսկ ֆորումը նվիրված է Էստեմիրովայի հիշատակին՝ հույս ունենալով, որ նման դեպքեր այլևս չեն կրկնվելու

«Մենք արտահայտել ենք այս մտահոգությունները շարունակաբար վերջին ամիսների ընթացքում Հայաստանի իշխանությունների առջև ամենաբարձր ատյաններում և այսօր կեսօրին մեկ անգամ ևս ասել ենք այս մասին ՀՀ նախագահին, ինչպես խոստացել էինք զոհերի և քաղբանտարկյալների ընտանիքներին, որոնց հանդիպել էինք երեկ։ Մենք շարունակելու ենք մեր հարցադրումները մինչև որ պատասխան ստանանք», - ասաց Սուեր Բելասենը

Ընդարձակման և Եվրոպական հարևանության քաղաքական հարցերով եվրոպական հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն, ով առաջին անգամ է այցելում Հայաստան, ասաց, որ Մարդու իրավունքներին առնչվող Եվրամիության սկզբունքները միջազգային հարթության վրա են և իրենք նոր մակարդակի կհասցնեն իրենց հարաբերություններն այն երկրների հետ, որոնք կհարգեն մարդու իրավունքներն և հիմնարար ազատությունները

Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանի ելույթի ժամանակ մասնակիցների համար անսպասելի մի բան տեղի ունեցավ։ Նախկին քաղբանտարկյալ

Վարդգես Գասպարին սկսեց բացականչել «shame on you՝ ամոթ ձեզ», ապա կարճ ժամանակով լքեց դահլիճը՝ մինչև Սդ նախագահը կավարտեր կոչը: Դահլիճում ներկա երկու այլ քաղաքացիներ բարձրացրել էին մի ցուցապաստառ, որի վրա անգլերեն տառերով գրված էր ազատություն 14 քաղբանտարկյալներին»□

Իր ելույթը բոյկոտող արտահայտությունները Գազիկ Հարությունյանն ընդունեց «որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտի դրսևորում»□

«Ուշադրության է արժանի սահմանադրական մեր նորմին համարժեք մարդու իրավունքների պաշտպանության մասին եվրոպական կոնցվենցիայի 6-րդ հոդվածի առաջին մասի կիրառական պրակտիկան՝ մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից,- ասաց Գազիկ Հարությունյանը,- 2010թ, փետրվարի 1-ի դրությամբ այդ կետով կայացրած վճիռները կազմում են մեր դատարանի ընդհանուր վճիռների մոտ կեսը՝ 12 հազար 359-ից 670-ը»□

ՄԴ նախագահն իր ելույթում նշեց, որ դատական պաշտպանության իրավունքի պատշաճ կիրառման համար հարկավոր է առնվազն 3 նախապայման՝ օրենսդրական համարժեք համակարգ, կառուցակարգային ճիշտ լուծումներ, անհրաժեշտ իրավագիտակցություն □

«Ցավոք Հայաստանում այս երեք ոլորտները թերի են և դրանց հաղթահարումը պետք է դառնա բարեփոխումների առանցքը», - հավելեց նա □

Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության գլխավոր քարտուղար Աբդու Դիուֆն էլ անդրադարձավ դեռևս 10 օր առաջ քաղբանտարկյալների մասին FIDH-ի արած հայտարարությանը՝ հույս հայտնելով, որ խոսքերը կվերածվեն գործողության:

«Պետք է հատուկ ուշադրություն դարձնել արդարադատության հարցերին, անպատժելիության պայքարը կարևորագույն խղիրներից է խաղաղության ամրապնդման համար,- ասաց նա,- Մենք գիտենք, որ ժամանակ առ ժամանակ դժվար է օգնել տուժածներին, բայց պետք է հասնել հաշտեցման ու արդարադատություն իրականացնել»□

Ֆորումին մասնակից կոնգրեսականները կայցելեն նաև Եդեռնի զոհերի թանգարան, իսկ ֆորումը կշարունակվի մինչև ապրիլի 8-ը □

<http://www.hra.am/am/hr-reviews/2010/04/06/prisoner>